- Անկախ նրանից, թե արդարադատության ռեֆորմն ինչ երկարաժամկետ լուծումներ է առաջարկում դատավորների բարեվարքության բարձրացման ուղղությամբ, միևնույն է համընդհանուր վերթինգը մեկանգամյա կիրառման միջամտության գործիք է, որն անհրաժեշտ է զտելու համար առավել անբարեփոխ դատավորներին, որոնց հնարավոր չէ անձնավորել այլ պայմաններում՝ հաշվի առնելով որտեղ դատական իշխանության բռնազավթված լինելը պետության անունից հանդես եկող առանձին մարդկանց և նրանց խմբերի կողմից: Այլ կերպ ասած՝ սա *ad hoc* գործընթաց է, որն արդարացվել և համարժեք է գնահատվել ՄԱԿ-ի, ԵՄ, ԵԽ կողմից այն պետություններում, որտեղ դատական իշխանությունը երկար ժամանակ զավթված է եղել գործադիր կողմից (տես՝ օրինակները ստորև),

- Անաչառ վերթինգը պետք է իրականացնի անկախ, տարբեր շերտերից ներկայացվածություն ունեցող մարմին(ներ)ը հստակ չափանիշների հիման վրա, որոնք ներառում են ոչ միայն գույքային դրությունն ու մասնագիտական կարողությունների գնահատումը, այլև հնարավոր ներգրավվածությունը հանցավոր խմբերում, ճնշման ներքո որոշումներ կայացնելուն և այլն: Այնուամենայնիվ, վերթինգի գործընթացը կարող է կուսակցական կամ քաղաքական չարաշահումների առիթ դառնալ, եթե դատավորների պաշտոնից հեռացումը պայմանավորվի խմբային կամ քաղաքական պատկանելությամբ՝ վերածելով վերթինգը քաղաքական

⁵ «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը դատաիրավական համակարգի վերաբերյալ» (<http://www.prememinister.am/hy/statements-and-messages/item/2019/05/20-Nikol-Pashinyan-Speech/>): ՀՀ վարչապետի ելույթները և ուղերձները: Primeminister: 20.05.2019: Վերցված է 21 մայիս 2019:

զտման գործընթացի: Նման ընթացակարգերը մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ամրապնդման փոխարեն հանգեցնում են բարեփոխումների նպատակի տապալման: Բոլոր սկզբունքների (խիստ չափանիշներ, անաչառ ստուգում, ընթացակարգային կանոններ, արդյունավետ բողոքարկում) խիստ պահպանման պարագայում իրատեսական չէ, որ վեթինգի արդյունքում համակարգից հեռացվեն բարեխիղճ և արդյունավետ աշխատող դատավորները, ինչը հաճախ նշվում է որպես հակափաստարկ ընդհանուր վեթինգին:

- Պետությունը պետք է ապահովի նախնական վեթինգի արդյունքների բողոքարկման անկախ, անաչառ ատյան, որին կկարողանան դիմել վեթինգի արդյունքում համակարգից հեռացված դատավորները,

- Համընդհանուր, *ad hoc* և առանց ժամկետային սահմանափակումների վեթինգ իրականացնելու համար բազմաթիվ երկրներ ընդունել են սահմանադրական փոփոխություններ, որոնց անցումային դրույթներով սահմանվել են դրա նպատակը, գործիքը, ժամկետները: Այդ դրույթներից բխում է սահմանադրական կամ այլ օրենքների ընդունում խորհրդարանի կողմից, որի հիման վրա իրականացվում է վեթինգը:

- Այն պնդումը, որ համընդհանուր վեթինգը կարող է բերել դատական իշխանության կոլապսի, խիստ չափազանցված է և հիմնվում է այլ պետությունների բացասական փորձի վրա: Կարելի է պնդել, որ ժամանակի և գործողությունների առումով խելացի պլանավորված և փուլային իրականացվող վեթինգը լավագույն լուծումն է, որին զուգահեռ դատավորների թափուր տեղերը պետք է զբաղեցնեն նոր վերապատրաստված դատավորների թեկնածուները: Վերջիններիս կրթումը, պատրաստումը և համակարգ գործուղումը պետք է կատարվի ռեֆորմի առաջին փուլից:

- Միջազգային փորձը հուշում է նաև, որ համընդհանուր վեթինգ իրականացնելու հարցում իշխանության հապաղումն էապես նվազեցնում է դրա արդյունավետությունը, որովհետև ժամանակի ընթացքում թուլանում է վեթինգ իրականացնելու քաղաքական կամքը, «վատ» դատավորները հարմարվում են նոր միջավայրում աշխատելուն, սակայն նրանց բարեվարքությունը խիստ կասկածելի է հատկապես կարևոր կոռուպցիոն և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ գործեր քննելիս, նվազում է հանրության աջակցությունը դատավորների վեթինգին, և որպես հետևանք հանգեցնում է հանրության մոտ դատաիրավական բարեփոխումներից ընդհանուր հիասթափության:

Համընդհանուր վեթինգի չափանիշները, իրականացման փուլերն ու իրականացնող մարմնի կազմն ու լիազորությունները պետք է նախատեսվեն սահմանադրական փոփոխություններով: Մասնավորապես, Սահմանադրության անցումային դրույթները կարող են սահմանել, որ սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում անցումային դրույթներին համահունչ պետք է ընդունվի Վեթինգի մասին օրենքը:

Օրենքով պետք է սահմանվի վեթինգի ընտրված մոդելը և իրականացման կարգը, չափանիշները, փուլերը, իրականացնող մարմնի կազմը, անդամների ընտրության կարգը, պաշտոնավարման ժամկետը, սոցիալական երաշխիքներն ու գործունեության պաշտպանությունը հնարավոր միջամտությունից, ինչպես նաև որոշումների կայացման կարգը, բողոքարկման մեխանիզմները և հիմքերը, և այլն: Կորպորատիվ շահերի բխումը կանխելու նպատակով առավել արդյունավետ կլինի տվյալ մարմնում ներառել դատավորների, անկախ իրավաբանների, ոչ իրավաբանների, որոնք պետք է ընտրվեն Ազգային ժողովի կողմից նախնական բարեվարքության գնահատում անցնելուց հետո: Նույն սկզբունքներով պետք է ձևավորել ավելի փոքր կազմով անկախ Բողոքարկման մարմին: Պետք է ձևավորվի վեթինգ իրականացնող մարմնի աշխատակազմը, տվյալների հավաքագրման և վերլուծության բաժինները: Սկզբուն-

քային նշանակություն ունի, որ համընդհանուր վեթօինգը բաժանվի հստակ փուլերի, որոնցից յուրաքանչյուրը կստուգի սկզբում Սահմանադրական, հետո՝ Վճռաբեկ, այնուհետ՝ Բարձրագույն դատական խորհրդի, Վերաքննիչ դատարանների և վերջապես առաջին ատյանի դատավորներին:

Վեթօինգի չափանիշները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքում: Տվյալ դեպքում, քանի որ քննարկվում է *ad hoc* վեթօինգի տարբերակը, պետք է չափանիշների մեջ դիտարկել ոչ միայն գույքային դրությունն ու մասնագիտական հմտությունները, այլև կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ հիմնավոր փաստարկները՝ անկախ այդ կապակցությամբ քրեական գործի հարուցված լինելուց կամ չլինելուց, կայացրած վճիռների ազդեցությունը մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների վրա, դատավորի մասնակցությամբ կայացված վճիռներով և որոշումներով ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ՄԻԵԴ-ի վճիռներով գնահատվել են որպես մարդու իրավունքների խախտումներ, և այլն: Նաև հստակ չափանիշներ պետք է սահմանել Վեթօինգի մարմնի որոշումների բողոքարկման համար՝ հիմքերը, ժամկետները, ընթացակարգը և այլն: Անկախ նրանից, թե ինչ չափորոշիչներ կընտրվեն ստուգման համար, դրանք պետք է արտահայտեն հասարակության՝ անկախ դատարաններ ստեղծելու ակնկալիքները, ինչպես նաև հնարավորինս պարզ և օբյեկտիվ իրազեկեն և ներգրավեն հասարակությանը: Սրա նպատակն է կառուցել հանրային աջակցություն տվյալ գործընթացի նկատմամբ և այն դարձնել հանրության համար լեգիտիմ: Օրինակ՝ քանի որ Արգենտինայում դատավորների վեթօինգն իրականացվեց փակ դռների ետևում, առանց հանրության իմացության, այն խորն անվստահություն ստեղծեց հանրության մեջ՝ ընկալվելով որպես նոր իշխանությունների կողմից իրենց հնազանդ դատական իշխանություն կառուցելու փորձ: Այսինքն, ի սկզբանե դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու համար կոչված դատավորների վեթօինգի գործընթացը չձառայեց իր նպատակին:

Օրենքով պետք է սահմանվի նաև Վեթօինգի մարմնի աշխատանքային գործունեության մեխանիզմները, այսինքն՝ արդյոք ստուգումը կատարվելու է դատավորների կողմից լրացված հայտարարագրերի, բանավոր հարցազրույցների, այլ մարմիններից ստացված տեղեկությունների, քաղաքացիներից ստացված բողոքների հիման վրա: Տարբեր պետություններում կիրառվել են տարբեր գործիքներ՝ կախված նրանից, թե ինչպիսի չափանիշներ են ընտրվել և հանրային մասնակցության ինչպիսի մակարդակ է անհրաժեշտ եղել ապահովել:

Համակարգում լայնածավալ վեթօինգ իրականացնելուց առաջ փորձագետները մշտապես առաջարկում են **պիլոտային տարբերակով** փորձարկել մշակված գործիքը, օրինակ՝ առաջնահերթ կիրառել ԲԴԽ դատավոր անդամների նկատմամբ: Գործընթացը պետք է ապահովի արդար քննության երաշխիքները, իսկ հանձնաժողովի բոլոր որոշումները պետք է լինեն պատճառաբանված, հիմնավորված և ենթակա լինեն բողոքարկման: Պիլոտային տարբերակի գործարկման հիման վրա դուրս կբերվեն որոշակի խնդիրներ, որոնք պետք է շտկվեն նախքան համընդհանուր կիրառումը:

Վեթօինգի գործիքի մշակմանը զուգահեռ անհետաձգելի քայլեր պետք է ձեռնարկվեն դատավորների թեկնածուների վերապատրաստման և ցուցակի կազմման ուղղությամբ: Այս ցուցակում ընդգրկված թեկնածուները պետք է նշանակվեն այն հաստիքներում, որոնք կառաջանան վեթօինգի, կամավոր պաշտոնից ազատման (Ալբանիայում հարյուրավոր դատավորներ հեռացան համակարգից նախքան վեթօինգը), գործող դատարաններում հաստիքների ավելացման արդյունքում: Դատավորների թեկնածուների վերապատրաստումը պետք է իրականացվի որակապես նոր ուսումնական ծրագրով, որը կարտացոլի այն առաջնահերթ

խնդիրները, որոնց հետ առնչվելու են դատարանները, օրինակ՝ կոռուպցիոն հանցագործությունների քննություն, ակտիվների վերադարձ, մարդու իրավունքների զանգվածային խախտումներ և այլն: Տվյալ ուղղությունները պետք է բխեն նախապես քարտեզագրված համակարգային խնդիրների լուծման անհրաժեշտությունից: Սա ենթադրում է Արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրի վերանայում, որոշակի ուղղությունների շեշտադրում, Արդարադատության ակադեմիայի դասընթացավարների վերապատրաստում (training of trainers): Անհրաժեշտ է նաև փոխել Արդարադատության ակադեմիայի ապագա ունկնդիրների պահանջվող քանակը որոշելու մեթոդը, այսինքն՝ ելնել ոչ թե ենթադրվող թափուր տեղերի քանակով, այլ պլանավորել ռեգերվայի մեթոդով, այն է՝ ստեղծել և աստիճանաբար համալրել թեկնածուների ցուցակը: Զուգահեռաբար պետք է բարձրացվեն դատավորների սոցիալական ապահովության երաշխիքները:

Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի վերամշակման շրջանակում նաև անհրաժեշտ է ապահովել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման վերանայման և գնահատման համար հստակ և չափելի չափորոշիչների սահմանումը, գնահատող հանձնաժողովի կազմի, անդամների ընտրության մեխանիզմի բարելավումը՝ կամայականությունները բացառելու նպատակով: Թեկնածուների ցուցակները կազմելիս պետք է ապահովել դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի առավելագույն թափանցիկությունը և հաշվետվողականությունը, գործընթացում հանրության հնարավոր ներգրավումը:

Վերթինգի գործիքի հետ համակցությամբ, ինչպես նաև առանձին գործընթացով հնարավոր է կազմակերպել դատարանների կազմի նորացում՝ եղած հաստիքները նոր դատավորներով համալրելու, ինչպես նաև նոր հաստիքներ ստեղծելու միջոցով: Այս գործողությունների նպատակն է անկախ, բարձր բարեվարքությամբ, երբևէ դատական համակարգում չաշխատած թեկնածուների միջոցով նոր որակ բերել դատական համակարգը և հակակշռել գործող այն դատավորներին, որոնք որոշակի կերպով ներքաշված են եղել համակարգային կոռուպցիայի և այլ հանցավոր սխեմաների մեջ:

Հատկանշական է նշել, որ վերջին տարիներին Հայաստանում մեծացել է հետաքրքրությունն անցումային արդարադատության (ԱԱ) մեխանիզմների նկատմամբ՝ հատկապես 2018 թ. «թավշյա հեղափոխությունից» հետո, երբ հասարակական քննարկումները մարդու իրավունքների, իրավական պետության ամրապնդման և անցյալում տեղի ունեցած խախտումների գնահատման շուրջ դարձան առավել ինտենսիվ: ԱԱ մեխանիզմները Հայաստանում պետք է դիտարկվեն ոչ միայն դատաիրավական, այլ համակարգային և հանրային վստահությունը վերականգնելու միջոցառումների համատեքստում:

Առանձնացվում է չորս հիմնական ԱԱ իրականացման գործիքակազմ.

1. Քրեական արդարադատություն – պատասխանատվության իրականացման գործիքների՝ ի լրումն դատական ընթացակարգերի:

2. Ճշմարտության որոնման հանձնաժողովներ – անցյալում տեղի ունեցած խախտումների բացահայտման և փաստերի հաստատման մեխանիզմներ:

3. Փոխհատուցման ծրագրեր – նյութական և ոչ նյութական վնասների վերականգնում, որը նպաստում է հասարակության վերականգնողական արդարադատության պահանջներին:

4. Համակարգային բարեփոխումներ (լրստրագիա և վերթինգ) – պետական ինստիտուտներում վստահության ամրապնդում, բարեվարքության վերահսկում և անձնակազմի գնահատման մեխանիզմների ներդրում:

Հայտնաբերված մոտեցումները համահունչ են ՄԱԿ-ի 2004 թ. գլխավոր քարտուղարի զեկույցում նշված չափանիշներին՝ ըստ որոնց ԱԱ-ի հաջողության հիմքը կազմում է ճշմարտության բացահայտում + պատասխանատվություն + հատուցում + բարեփոխումներ:

Հայ գիտական շրջանակում ձևավորվել է ընդհանուր դիրքորոշում, որ ԱԱ իրականացումը պետք է ունենա երեք համադրելի բաղադրիչ.

1. Նորմատիվային – օրենսդրական և իրավական հիմքերի ստեղծում:

2. Ինստիտուցիոնալ – դատարանների, հանձնաժողովների և պետական կառույցների արդյունավետ մասնակցություն:

3. Բարոյահոգեբանական – հասարակության ներգրավվածություն, ներողամտության և համերաշխության ամրապնդում:⁶

ԱԱ մեխանիզմների ներդրումը Հայաստանում հնարավոր է միայն, եթե համատեղվեն քաղաքական կամքը, իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը, ինչպես նաև գիտական մոտեցումները ռազմավարական փաստաթղթերի հետ: Այն հանդիսանում է ոչ միայն իրավական, այլև սոցիալ-քաղաքական վերափոխման գործընթաց, որը պետք է դառնա բարեփոխումների օրակարգի անբաժանելի մաս

Եզրակացություն

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ կարելի է արձանագրել, որ վեթեփնգը, որպես անցումային արդարադատության կարևորագույն գործիք, անհրաժեշտ և արդարացված միջոց է դատական իշխանության բարեփոխման գործընթացում: Հայաստանի Հանրապետությունում վեթեփնգի ներդրումը պետք է իրականացվի խստորեն սահմանված իրավական և կազմակերպչական հիմքերի վրա՝ ապահովելով դրա արդարությունը, թափանցիկությունը և հանրային վստահությունը:

Վեթեփնգի իրականացման արդյունավետությունն առավելապես կախված է նրանից, թե որքանով է այն միտված համակարգային փոփոխությունների խորացմանը՝ զուգակցվելով դատական համակարգի վերակազմակերպման, նոր կադրերի պատրաստման և նրանց սոցիալական երաշխիքների ամրապնդման հետ: Միայն այս պայմաններում հնարավոր կլինի հասնել այն նպատակին, որ վեթեփնգը դառնա ոչ թե քաղաքական զտման միջոց, այլ իրական լծակ՝ վերականգնելու դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահությունը և ամրապնդելու օրենքի գերակայությունը:

Հետևաբար, անհրաժեշտ է շարունակական և համապարփակ մոտեցում՝ հիմնված միջազգային լավագույն փորձի և ազգային առանձնահատկությունների համադրման վրա, ինչը կապահովի դատական համակարգի առողջացումը և կնպաստի իրավական պետության կայացմանը:

Ամփոփագիր: Սույն հոդվածում ուսումնասիրվում է վեթեփնգի (զտման) մեխանիզմը՝ որպես անցումային արդարադատության արդյունավետ գործիքակազմ՝ հատկապես հետհեղափոխական Հայաստանի Հանրապետության պայմաններում: Հեղինակը բացահայտում է վեթեփնգի նշանակությունը դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության վերականգնման, դատավորների բարեվարքության և անկախության բարձրացման համատեքստում: Հոդվածում հանգամանորեն քննարկվում են վեթեփնգի իրականացումը միջազգային փորձի օրինակներով, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դրա իրա-

⁶ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ, Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո, Երևան, 2019:

վական հիմքերին, սահմանադրական ամրագրումների անհրաժեշտությանը, ինչպես նաև վերթինգ իրականացնող մարմնի կազմի, գործառույթների և վերահսկողական մեխանիզմների ձևավորման հիմնախնդիրներին: Վերլուծվում են հնարավոր ռիսկերն ու շահարկումները, որոնք կարող են վերթինգը վերածել քաղաքական հաշվեհարդարի գործիքի՝ հակասելով դրա սկզբնական նպատակներին: Հեղինակը առաջարկում է փուլային և համապարփակ մոտեցում՝ վերթինգի գործընթացը համադրելով դատական համակարգի վերականգնվողման, նոր դատավորների պատրաստման և հասարակության լայն ներգրավվածության հետ: Վերթինգի արդյունավետ իրականացումը դիտվում է որպես կարևոր նախադրյալ՝ Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքի կայացման համար:

Annotation. This article examines the mechanism of vetting as an effective instrument of transitional justice, especially in the post-revolutionary Republic of Armenia. The author reveals the significance of vetting in the context of restoring public confidence in the judicial system, increasing the integrity and independence of judges. The article examines in detail the implementation of vetting using examples from international experience, paying special attention to its legal basis, the need for constitutional provisions, as well as the composition, functions and formation of control mechanisms of the body implementing vetting. The article analyzes potential risks and speculations that could transform vetting into a tool for political retribution, a departure from its original objectives. The author proposes a phased and comprehensive approach that combines the vetting process with the reorganization of the judicial system, the training of new judges and broad public involvement. Effective implementation of vetting is considered an important prerequisite for the establishment of a legal state and the rule of law in the Republic of Armenia.

Аннотация. В данной статье рассматривается механизм веттинга как эффективный инструмент переходного правосудия, особенно в постреволюционной Республике Армения. Автор раскрывает значение веттинга в контексте восстановления общественного доверия к судебной системе, повышения добросовестности и независимости судей. В статье подробно рассматривается реализация веттинга на примерах из международного опыта, особое внимание уделяется его правовым основам, необходимости конституционных положений, а также вопросам состава, функций и формирования контрольных механизмов органа, осуществляющего веттинг. Анализируются возможные риски и спекуляции, которые могут превратить веттинг в инструмент политического возмездия, противоречащий его первоначальным целям. Автор предлагает поэтапный и комплексный подход, сочетающий процесс веттинга с реорганизацией судебной системы, подготовкой новых судей и широким вовлечением общества. Эффективная реализация веттинга считается важной предпосылкой для становления правового государства и принципа верховенства права в Республике Армения.

Բանալի բառեր - վերթինգ, զտում, մարդու իրավունքներ և ազատություններ, անցումային արդարադատություն, հանցավոր ճանապարհ, գույքի բռնագրավում, պետական և քաղաքական գործիք:

Keywords: vetting, filtration, human rights and freedoms, transitional justice, criminal path, confiscation of property, public and political figure.

Ключевые слова: веттинг, фильтрация, права и свободы человека, переходное правосудие, преступный путь, конфискация имущества, государственный и политический деятель.

Օգտագործված գրականության ցանկ

1. «Vetting» : Online Etymology Dictionary: Merriam-Webster
2. Lapidos Juliet «Vetting Vet The origins of vet, verb tr»([http:// www.slate. com/id/ 2199254/](http://www.slate.com/id/2199254/)):«Richardson Defense Raises Questions» ([http:// www.politico.com/ news/stories/0307/3054.html](http://www.politico.com/news/stories/0307/3054.html))

1. International Center for Transitional Justice (ICTJ); Pablo de Greif and Alexander Mayer Rieckh (2007): "Justice as Prevention: Vetting Public Employees in Transitional Societies"
2. «The International Center for Transitional Justice (ICTJ) on Vetting» (<http://www.ictj.org/our-work/research/vetting>)
3. UN Office of the High Commissioner for Human Rights (OHCHR). Rule-of-Law Tools for Post-Conflict States: Vetting. United Nations, New York and Geneva, 2006:
4. Horne, C. M. Building Trust and Democracy: Transitional Justice in Post-Communist Countries. Oxford University Press, 2017:
5. Duthie, R. Transitional Justice and Displacement. Social Science Research Council, 2012:
6. Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ, Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո, Երևան, 2019:

Բայանդուրյան Ա. - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, էլիասցե՝ ararat.bayanduryan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 18.07.2025 թ., տրվել է գրախոսության 18.07.2025 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-24>

ИННА НЕРСЕСЯН

*Аспирант Российско-Армянского (Славянского) университета
по специальности 12.00.02 «Конституционное право;
конституционный судебный процесс; муниципальное право»,
Юрист Центра правовой информации «ИРТЕК»*

ԻՆՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ

*Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ
12.00.02 մասնագիտությամբ՝ «Սահմանադրական իրավունք,
Սահմանադրական դատավարություն, մունիցիպալ իրավունք»,
«ԻՐՏԵԿ» իրավական տեղեկատվական կենտրոնի իրավաբան*

INNA NERSEYAN

*Postgraduate student of the Russian-Armenian (Slavonic) University
specializing in 12.00.02 "Constitutional Law;
Constitutional Judicial Process; Municipal Law,"
Lawyer at the Legal Information Center "IRTEK"*

РОЛЬ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕАЛИЗАЦИИ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА СВОБОДУ МИРНЫХ СОБРАНИЙ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

THE ROLE OF LOCAL SELF-GOVERNMENT BODIES IN THE IMPLEMENTATION OF THE CONSTITUTIONAL RIGHT TO FREEDOM OF PEACEFUL ASSEMBLY

Введение

Свобода мирных собраний является одним из фундаментальных прав человека, закреплённым в ряде международно-правовых актов, в частности, в статье 21 Международного пакта о гражданских и политических правах (1966 г.) и статье 11 Европейской конвенции о защите прав человека и основных свобод (1950 г.). Это право признается и защищается конституциями большинства государств, включая Республику Армения, где оно гарантировано статьёй 44 действующей Конституции Армении (с изменениями от 2015 г.). Как на междуна-

родном, так и на национальном уровне реализация свободы собраний может быть ограничена, но исключительно на законных основаниях — в целях защиты государственной и общественной безопасности, общественного порядка, здоровья или нравственности населения, а также прав и свобод других лиц. Законодательство Армении, в том числе Закон «О свободе собраний», содержит положения, направленные на регулирование порядка проведения собраний и устанавливающие основания для их ограничения. Однако на практике возникает необходимость оценки правоприменительной деятельности, особенно на уровне органов местного самоуправления, которые играют ключевую роль в согласовании и обеспечении проведения публичных мероприятий.

Основное исследование

Органы местного самоуправления и право на мирные собрания.

Органы местного самоуправления Республики Армения обладают определёнными полномочиями в сфере реализации и обеспечения свободы мирных собраний, что вытекает из положений как Конституции Армении, так и отраслевого законодательства. Согласно статье 182 Конституции Республики Армения, органы местного самоуправления самостоятельно осуществляют управление в пределах своих административных территорий, что включает взаимодействие с гражданами по вопросам публичных мероприятий¹.

Закон Республики Армения «О свободе собраний» от 26 апреля 2011 г. прямо не наделяет органы местного самоуправления полномочиями по разрешению или запрещению собраний, однако возлагает на них функции по организационно-техническому обеспечению и информированию.

В частности, в компетенцию органов местного самоуправления входит:

1. приём уведомлений о проведении собраний (в случае, если они адресованы администрации соответствующего населённого пункта),
2. содействие в обеспечении условий для реализации права на собрание (включая вопросы общественной безопасности, санитарных условий, движения транспорта и др.),
3. координация с полицией и другими государственными структурами при проведении массовых мероприятий,
4. предоставление необходимой информации организаторам о возможных ограничениях, связанных с местом, временем или иными факторами.

На практике органы местного самоуправления часто оказываются вовлечены в процесс согласования, несмотря на то, что законодательство Армении использует уведомительный, а не разрешительный порядок проведения собраний. Это приводит к различным коллизиям и правовым неопределённостям, особенно в условиях, когда местные власти, ссылаясь на интересы общественного порядка или «благоустройства», отказываются содействовать проведению собраний.

Наше исследование правоприменительной практики показало, что в Армении были реальные случаи, когда местные органы власти, несмотря на уведомительный порядок проведения

¹ Конституция Республики Армения (с изменениями, внесёнными на референдуме 6 декабря 2015 г.) // Официальный вестник РА. — 2015. — № 39. / <https://www.president.am/ru/constitution-2015/>.

митингов и собраний, пытались вмешиваться в организацию публичных мероприятий, ссылаясь на «общественный порядок» и «благоустройство».

Пример из практики:

- Митинг в июне 2015 г. (Протесты против повышения тарифов на электроэнергию):

В июне 2015 г. в Ереване начались массовые протесты против повышения тарифов на электроэнергию. Организаторы митинга подали уведомление местным властям, однако администрация города, ссылаясь на требования обеспечения безопасности, предложила провести митинг в других местах, которые, по мнению протестующих, были неудобны для демонстрации, поскольку они не позволяли собрать достаточное количество участников и не имели необходимой видимости для привлечения внимания.

- Демонстрации 2016 г.:

В 2016 году также имели место случаи, когда протестующие пытались организовать митинги и демонстрации, подавая уведомления в соответствии с законодательством, но сталкивались с отказами местных властей или с попытками переноса мероприятий на другие территории. Местные власти часто ссылались на необходимость «сохранения порядка» или опасения, что митинг может вызвать беспорядки, что нарушит общий порядок в городе.

Реакция властей и правовая неопределенность:

В некоторых случаях протестующие поднимали вопрос о нарушении их прав, что приводило к обращению в суд. Судебная практика в Армении также сталкивалась с проблемой правового вакуума и неопределенности в отношении того, что считается «разумными» ограничениями для публичных мероприятий и в какой мере местные власти могут вмешиваться в организацию митингов, если они следуют **уведомительному порядку**. Протестующие и правозащитники утверждали, что местные власти использовали **ограничительные меры** под предлогом общественного порядка, чтобы ограничить свободу собраний и протестов, что стало причиной многочисленных юридических конфликтов. Про эти события HumanRightsWatch опубликовал несколько статей².

Таким образом, реальный опыт показывает, что на практике местные органы власти в Армении нередко сталкивались с правовой неопределенностью в вопросах согласования публичных мероприятий, несмотря на уведомительный порядок, что иногда приводило к конфликтам и юридическим спорам.

Таким образом, компетенция органов местного самоуправления в Армении в контексте регулирования свободы собраний требует дополнительного **нормативного уточнения и институционального укрепления** с целью обеспечения баланса между правами граждан и функциями публичной администрации.

Анализ действующего законодательства Республики Армения, в частности Закона «О свободе собраний» (2011 г.), выявляет ряд пробелов в регулировании роли органов местного самоуправления в обеспечении данного права. В настоящее время нормативные акты не содержат четких положений, регламентирующих обязанности, полномочия и ответственность муниципальных органов в части организации и сопровождения мирных собраний. Такая не-

² https://www.hrw.org/news/2017/07/30/armenia-limited-justice-police-violence?utm_source=chatgpt.com
https://www.hrw.org/news/2016/08/05/armenia-arbitrary-detentions-brutal-beatings?utm_source=chatgpt.com

определённость создаёт правовые коллизии и затрудняет реализацию свободы собраний на муниципальном уровне.

Для повышения эффективности правоприменительной практики и защиты конституционных прав граждан целесообразно внести следующие изменения в законодательство:

1. Прямое закрепление обязанностей и полномочий органов местного самоуправления в Законе «О свободе собраний». Необходимо дополнить закон специальным разделом, который бы конкретизировал функции органов местного самоуправления, включая приём уведомлений о проведении собраний, координацию с правоохранительными органами, обеспечение условий для проведения мероприятий, а также обязанности по информированию организаторов о возможных ограничениях. Такой шаг повысит юридическую определённость и позволит исключить произвольные решения со стороны муниципальных органов.

2. Установление чётких сроков реагирования на уведомления о собраниях. Отсутствие регламентированных сроков обработки уведомлений приводит к затягиванию процедур и фактическим ограничениям свободы собраний. Закон должен предусмотреть обязательное подтверждение получения уведомления в течение 24-48 часов и обязательное информирование о возможных препятствиях или о необходимости изменить место или время собрания с указанием мотивированного обоснования.

3. Введение обязанности публичного и мотивированного обоснования любых ограничений. Любое вмешательство или ограничение свободы собраний со стороны органов местного самоуправления должно быть сопровождаться письменным, юридически обоснованным разъяснением. Это обеспечит прозрачность принятия решений и позволит организаторам защищать свои права в случае необоснованных отказов или препятствий.

4. Создание унифицированных форм уведомления и публичного реестра собраний на муниципальном уровне. Для повышения прозрачности и предотвращения злоупотреблений необходимо внедрить стандартные формы уведомлений, доступные как в бумажном, так и в электронном виде, а также вести открытый публичный реестр всех заявленных собраний и решений по ним. Это позволит общественности контролировать деятельность органов местного самоуправления и обеспечит равный доступ к информации.

5. Ответственность органов местного самоуправления и их должностных лиц за незаконное вмешательство в свободу собраний. Необходимо закрепить в законодательстве меры ответственности за необоснованные отказы, затягивание процедур и препятствия в реализации права на собрания, включая дисциплинарную, административную и гражданско-правовую ответственность должностных лиц муниципальных органов. Это создаст дополнительные гарантии защиты прав граждан и повысит качество работы муниципальной власти.

Внедрение перечисленных изменений позволит обеспечить баланс между необходимостью охраны общественного порядка и уважением конституционного права на свободу мирных собраний, повысит доверие граждан к органам местного самоуправления и укрепит демократические институты в Республике Армения.

Примеры судебной практики и международные стандарты.

В контексте международного права и судебной практики Европейского суда по правам человека (ЕСПЧ) закреплено, что ограничения на свободу собраний должны быть законными,

необходимыми и пропорциональными (дело «Навальный против России», 2017³). Суд неоднократно подчёркивал, что органы власти, включая местные, не могут использовать формальные процедуры согласования как инструмент фактического запрета или чрезмерных ограничений мирных собраний.

В международных рекомендациях, таких как «Руководство по проведению мирных собраний» Совета Европы и Рекомендации Комитета министров Совета Европы CM/Rec(2010)5, акцентируется необходимость прозрачных, понятных и недискриминационных процедур согласования и уведомления, а также обязательства государственных органов обеспечивать безопасность без излишнего вмешательства.

Закключение

Внедрение указанных нормативных изменений в законодательство Армении позволит приблизить национальную практику к международным стандартам, обеспечит защиту прав граждан и укрепит доверие к органам местного самоуправления как институтам демократии.

Совершенствование правового регулирования роли органов местного самоуправления в Армении в контексте реализации права на свободу собраний требует комплексного подхода, включающего как нормативные изменения, так и развитие правоприменительной практики. Это позволит обеспечить баланс между защитой общественного порядка и соблюдением демократических принципов, повысит доверие граждан к муниципальной власти и обеспечит соблюдение международных стандартов.

Аннотация. Право на свободу мирных собраний является одним из важнейших элементов демократического общества и государства, которое гарантируется конституциями большинства государств. Это право обеспечивает возможность личности выражать свои взгляды, формировать и продвигать интересы различных групп и участвовать в управлении делами государства. Однако его реализация на практике зависит во многом от эффективности взаимодействия гражданского общества с органами публичной власти, в том числе с органами местного самоуправления.

В данной научной статье анализируется правовой аспект участия органов местного самоуправления в реализации конституционного права граждан на свободу мирных собраний. Основное внимание уделяется выявлению актуальных правовых проблем, возникающих в процессе взаимодействия муниципальных органов с организаторами и участниками публичных мероприятий. Также предполагаются возможные направления совершенствования правового регулирования и механизмы эффективной реализации данного права на местном уровне. Особое значение придается анализу практики применения законодательства о собраниях на муниципальном уровне, включая вопросы согласования мест и времени проведения мероприятий, а также степени вмешательства местных властей в реализацию данного конституционного права.

Ամփոփագիր: Խաղաղ հավաքների իրավունքը ժողովրդավարական հասարակության և ժողովրդավար պետության ամենակարևոր տարրերից մեկն է, որն ապահովվում է մեծամասնություն պետությունների սահմանադրություններով: Այս իրավունքով անձին հնարավորություն է տրվում արտահայտելու իր տեսակետները, ձևավորելու և առաջ քաշելու տարբեր խմբերի շահերը, ինչպես նաև մասնակցելու պետական գործերի կառավարմանը: Սակայն, դրա իրագործումը կախված է քաղաքացիական հասարակության և հանրային իշխանությունների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ

³ Навальный против России, 2017 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-170655> / дата обращения: 25.08.2025г.

փոխգործակցությունից:

Սույն գիտական հոդվածում վերլուծվում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավական դերակատարությունը խաղաղ հավաքների սահմանադրական իրավունքի իրագործման ոլորտում: Հոդվածում ուշադրությունը կենտրոնանում է մի շարք իրավական խնդիրների վրա, որոնք առաջանում են տեղական ինքնակառավարման մարմինների և խաղաղ հավաքների կազմակերպիչների ու մասնակիցների միջև՝ խաղաղ հավաքների սահմանադրական իրավունքի իրացման ոլորտում: Հոդվածում ներկայացված են նաև իրավական կարգավորումների բարելավման հնարավոր ուղղությունները, ինչպես նաև այդ իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմները տեղական մակարդակում:

Annotation. The right to freedom of peaceful assembly is one of the most important elements of a democratic society and state, which is guaranteed by the constitutions of most states. This right provides an opportunity for an individual to express his or her views, form and promote the interests of various groups, and participate in the management of state affairs. However, its implementation in practice depends largely on the effectiveness of the interaction of civil society with public authorities, including local governments.

This scientific article analyzes the legal aspect of the participation of local governments in the implementation of the constitutional right of citizens to freedom of peaceful assembly. The main attention is paid to identifying current legal problems arising in the process of interaction between municipal authorities and organizers and participants of public events. Possible areas for improving legal regulation and mechanisms for the effective implementation of this right at the local level are also suggested. Particular importance is attached to the analysis of the practice of applying the legislation on assemblies at the municipal level, including issues of coordinating the places and times of events, as well as the degree of intervention of local authorities in the implementation of this constitutional right.

Ключевые слова: свобода мирных собраний, органы местного самоуправления, демократия, административные процедуры.

Բանալիբաներ-խաղաղհավաքներ, տեղականինքնակառավարմանմարմիններ, ժողովրդավարություն, վարչական ընթացակարգեր:

Keywords: freedom of peaceful assembly, local government, democracy, administrative procedures.

Список использованных источников

1. Конституция Республики Армения (с изменениями, внесёнными на референдуме 6 декабря 2015 г.) // Официальный вестник РА. — 2015. — № 39. / <https://www.president.am/ru/constitution-2015/>
2. Закон Республики Армения «О свободе собраний» от 26 апреля 2011 г. № ՀՕ-97-Ն // <https://old.arlis.am/>
3. Международный пакт о гражданских и политических правах от 16 декабря 1966 г. // ООН
4. Конвенция о защите прав человека и основных свобод от 4 ноября 1950 г. (с поправками) // ETS №005, Совет Европы.
5. Европейский суд по правам человека. Навальный против России, 2017 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-170655>
6. Руководство по свободе собраний / Совместное руководство ОБСЕ и Венецианской комиссии Совета Европы. — Варшава: ODIHR, 2019.
7. Recommendation CM/Rec(2010)5 of the Committee of Ministers to member states on measures to combat discrimination on grounds of sexual orientation or gender identity // Council of Europe, 31 March 2010.
8. Коттедж, В. Свобода собраний в международном праве: стандарты и ограничения // Журнал международного публичного и частного права. — 2018. — № 4.

9. Шахназарян А.Г. Публичные мероприятия и местное самоуправление в Армении: проблемы правоприменения // Право и государство. — 2023. — № 2.

Нерсисян И. - Аспирант Российско-Армянского (Славянского) университета по специальности 12.00.02 «Конституционное право; конституционный судебный процесс; муниципальное право», Юрист Центра правовой информации «ИРТЕК», эл. почта: nersesyan-1994@bk.ru.

Статья представлена в редакцию 01.09.2025 г., отправлена на рецензию 01.09.2025 г., рецензенты: к.ю.н., доцент, ректор ГГУ Р. Акопян, принята к публикации: 15.01.2026.

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ADMINISTRATIVE LAW/АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-31>

ԱՇՈՏ ՊՈԴՈՍՅԱՆ
*Փաստաբան, Ֆրիդրիխ Վիլհելմի անվան
Բոննի համալսարանի ասպիրանտ*

ASHOT POGHOSYAN
*Lawyer, PhD candidate at the University of Bonn
(Rheinische Friedrich-Wilhelms-Universität Bonn)*

АШОТ ПОГОСЯН
*Адвокат, аспирант Боннского университета
им. Фридриха Вильгельма*

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՀ ԻՐԱՎԱԿԱՐԳՈՒՄ**

**FUNDAMENTAL ISSUES OF THE DIRECT APPLICATION OF THE
EURASIAN ECONOMIC UNION TECHNICAL REGULATIONS IN THE
LEGAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA.**

**ПРОБЛЕМЫ ПРЯМОГО ПРИМЕНЕНИЯ ТЕХНИЧЕСКИХ РЕГЛАМЕНТОВ
ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА В ПРАВОВОЙ
СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Ներածություն

2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը, որը ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-132-Ն որոշմամբ¹ վավերացվել է:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմա-

¹ Ի տարբերություն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության, 2005 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը հստակ չի սահմանել, որ միջազգային պայմանագրերը պետք է վավերացվեն օրենքի ընդունմամբ, ինչի արդյունքում մինչև 2015 թ. գործող խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության կիրառության շրջանակներում միջազգային պայմանագրերի վավերացման նպատակով ընդունվում էին ոչ թե օրենքներ, այլ՝ ԱԺ որոշումներ:

նագիր) 10-րդ բաժինը կարգավորում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ նաև՝ Միություն) տեխնիկական կանոնակարգումը:

Պայմանագրի 51-րդ հոդվածով սահմանվում են տեխնիկական կանոնակարգման ընդհանուր սկզբունքները, իսկ 52-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են այն ոլորտները և նպատակները, որոնց միասնական կանոնակարգման համար Միությունը կարող է ընդունել կանոնակարգեր: Մասնավորապես՝ Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն՝

«1. Մարդու կյանքի և (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի և (կամ) առողջության պաշտպանության, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելման, ինչպես նաև էներգետիկ արդյունավետության ու ռեսուրսախնայողության ապահովման նպատակներով Միության շրջանակներում ընդունվում են Միության տեխնիկական կանոնակարգերը»:

Վերոնշյալ նպատակներից դուրս տեխնիկական կանոնակարգերի ընդունումն արգելվում է (տես Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը): Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխման և չեղյալ հայտարարման կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից (տես Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունը):

Սույն հոդվածի շրջանակում առանձնակի ուշադրության է արժանանալու Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը², որի համաձայն՝

«2. Միության տեխնիկական կանոնակարգերը Միության փրաժծքում ունեն ուղղակի գործողություն»:

Վերոնշյալ դրույթը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է բազում հարցեր և խնդիրներ, որոնք դեռևս չեն ստացել բավարար և համոզիչ լուծումներ: Առաջին խնդրահարույց հարցը այն է, թե արդյոք Միության տեխնիկական կանոնակարգերը պետք է դիտարկվեն ՀՀ օրենսդրության մաս: Եթե այո, ապա երկրորդ հիմնարար խնդիրը դառնում է այն, թե արդյոք և ինչպես կարող են ՀՀ քաղաքացիները պաշտպանվել Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերից, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն սահմանափակում են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրենց հիմնական իրավունքները և ազատությունները: Որպես այս հարցադրման բաղկացուցիչ մաս՝ պետք է գնահատվի, թե արդյոք ՀՀ դատարանները, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրական դատարանը կարող են ստուգել Միության տեխնիկական կանոնակարգերի իրավաչափությունը և/կամ սահմանադրականությունը: Ո՞րն է այն չափացույցը, որի հիման վրա պետք է ստուգվի տեխնիկական կանոնակարգի իրավաչափությունը/սահմանադրականությունը: Ինչպիսի՞ հարաբերակցության/աստիճանակարգության մեջ են գտնվում ՀՀ նորմատիվ ակտերը և Միության տեխնիկական կանոնակարգերը:

Ստորև փորձ է արվում վերլուծել վերը բարձրացված հարցերը և գտնել դրանց սահմանադրաիրավական պատասխանները³, այդ թվում նաև իրավահամեմատական անդրադարձ

² ԵԱՏՄ այլ մարմինների կողմից ընդունվող ակտերի և ՀՀ օրենսդրության նկատմամբ դրանց հարաբերակցության վերաբերյալ մանրամասն տես Ա. Ղամբարյան, Եվրասիական տնտեսական միության մարմինների և Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները, Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (5), 2021, էջ 17 ու հաջորդներ:

³ Այն, որ ԵԱՏՄ պայմանագրի և ՀՀ Սահմանադրության միջև կարող են առաջանալ բարդ խնդիրներ և, որ դրանք պետք է ստանան գիտագործնական լուծում, կանխատեսել է դեռևս Գ. Դանիելյանը, ԵԱՏՄ-ի մարմինների

կատարելով Եվրոպական Միության համապատասխան իրավունքին և դրա հարաբերությամբ ԵՄ անդամ պետությունների իրավակարգերի հետ:

2. Հիմնական հետազոտություն

ա. Միության տեխնիկական կանոնակարգերը որպես ՀՀ օրենսդրության մաս

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը «օրենսդրություն» եզրույթը սահմանում է որպես օրենսդրական և ենթաօրենսդրիչ ջորդներատիվ իրավական ակտերի ամբողջություն: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «օրենսդրական ակտ» եզրույթը սահմանում է որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի ընդունած նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրություն, սահմանադրական օրենքներ և օրենքներ:

Նշված դրույթների համակարգային մեկնաբանության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ՀՀ օրենսդրությունը բաղկացած է բացառապես ներպետական նորմատիվ իրավական ակտերից:

Նշվածի համատեքստում պետք է քննարկման առարկա դարձվի, թե ինչ հարթության վրա են գտնվում 1. միջազգային պայմանագրերը, ինչպես նաև, մասնավորապես, միջազգային պայմանագրի հիման վրա ստեղծված վերպետական մարմնի, այն է՝ 2. Միության՝ տեխնիկական կանոնակարգերը:

բ. Միջազգային պայմանագիրը ՀՀ իրավական աստիճանակարգում

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը կարգավորում է նորմերի աստիճանակարգությունը՝ հռչակելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ (1-ին մաս): Օրենքները և սահմանադրական օրենքները, որոնք թվով յոթն են, պետք է համապատասխանեն Սահմանադրությանը (1-ին և 2-րդ մասերի համակարգային մեկնաբանություն), իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ օրենքներին, սահմանադրական օրենքներին և Սահմանադրությանը: Նշվածից կարելի է եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կարգավորում են բացառապես ներպետական իրավական ակտերի աստիճանակարգությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը 3-րդ մասը, այդպիսով, սահմանում է կոլիզիոն կանոն օրենքների և վավերացրած միջազգային պայմանագրերի համար՝ սահմանելով, որ երկուսի միջև հակասություն առաջանալու դեպքում պետք է կիրառվեն միջազգային պայմանագրի նորմերը: Այսինքն՝ եթե ՀՀ օրենքով որևէ հարցին տրվել է մի լուծում, իսկ վավերացված միջազգային պայմանագրով նույն հարցին տրվել է մեկ այլ լուծում, ապա իրավակիրառը պարտավոր է մի կողմ թողնելով ՀՀ օրենքը՝ կիրառել վավերացված միջազգային պայմանագրի նորմը: Տարբերությունն այն է նորմերի կիրառման առաջնայնության և գործողության առաջնայնության միջև: Մինչ կիրառման առաջնայնությունը զուտ կոլիզիոն կանոն է⁴, գործողության առաջնայնությունը նորմերի ավելի բարձր կամ ցածր ուժ

որոշումների իրավական արժեքը ներպետական իրավական համակարգում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2016, էջ 68 ու հաջորդներ, մասնավորապես՝ էջ 70:

⁴ Ինչպես օրինակ՝ ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի կիրառման առաջնայնության կանոնը, տես «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

ունենալու պատճառով մեկը մյուսին վերացնելու հիմք է⁵:

Ասվածը պատկերավոր կերպով ներկայացնելու համար բերենք մեկ օրինակ. դիցուք, Վարչական դատարանում վիճարկման հայցի շրջանակում գործը քննելիս դատարանը եզրահանգում է, որ կիրառման ենթակա Կառավարության նորմատիվ բնույթի որոշումը հակասում է օրենքին: Այս դեպքում, որպեսզի Վարչական դատարանը կարողանա «անտեսել» Կառավարության որոշումը, վերջինս պետք է կողմերի համար (inter partes) անվավեր ճանաչի Կառավարության որոշումը, այնուհետև՝ կիրառի համապատասխան օրենքը: Եթե նույն իրավիճակում Կառավարության որոշումը հակասում է միջազգային պայմանագրին, ապա Վարչական դատարանը չի կարող (թեկուզ կողմերի համար) անվավեր ճանաչել Կառավարության որոշումը, այլ պետք է զուտ դատական ակտում արձանագրի, որ կա հակասություն Կառավարության որոշման և միջազգային պայմանագրի միջև և հիմք ընդունելով Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը՝ կիրառի միջազգային պայմանագիրը:

Վերոգրյալն ամփոփելով կարող ենք պնդել, որ միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության մաս չեն կազմում, իսկ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ու միջազգային պայմանագրերի միջև հակասություն առաջանալու դեպքում վերջինս ունի զուտ կիրառման առաջնայնություն: Սահմանադրի այս մոտեցումը պայմանավորված է նրանով, որ պետությունը պետք է միջազգային հարթությունում կատարի իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունները և չդիմի փախուստի՝ վկայակոչելով իր ներպետական իրավունքը: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ միջազգային պայմանագիրն ավելի բարձր իրավաբանական ուժ ունի, քան ներպետական օրենսդրական ակտերը: Խոսքը տարբեր իրավակարգերի և դրանց փոխհարաբերությունների մասին է⁶:

Վերոգրյալի համատեքստում կարող ենք արձանագրել, որ Եվրասիական տնտեսական միության պայմանագիրը, որը վավերացվել է ՀՀ կողմից, ունի կիրառման առաջնայնություն ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ, բայց վերջիններս չեն կարող անվավեր ճանաչվել առաջինիս հակասելու հիմքով:

գ. Միության տեխնիկական կանոնակարգերը

Միության տեխնիկական կանոնակարգերը, ըստ Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության, ունեն ուղղակի գործողություն միության տարածքում: Միության կանոնակարգերը ապահովում են Միության տարածքում որոշակի ոլորտների միասնական կանոնակարգվածություն: Դրանց նպատակը այն է, որ Միության անդամ պետությունները տնտեսական հարաբերությունների շրջանակում ունենան միանման կարգավորումներ, և որևէ անդամ պետություն հնարավորություն չունենա, վկայակոչելով իր ներպետական օրենսդրությունը, արգելի օրինակ՝ ինչ-որ մի տեսակի ապրանքի, որը Միության շրջանակում հանդիսանում է շրջանառության առարկա, ներմուծումն իր պետության տարածք:

Թեև տեխնիկական կանոնակարգերի ինստիտուտը վերոշարադրյալում ներկայացված իմաստով լիովին ընդունելի է, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ դրանք կարող են պարու-

⁵ «Կիրառման և գործողության առաջնայնություն» հասկացությունների վերաբերյալ մանրամասն տե՛ս *Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Շաքարյան Թ.*, «Միջազգային պայմանագրին հակասելու հիմքով եթաօրենսդրական ակտերն անվավեր ճանաչելը (մեթոդաբանական և վարչադատավարական հիմնախնդիրները)», Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր թիվ 19, 2025 թ. հունիս, էջ 61 և հաջորդներ, մասնավորապես՝ էջ 85 և հաջորդներ:

⁶ Միջազգային պայմանագրի և ներպետական իրավունքի հարաբերակցության մասին մանրամասն տե՛ս *Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Շաքարյան Թ.* նույն տեղում, որտեղ մանրամասն անդրադարձ է կատարվում նաև ասվածին ճիշտ հակառակ դիրքորոշում պարունակող ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԴ/9227/05/23 վարչական գործով 25.09.2024 թվականին կայացված որոշմանը:

նակել նաև այնպիսի դրույթներ, որոնք սահմանափակում են Միության անդամ պետությունների բնակչության հիմնական իրավունքները և ազատությունները⁷, անհրաժեշտ է վերլուծել, թե ինչ պետք է հասկանալ «ուղղակի գործողություն» եզրույթի ներքո: Արդյո՞ք դա նշանակում է, որ Միության կանոնակարգերը՝ որպես ինքնատիպ իրավական ակտեր (*sui generis*), ներպետական օրենսդրություն ինկորպորացվելու կարիք չունեն և կարող են ուղղակիորեն կաշկանդել ոչ միայն Միության անդամ պետությանը, այլև Միության անդամ պետությունների քաղաքացիներին:

Վերոնշյալի համատեքստում արդարացված կլինի հակիրճ անդրադարձ կատարել ԵՄ իրավունքի շրջանակում ընդունվող իրավական ակտերին՝ ուղենիշներին և կարգադրություններին ու իրավահամեմատական անցկացնել Միության կանոնակարգերի հետ:

ԵՄ իրավունքի աղբյուրների շրջանակում տարբերակվում են առաջնային և երկրորդական իրավունքը: Առաջնային իրավունքի մեջ են մտնում ԵՄ հիմնադիր պայմանագրերը և դրանց արձանագրությունները, ԵՄ համընդհանուր իրավական սկզբունքները և Հիմնական իրավունքների խարտիան⁸: Երկրորդային իրավունքի մեջ են մտնում ուղենիշներն ու կարգադրությունները⁹: Թե՛ ուղենիշները, թե՛ կարգադրություններն ընդունվում են ԵՄ Խորհրդի և Պառլամենտի կողմից՝ Հանձնաժողովի առաջարկությամբ՝ հատուկ օրենսդրական ընթացակարգերի շրջանակներում:

ԵՄ ուղենիշները պարտավորեցնում են ԵՄ անդամ պետություններին ներպետական օրենսդրության համապատասխանեցման միջոցով ներդաշնակեցնելու իրենց իրավունքը ԵՄ ուղենիշներով սահմանված դրույթներին: Ընդ որում, ԵՄ անդամ պետություններին թողնվում է որոշակի «խաղաղաշտ»: Այսինքն՝ նրանք կարող են իրենց հայեցողությամբ, օրինակ՝ սահմանել ավելի խիստ պահանջներ, քան որ կարգավորված են ուղենիշներով: Ըստ այդմ, եթե դիտարկում ենք ԵՄ ուղենիշը և Միության կանոնակարգը, ապա միանշանակ կարելի է պնդել, որ դրանք համեմատելի չեն, քանի որ, ի տարբերություն ԵՄ ուղենիշի, Միության կանոնակարգը, ըստ Պայմանագրի, նախ և առաջ, գործում է ուղղակիորեն, այսինքն՝ ներդաշնակեցման կարիք չունի, ինչպես նաև ոչ թե սահմանում են որոշակի մինիմալ ստանդարտներ, որոնցից կարելի է այս կամ այն կերպ շեղվել, այլ հստակ դրույթներ, որոնք պետք է անշեղորեն կատարվեն Միության անդամ պետությունների կողմից:

Միության կանոնակարգին ավելի մոտ են կանգնած ԵՄ կարգադրությունները, որոնք, ինչպես Միության կանոնակարգերը, գործում են ուղղակիորեն, այսինքն՝ չունեն ներպետական իրավակարգերում ինկորպորացվելու կարիք:

Մինչ Միության կանոնակարգերի և ԵՄ կարգադրությունների ընդհանրություններին և տարբերություններին անդրադառնալը, գտնում ենք, որ տեղին կլինի քննարկման առարկա դարձնել մի կողմից Միության միջազգային-իրավական կարգավիճակը, ինչպես նաև ԵՄ իրավական կարգավիճակը (իրավական բնույթը), քանի որ միայն դրանից հետո է հնարավոր պատասխանել այն հարցին, թե արդյոք այս երկու կառույցներն իրար այնքան մոտ են, որ արդարացված կլինի Միության կանոնակարգերի և ԵՄ կարգադրությունների միջև հավասարության նշան դնելը:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հեղինակը հանգել է այն հետևության, որ անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ իրավահա-

րաբերություններից բխող վեճերով «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարությանը դիմելու կարգը պահպանված չլինելու դեպքում հայցադիմումը վերադարձնելու հիմք դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ սահմանելով իրավական հնարավորություն նման թերությունն արձանագրելու դեպքում այն շտկելու և հայցադիմումը կրկին դատարան ներկայացնելու համար:

Annotation. The author has studied the amendments and supplements made to the RA Law “On Mediation”, which relate, among other things, to the introduction of the institution of mandatory mediation aimed at the settlement of family disputes, as well as parallels have been drawn with the amendments made to the RA Family Code and the RA Civil Procedure Code in line with these amendments.

In the process of creating the work, both foreign literature (also available via electronic links) and domestic and international legal practice were used. The issues raised by judges in practice were also taken into consideration.

The author has resolved the legislative gaps in the introduction of mandatory mediation, presented some observations related to the extrajudicial procedure of mandatory mediation, and made proposals for legislative amendments to both the RA Family Code and the RA Civil Procedure Code.

As a result of the conducted studies and analyses, the author came to the conclusion that it is necessary to make legislative amendments to Part 2 of Article 68 of the Family Code of the Republic of Armenia, Part 1 of Article 69 of the Family Code of the Republic of Armenia, as well as to consider the grounds for returning the claim in case the procedure for resorting to mandatory mediation before applying to court in accordance with the procedure established by the RA Law “On Mediation” with disputes arising from civil, family, labor, and in cases provided for by law, other legal relationships, as well as to consider Article 127, Part 1, Point 3 of the RA Civil Procedure Code as a basis for the return of the claim, establishing a legal opportunity to correct such a defect and re-submit the claim to the court.

Аннотация. В статье изучаются изменения и дополнения, внесенные в Закон РА «О медиации», касающиеся, в том числе, введения института обязательной медиации, направленной на разрешение семейных споров, а также проводятся параллели с изменениями, внесенными в Семейный кодекс РА и Гражданский процессуальный кодекс РА в соответствии с этими изменениями.

При проведении исследования были использованы как зарубежная литература (в том числе доступная по электронным ссылкам), так и отечественная и международная правовая практика. Также были учтены вопросы, поднимаемые судьями на практике.

Автор предлагает пути устранения законодательных пробелов в вопросе введения обязательной медиации, представляет некоторые замечания, связанные с внесудебной процедурой обязательной медиации, и сделал предложения по внесению законодательных изменений в Семейный кодекс РА и Гражданский процессуальный кодекс РА.

В результате проведенных исследований и анализа автор пришел к выводу о необходимости внесения законодательных изменений в часть 2 статьи 68 Семейного кодекса Республики Армения, часть 1 статьи 69 Семейного кодекса Республики Армения, а также рассмотрения основания для возврата иска в случае нарушения порядка обращения к обязательной медиации до обращения в суд в порядке, установленном Законом РА «О медиации» со спорами, возникающими из гражданских, семейных, трудовых, а в случаях, предусмотренных законом, иных правоотношений, а также рассмотреть пункт 3 части 1 статьи 127 Гражданского процессуального кодекса РА в качестве основания для возврата иска, устанавливающего правовую возможность исправления такого недостатка и повторной подачи иска в суд.

Բանալի բառեր - պարտադիր հաշտարարություն, արտադատական կարգ, հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթեր, հայցադիմումը վերադարձնելու հիմքեր, օրենսդրական բաց, ալիմենտի վճար-

ման և քննազանձման կարգ, լրացուցիչ ծախս, երեխայի լավագույն շահ:

Keywords: mandatory mediation, extrajudicial procedure, documents submitted with the claim, grounds for returning the claim, legislative gap, procedure for payment and collection of alimony, additional expenses, best interests of the child.

Ключевые слова: обязательная медиация, внесудебный порядок, документы, прилагаемые к исковому заявлению, основания для возврата искового заявления, законодательный пробел, порядок уплаты и взыскания алиментов, дополнительные расходы, наилучшие интересы ребенка.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ашикян Ю.Р. Альтернативные способы урегулирования споров: понятие, виды и механизм функционирования // Инновации. Наука. Образование, 2020. № 14.
2. Комментарии ЮНСИТРАЛ по медиации (2021 год), Организация Объединенных Наций, Вена, 2021 г..
3. Теория и практика медиации (посредничества) в экономической сфере, Минск, Издательский центр БГУ 2015.
4. Шамликашвили Ц.А. Медиация– современный метод внесудебного и досудебного разрешения споров // Библиотечка «Российской газеты». 2021. Вып. 1, январь.
5. Шамликашвили Ц.А. Медиация– современный метод внесудебного разрешения споров., М.: Изд. ООО «Межрегиональный центр управленческого и политического консультирования», 2017.
6. European Commission For The Efficiency Of Justice (CEPEJ), European Handbook for Mediation Lawmaking, Strasbourg, 13 and 14 June 2019.
7. «Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենք:
8. «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում 16.11.2022 թվականին ընդունված և 26.12.2022 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-435-Ն օրենք:
9. «Հիմնավորում «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների ընդունման», <https://www.e-draft.am/projects/3259/about> հղմամբ:
10. ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին թիվ ՀՕ-438-Ն օրենք ընդունված 16.11.2022 թվականին:
11. Общероссийская Общественная Организация, Ассоциация Юристов России, Особенности урегулирования судебных споров онлайн, <https://alrf.ru/articles/preimushchestva-i-osobennosti-uregulirovaniya-sudebnykh-sporov-onlayn> հղմամբ:
12. Адвокатская газета, Орган Федеральной палаты адвокатов РФ, <http://www.advgazeta.ru/ag-expert/advice/mediatsiya-razreshaem-spory-bez-suda> հղմամբ 28.10.2025 թվականի դրությամբ:
13. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴԱՈ-209 որոշումներ:
14. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/8696/02/25 քաղաքացիական գործով 29.08.2025 թվականի որոշում, www.datalex.am հղմամբ:
15. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/10583/02/25 քաղաքացիական գործով 08.10.2025 թվականի որոշում www.datalex.am հղմամբ:
16. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/10810/02/25 քաղաքացիական գործով 28.10.2025 թվականի վճիռ, www.datalex.am հղմամբ:
17. Թիվ ԼԴ/1169/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատա-

րանի 24.09.2025 թվականի վճիռ, www.datalex.am հղմամբ:

18. Թիվ ՎԴ/11023/05/19 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2022 թվականի հունիսի 17-ի որոշում, www.datalex.am հղմամբ:

19. Livio Menini, Maria Antonia Rampanelli v Banco Popolare Società Cooperativa գործով, թիվ C-75/16 -75/16 գանգատ, Վերոնայի շրջանային դատարան, Առաջին պալատի 14.06.2017 թվականի վճիռ, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:62016CJ0075> հղմամբ:

20. MOMČILOVIĆ v. CROATIA գործով, գանգատ թիվ 11239/11, ՄԻԵԴ, 26.03.2015 թվականի որոշում, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-152990> հղմամբ:

Զարգարյան Հ. - ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիասցե՝ hayarpiz@mail.ru, zargaryanhayarpi03@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 13.11.2025 թ., տրվել է գրախոսության 13.11.2025 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, Հայաստանի ֆրանսիական համալսարանի դասախոս, ՀՀ փաստաբանական ակադեմիայի դասախոս, իրավագիտության թեկնածու Գ. Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-88>

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ

*ՀՀ Կոտայքի մարզի առաջին աստիճանի
ընդհանուր իրավասության դատարանի դատավոր*

ANAHIT ANTONYAN

*Judge of the general jurisdiction court of first instance of
Kotayk Region of the RA*

АНАИТ АНТОНЯН

*Судья суда общей юрисдикции первой инстанции
Котайкской области РА*

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՈՒՅԹԻ ՍՈՒԲՅԵԿՏԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

THE ESSENCE OF THE PROCEEDINGS ON THE REVERSAL OF THE EXECUTION OF A JUDICIAL ACT AND THE SUBJECTIVE PREREQUISITES OF THE PROCEEDING

СУТЬ ПРОИЗВОДСТВА О ПОВОРОТЕ ИСПОЛНЕНИЯ СУДЕБНОГО АКТА И СУБЪЕКТИВНЫЕ ПРЕДПОСЫЛКИ ПРОИЗВОДСТВА

Ներածություն

Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն դատարան դիմողի կողմից վարույթ նախաձեռնելուն, այլև գործով սահմանված կարգով ներկայացված պահանջների բավարարման վերաբերյալ վերջնական դատական ակտով հաստատված իրավունքը իրացնելու հնարավորություն: Հայցը կամ դիմումը քաղաքացիական վարույթի հարուցման հիմք է և կանխորոշում է վարույթի բովանդակությունն ու հիմնական ուղղվածությունը, իսկ դատարանի վերջնական դատական ակտն արտացոլում է դատավարության արդյունքները: Դիմելով դատարան՝ հայցվորն ակնկալում է, որ դատարանը կկայացնի բավարարող դատական ակտ, որով իր համար կսահմանվի կամ կճանաչվի որոշակի իրավունք, կհաստատվի որոշակի փաստ և այլն: Ըստ էության, վերջնական դատական ակտն իրավունքի սուբյեկտների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված ակտ է:

Դատական պաշտպանության իրավունքը կիրառելի է ինչպես հայցային, այնպես էլ քաղաքացիական դատավարության տարբերակված ձևերի պարագայում, որպիսի պայմաններում դատարանը վարույթային քաղաքացիադատավարական գործողություններով իրականացնում է դիմողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:

Գործն ըստ էության լուծող դատական ակտի իրավական գործողության կարևորագույն հատկանիշ է կատարելության հատկանիշը, ինչը ենթադրում է անձի՝ ակտի կատարում պահանջելու իրավունքի երաշխավորում: Ընդ որում՝ կատարում պահանջելու իրավունքը իրացվում է նաև հարկադիր կատարում պահանջելով, որն ապահովվում է դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա: Կատարողական թերթի տրամադրումը կոչված է կատարողական վարույթի միջոցով ապահովելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման գործընթացը, ինչն իր հերթին հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի փաստ կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի, դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որ անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս¹:

Այդուհանդերձ՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, որը կայացվել, օրինական ուժի մեջ է մտել և նույնիսկ կատարվել է, հետագայում կարող է վերադաս ատյանի կողմից բեկանվել կամ փոփոխվել, ինչի արդյունքում, ըստ էության, կվերանա այդ ակտով սահմանված որոշակի իրավունքը: Հետևաբար՝ յուրաքանչյուր դեպքում, երբ օրենսդրությամբ սահմանված կարգով (վերանայման ընդհանուր և հատուկ ընթացակարգերի դեպքում) վճռով հաստատված իրավունքը ենթարկվում է տրանսֆորմացիայի կամ դրա գործողությունը դադարում է, առաջանում է վճռի կատարման ամբողջական կամ մասնակի շրջադարձի արդյունավետ կառուցակարգի ներդրման և կիրառման անհրաժեշտություն: Ուստի՝ մինչև վճռով հաստատված իրավահարաբերության կամ դրա բովանդակությունը կազմող իրավունքի կամ պարտականության իրացումը եղած իրադրության վերականգնման ընթացակարգերի գործառությանն առանձնահատկությունների ուսումնասիրությունը դառնում է արդիական և համակարգային վերլուծության ենթակա հարց:

Հիմնական հետազոտություն

Հարկ է ընդգծել, որ օրենսդրական միակ կարգավորումը, որը վերաբերում է դատական ակտի կատարման շրջադարձին, տեղ է գտել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում: Քաղաքացիական դատավարության օրենսգրքում այս հարցի կարգավորման վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ: Այսպես.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը պարտապանին լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ վերոհիշյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ դատավարական իմաստով դատարանի ի կատար ածված

¹ Տե՛ս, Բուրդոն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսթին ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40:

վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել, եթե՝

- առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, և

- դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Սահմանադրական դատարանն իր 28.06.2013 թվականի ՍԴՈ-1102 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Նյութական-իրավական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետևաբար՝ նաև այդ ակտն ի կատար ածելու արդյունքում առաջացած իրավական հետևանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար և արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, իսկ օբյեկտը՝ գոյքային իրավունքն է և դրանով պայմանավորված կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վեճի շրջանակում: Այսինքն՝ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառմամբ պետությունը, ի դեմս իրավասու դատարանի, նպատակ ունի կատարելու անձանց սեփականությունը պաշտպանելու (այդ թվում՝ այլոց ապօրինի գործողություններից) իր պոզիտիվ պարտականությունը, որը նաև արդարադատության իրականացման հիմնական խնդիրներից է: Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարևոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8-րդ, 18-րդ և 19-րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում²:

Վճռաբեկ դատարանը ևս իմ մի շարք որոշումներում անդրադարձել է վճռի կատարման շրջադարձին՝ բացահայտելով դրա էությունը: Վճռի կատարման շրջադարձի նպատակն է դատական կարգով վերականգնել պատասխանողի իրավունքները և օրինական շահերը, որոնք խախտվել են բեկանված դատական ակտով: ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վճռի կատարման շրջադարձի նպատակն է՝ վերացնել ի կատար ածված դատական ակտի իրավա-

² Տե՛ս Պապամիկալոպոպուլոսն ընդդեմ Հունաստանի (*Papamichalopoulos v. Greece*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, կետ 34:

կան հետևանքները՝ վերականգնել այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը և գործի հանգամանքներով պայմանավորված՝ վերականգնել *շահագրգիռ կողմի* խախտված նախկին իրավունքներն ու պարտականությունները³:

Մեկ այլ որոշմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթի նպատակը մինչև բեկանված դատական ակտի կատարումը եղած դրությունը վերականգնելն է: Այսինքն՝ բոլոր դեպքերում խոսք է գնում բեկանված դատական ակտով որոշված, սահմանված և տրամադրված իրավունքների և պարտականությունների մասին, որոնք վերացվել են դատական ակտի բեկանմամբ⁴:

Նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ սույն աշխատանքում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

- Ինչ ընթացակարգով է իրականացվում վճռի կատարման շրջադարձը:
- Ու՞մ նախաձեռնությամբ է քննարկվում վճռի կատարման շրջադարձի հարցը:

Վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ միակ ընթացակարգային նորմը ևս գետնելված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վճռի կատարման շրջադարձի հարցը լուծում է նոր դատական ակտ կայացրած դատարանը:

Եթե դատարանը չի լուծել բեկանված վճռի կատարման շրջադարձի հարցը, պարտապանն իրավունք ունի դիմել նոր դատական ակտ կայացրած դատարան:

2. Դատարանը վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:

3. Դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

4. Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:»:

Վերը նշված դրույթի բովանդակությունից բխում է հետևյալը.

1. Վճռի կատարման շրջադարձի հարցը լուծում է նոր դատական ակտ կայացրած դատարանը,

2. Դատարանը վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում՝ դատական նիստում

3. հարցի քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը բողոքարկման ենթակա ակտ է:

Ակնհայտ է, որ դատական ակտի կատարման շրջադարձի հետ կապված հարաբերությունները իրենց բնույթով քաղաքացիադատավարական հարաբերություններ են: Քաղաքացիադատավարական հարաբերությունները դատարանի և դատավարության մասնակիցների գործողությունների և դրանց հետևանքների առաջացման կապակցությամբ ծագող հարաբերություններն են: Այսպիսի իրավահարաբերության սուբյեկտային կազմը ենթադրում է դատարանի՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի առկայություն, գործին մասնակցող անձանց առկայություն, որոնք գործի ելքով ունեն նյութաիրավական և դատավարական շահ և օժտված են վարույթի շարժման վրա ազդելու իրավունքով, ինչպես նաև դատավարու-

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ 2-4247/2004 թ. որոշումը:

⁴ Տե՛ս թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 07.10.2022 թվականի որոշումը:

թյան այլ մասնակիցների առկայություն: Ակնհայտ է, որ վճռի կատարման շրջադարձի հարցի լուծումն իրացվում է սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության ձևով: Այս հարցը ենթակա է դատարանի քննությանը՝ դատավարության օրենքով սահմանված ընթացակարգով: Նման վարույթի շրջանակում իրականացվում է անձի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում՝ դատավարական որոշակի ընթացակարգի կիրառմամբ: Ըստ էության, այս վարույթը Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնման իրավունքի պաշտպանության եղանակի դատավարական անալոգն է, որն իրականացվում է դատավարական ընթացակարգի պահպանմամբ: Ընդ որում՝ դատարանի համար դատավարական ընթացակարգ սահմանող համակարգված միակ օրենսդրական ակտը Քաղաքացիական դատավարության օրենսգիրքն է: Քաղաքացիական դատավարության օրենսգրքով է սահմանվում դատավարության մասնակիցների կարգավիճակը, դատավարության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, նիստի հրավիրման, վարման կարգերը, նիստի ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակիցներին ծանուցելու ընթացակարգը, միջնորդությունների քննարկման և դրանց արդյունքում դատական ակտերի կայացման առանձնահատկությունները, եզրափակիչ դատական ակտի կայացման ժամկետը, դրան ներկայացվող պահանջները և այլ հարցեր: Ուստի՝ կարծում ենք, որ վճռի կատարման շրջադարձին վերաբերող դրույթները պետք է տեղ գտնեն բացառապես Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որտեղ կնախատեսվեն հստակ ընթացակարգային կարգավորումներ:

Չնայած դատավարության տեսակներն ու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերն ավանդաբար ընդունված է դասակարգել երկու հիմնական խմբի՝ իրենց ենթատեսակներով. հայցային վարույթի՝ ընդհանուր հայցային և հատուկ հայցային վարույթների ենթատեսակներով, և հատուկ վարույթների՝ իրավունքի գերակայության ապահովման կոնվենցիոն որակներով պայմանավորված, դատավարական հարաբերությունների կարգավորման դինամիկան վկայում է, որ նման դասակարգումն արդեն կորցրել է արդիականությունը, և ի հայտ են եկել քաղաքացիական դատավարության այնպիսի տեսակներ, իրավունքների պաշտպանության կառուցակարգերի այնպիսի որակներ, որոնք նման դասակարգման տրամաբանությունից դուրս են⁵: Այս վարույթները դասական հայցային և հատուկ վարույթների համեմատությամբ որակական լուրջ տարբերություններ ունեն: Դրանք մի կողմից առանձնանում են իրավունքի մասին վեճի հնարավորությամբ, այլ ոչ թե փաստացի առկայությամբ, որը նյութաիրավական բնույթ չի կրում, այլ զուտ պրոցեսուալ իրավունքի իրականացում է ենթադրում: Մյուս կողմից՝ վարույթի այս տեսակում բացակայում են պատասխանողը, նրան ուղղված նյութաիրավական պահանջը, թեև առկա են հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցները⁶:

Վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ հարցի քննության ժամանակ բացակայում է նյութաիրավական պահանջն ուղղված պատասխանողին, սակայն ֆորմալ առումով առկա են հակադիր շահերով օժտված անձինք. պարտապան (պատասխանող) և պահանջատեր (հայցվոր, ում օգտին տեղի է ունեցել կատարում): Այս վարույթը չի հանդիսանում ոչ դասական հայ-

⁵ Տես Վ. Հովհաննիսյան «Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019 № 3 (30), էջ 68:

⁶ Տես Վ. Հովհաննիսյան «Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019 № 3 (30), էջ 69:

ցային և ոչ էլ հատուկ հայցային վարույթի տեսակ:

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանը առաջարկել է ըստ սուբյեկտիվ իրավունքի մասին վեճի, հակադիր շահերով օժտված կողմերի, պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի, խնդրի վերաբերյալ որոշում կայացնելու մասին դատարանին ուղղված պահանջի առկայության կամ բացակայության հատկանիշի՝ որպես քաղաքացիական դատավարության տեսակ առանձնացնել հայցային (ընդհանուր հայցային և հատուկ հայցային) վարույթները, հատուկ վարույթները և քաղաքացիական դատավարության տարբերակված ձևերը:

Համաձայնելով նշված դասակարգման հետ՝ կարծում ենք, որ վճռի կատարման շրջադարձի վարույթը ևս պետք է դասվի քաղաքացիական դատավարության տարբերակված ձևերի շարքին և կարգավորման ենթարկվի բացառապես Քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Ինչպես վարույթի ցանկացած տեսակ այնպես էլ վճռի կատարման շրջադարձի վարույթը՝ որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև ունի հարուցման ձևական, սուբյեկտային և օբյեկտային նախադրյալներ: Սուբյեկտային նախադրյալները սուբյեկտների շրջանակն է, որոնք իրավասու են հարուցելու նման վարույթ: Օբյեկտային նախադրյալը վարույթի քննության օբյեկտն է տվյալ դեպքում այն դատական ակտն է, որի կատարման շրջադարձի հարցը կարող է քննարկման առարկա դառնալ դատարանի կողմից: Ձևական նախադրյալները դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը որոշակի դատավարական կարգով իրականացնելու պայմաններն է:

Սույն աշխատանքում անդրադարձ է կատարվելու դատական ակտի կատարման շրջադարձի վարույթի հարուցման սուբյեկտային նախադրյալներին, այսինքն՝ սուբյեկտների այն շրջանակին, ում նախաձեռնությամբ կարող է հարուցվել դատական ակտի կատարման շրջադարձի վարույթ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական ակտի կատարման շրջադարձի հարցը, որպես կանոն, քննարկվում է պարտապանի դիմումի հիման վրա: Պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել որևէ դատական ակտ, որով դատարանի նախաձեռնությամբ լուծվել է վճռի կատարման շրջադարձի հարցը: Մինչդեռ, կարծում ենք, օրենսդրական կարգավորումը հակառակի մասին է վկայում: Այսպես.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից բխում է, որ վճռի կատարման շրջադարձի հարցը լուծում է նոր դատական ակտ կայացրած դատարանը: Նման ձևակերպմամբ օրենսդիրը իմպերատիվ սահմանել է պահանջ, որ նոր դատական ակտ կայացրած դատարանը բեկանված ակտի հիման վրա գործի նոր քննության արդյունքում կայացնելով հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կարճելու կամ հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին դատական ակտ՝ պարտավոր է դրանով անդրադառնալ նաև նախկինում կայացված, կատարված և բեկանված դատական ակտի շրջադարձին: Նշված դիրքորոշումը հիմնավորվում է մի քանի փաստարկներով.

Նախևառաջ՝ դատական ակտի կատարման շրջադարձը դատական սխալի ուղղակի հետևանքի վերացման միջոց է: Այս ընթացակարգի միջոցով վերականգնվում է այն իրավիճակը, որն առկա էր մինչև դատական ակտի կայացում: Գործի նոր քննության ժամանակ փաստացի առկա է լինում մի դատական ակտ, որը հիման վրա կողմի համար առանց որևէ օրինական հիմքի առաջացել է իրավունք, վերջինս ձեռք է բերել գույք կամ գրանցել է գույքային իրավունք և այլն: Նման սխալի ուղղումը հենց Դատարանի խնդիրն է՝ անկախ կողմի

պահանջից: Չի կարող լինել իրավունք, որը ծագել է գոյություն չունեցող դատական ակտի հիման վրա: Որևէ նշանակություն չի կարող ունենալ պարտապանի կամ այն անձի ցանկությունը, որի համար առաջացել է որոշակի իրավունք: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի կոնվենցիոն մասն են ու մեկ համալիր իրավունք են: Այս իրավունքը յուրաքանչյուրին երաշխավորում է ոչ միայն դատարան դիմելու իրական հնարավորություն, գործի քննության ընթացքում որոշակի որակներ ու դատավարական այլ գործիքակազմ, ապահովում դատավարական երաշխիքների պահպանմամբ հաստատված փաստերի նկատմամբ նյութական համապատասխան նորմերի կիրառում, կայացված դատական ակտի կատարում, այսինքն՝ խախտված իրավունքների վերականգնում, այլև երաշխավորում է *դատական հնարավոր սխալի կամ արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ տարրի խախտման վերացման հնարավորություն*⁷: Հետևաբար՝ դատական սխալի վերացումը Դատարանի առաջնային խնդիրն է և բխում է դատարանի՝ արդարադատություն իրականացնելու առաքելությունից:

Երկրորդ. Դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ անդրադառնալ վճռի կատարման շրջադարձի հարցին՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքը. երբեմն դատական ակտը բեկանվում է ոչ թե հայցվորի կամ պատասխանողի բողոքի հիման վրա, այլ օրինակ՝ գործին մասնակից չդարձած անձի կամ գործով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի բողոքի հիման վրա և հետագայում՝ հայցը լրիվ կամ մասնակի մերժելու վերաբերյալ վճիռ, գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու որոշում կայացվելու դեպքում կողմերը ոչ միայն շահագրգիռ չեն լինում, այլև չեն ցանկանում, որպեսզի կատարվի շրջադարձ: Նման դեպք առկա է նաև դատական պրակտիկայում:

Թիվ ԿԴ1/0244/02/17 քաղաքացիական գործով Շ. Հ.-ն 24.02.2017 թվականին հայցադիմում էր ներկայացրել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև Դատարան) ընդդեմ համայնքի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին: Դատարանի 11.09.2017 թվականի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: Հոդամասի նկատմամբ գրանցվել է հայցվորի սեփականության իրավունքը: Դատարանի նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել գործին մասնակից չդարձած անձը: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ Վերաքննիչ բողոքը բավարարվել է և Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԿԴ1/0244/02/17 քաղաքացիական գործով կայացրած վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Գործի նոր քննության փուլում վերաքննիչ բողոք ներկայացրած անձինք ներգրավվել են որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք: Գործի նոր քննության ընթացքում պատասխանողը որևէ առարկություն չի ներկայացրել: Հայցվորի ներկայացուցչի կողմից 05.02.2021 թվականին Դատարան է մուտքագրվել հայցից հրաժարվելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանի 25.02.2021 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է և դատարանը չի անդրադարձել վճռի կատարման շրջադարձի հարցին: Պատասխանողը, նույն ինքը՝ պարտապանը վճռի կատարման շրջադարձի դիմում չի ներկայացրել:

⁷ Տե՛ս Հ. Մ. Տեր-Վարդանյան, Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2009, էջ 11:

Արդյունքում՝ ոչ իրավաչափ, բեկանված դատական ակտի հիման վրա մնացել է գրանցված սեփականության իրավունք:

Գտնում ենք, որ ոչ Հայցվորը, ոչ էլ պատասխանողը սույն գործով շահագրգռված չեն եղել, որպեսզի իրականացվի վճռի կատարման շրջադարձ, ավելին՝ նրանք գործի առաջին քննության ժամանակ հաշտություն են կնքել:

Կարծում եմ Դատարանը գործի վարույթը կարճելիս իր նախաձեռնությամբ պետք է լուծեր վճռի կատարման շրջադարձի հարցը: Իրավական ուժը կորցրած ակտով ճանաչված փաստը երբևէ չի կարող կրել իրավական հետևանքներ, քանի որ օրինական ուժի մեջ մտած ավելի բարձր իրավական ակտով նշված փաստի ճանաչումն ինքնին անհիմն է համարվել և այդ մասով գործի վարույթը կարճվել է, ավելին՝ հայցվորն ինքն է հրաժարվել հայցից: Միաժամանակ, գործի նյութերով պարզվել է, որ իրավական ուժը կորցրած դատական ակտի հիման վրա կատարվել է պետական գրանցում, ինչն, անշուշտ, այլ անձանց, տվյալ դեպքում՝ դատական ակտը բողոքարկողի իրավունքների խախտման, վերջինիս դատական պաշտպանության իրավունքի վերջնական սպառման սահմանափակման անվերապահ հիմք է հանդիսացել, որը և ենթակա էր վերացման՝ ելնելով սույն գործով հաստատված փաստական հանգամանքներից:

Իհարկե, քննարկվող գործով կայացվել է վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ ակտ, սակայն այլ ընթացակարգով՝ գործին մասնակցող շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:

Երրորդ. նման դիրքորոշումը բխում է նաև հոդվածի նույն մասի երկրորդ նախադասությունից, որտեղ կիրառվել է «եթե» բառը: Այս բառն, ըստ էության, ցույց է տալիս պայման: Մասնավորապես՝ եթե դատարանը չի լուծել բեկանված վճռի կատարման շրջադարձի հարցը, պարտապանն իրավունք ունի դիմել նոր դատական ակտ կայացրած դատարան: Նշված կարգավորման տառացի մեկնաբանությունից բխում է, որ պարտապանի մոտ վճռի կատարման շրջադարձի դիմում կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ դատարանը այդ հարցին չի անդրադարձել դատական ակտով:

Չորրորդ. Դատարանի կողմից վճռի կատարման շրջադարձի հարցի լուծումը սեփական նախաձեռնությամբ հիմնավորված է նաև այն հանգամանքով, որ անձն արդեն իսկ վճիռը բողոքարկելով արտահայտել է իր կամքն ուղղված տվյալ վճռի հետևանքի վերացմանը: Հետևաբար՝ շահագրգիռ անձի առանձին դիմումի ներկայացումը պարտադիր չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է արձանագրել, որ վճռի կատարման շրջադարձի հարցի քննարկումը պետք է կատարվի դատարանի նախաձեռնությամբ՝ անկախ նրանից շահագրգիռ անձը նման դիմում ներկայացրել է, թե ոչ: Այս հարցին դատարանը պետք է անդրադառնա հայցը լրիվ կամ մասնակի մերժելու, գործի վարույթը կարճելու կամ առանց քննության թողնելու մասին դատական ակտում՝ հաշվի առնելով, որ արդարադատության գլխավոր նպատակը մարդու իրավունքների՝ որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունն է, որը օրենքի ֆորմալ իրացման արդյունքում կարող է չիրականանալ:

Անդրադառնալով վարույթ նախաձեռնող մյուս սուբյեկտներին՝ հարկ է ընդգծել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից բխում է, որ եթե դատարանի նախաձեռնությամբ վճռի կատարման շրջադարձի տեղի չի ունենում, ապա այդ հարցը կարող է քննարկվել միայն պարտապանի դիմումի հիման վրա: Նույն օրենքի 7-րդ մասի համաձայն՝ պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը որը, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որո-

շակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից: Ստացվում է՝ պարտապանը վարույթում «պարտվող կողմն է»՝ պատասխանողը, որի վերաբերյալ տրվել է կատարողական թերթ:

Հետևաբար՝ հարց է ծագում արդյոք հայցվորը, այսինքն՝ պահանջատերը կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը կարող են ներկայացնել նման դիմում այն դեպքում, երբ դատարանը անդրադարձ չի կատարել վճռի կատարման շրջադարձի հարցին:

Վերը հիշատակված թիվ ԿԴ1/0244/02/17 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հենց այս հարցադրմանը: Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումներով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության ներկայացուցչի դիմումը՝ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ՝ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վճռի կատարման շրջադարձի դիմում կարող է ներկայացնել միայն պարտապանը, այսինքն՝ գործով պատասխանողը, իսկ երրորդ անձին նման իրավունք տրված չէ:

Նշված գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճռի կատարման շրջադարձի դիմում ներկայացնելու իրավունքից օգտվելու հնարավորությունը պետք է ընձեռել ինչպես այն պատասխանող-պարտապանին, ով կամովին կատարել է դատական ակտը, այնպես էլ այն անձանց, ովքեր թեև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի իմաստով ուղղակիորեն չեն հանդիսանում պարտապան, սակայն քաղաքացիական դատավարությունում ներգրավված լինելով պատասխանողի կողմում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, օգտվել են կողմի, տվյալ դեպքում՝ պատասխանողի իրավունքներից և կրել նրա պարտականությունները, բացի նույն հոդվածով նախատեսված իրավունքներից՝ պայմանով, որ հայցը բավարարելու արդյունքում ի կատար ածված դատական ակտը հաստատապես ազդել է նրանց իրավունքների ու օրինական շահերի վրա՝ վերջիններիս համար հանդիսանալով անցանկալի և նրանց փաստացի ու իրավական վիճակը վատթարացնող:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ պարտապան չհանդիսացող, սակայն պատասխանողի կողմում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավված անձի կողմից ներկայացվում է վճռի կատարման շրջադարձի մասին դիմում, դատարանները պարտավոր են, վերը նշված պարտադիր պայմանների առկայությունը պարզելուց բացի, նաև պարզել այդ անձի՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում շահագրգիռ լինելու հանգամանքը:

Հարկ ենք համարում նշել, որ տեսականորեն նույնիսկ Հայցվորը կարող է դիմել և պահանջել վճռի կատարման շրջադարձ՝ համոզված լինելով, որ իր իրավունքը ոչ իրավաչափ հիմքից է ծագել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ դատական ակտի կատարման շրջադարձի դիմում կարող է ներկայացնել գործին մասնակցող ցանկացած շահագրգիռ անձ, ում իրավունքների ու օրինական շահերի վրա հաստատապես ազդել է ի կատար ածված դատական ակտը:

Եզրակացություն

Ամփոփելով շարադրվածը՝ գտնում ենք, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել վճռի կատարման շրջադարձի վարույթին վերաբե-

րող կարգավորումներ, որտեղ հստակորեն պետք է սահմանվեն վարույթի առանձնահատկությունները, վարույթ նախաձեռնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, կայացվող դատական ակտի բնույթը, հայցի ապահովման կամ իրավունքի պաշտպանության միջանկյալ միջոցների կիրառման հնարավորությունները:

Ամփոփագիր: Սույն գիտական հոդվածում հանգամանորեն քննարկվում են դատական ակտի կատարման շրջադարձի էությունը և սուբյեկտային նախադրյալները: Հոդվածում հեղինակը զարգացնում է այն հայեցակարգային մոտեցումը, համաձայն որի՝ դատական ակտի կատարման շրջադարձի վարույթը պետք է դասվի քաղաքացիական դատավարության տարբերակված ձևերի շարքին և կարգավորման ենթարկվի բացառապես Քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Ներկայում Քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատական ակտի կատարման շրջադարձի վերաբերյալ կարգավորում նախատեսված չէ: Դատական ակտի կատարման շրջադարձին վերաբերող դրույթները տեղ են գտել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում: Հեղինակը, գտել է, որ ինչպես վարույթի ցանկացած տեսակ, այնպես էլ դատական ակտի կատարման շրջադարձի վարույթը՝ որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև ունի հարուցման ձևական, սուբյեկտային և օբյեկտային նախադրյալներ: Սուբյեկտային նախադրյալները սուբյեկտների շրջանակն է, որոնք իրավասու են հարուցելու նման վարույթ: Հեղինակը վերլուծել է դատարանի լիազորությունը՝ սեփական նախաձեռնությամբ իրականացնելու դատական ակտի կատարման շրջադարձ: Հոդվածում գործող օրենսդրական կարգավորումների և դատական պրակտիկայի լույսի ներքո՝ վերլուծվել է նաև դատական ակտի կատարման շրջադարձի իրականացման համար դատարանի մեջ իրավունք ունեցող հնարավոր անձանց շրջանակը:

Annotation. This scientific article discusses the essence and subjective prerequisites of the reversal of the execution of a judicial act. In the article, the author develops the conceptual approach according to which the proceeding for the reversal of the execution of a judicial act should be classified as a differentiated form of civil proceeding and be regulated exclusively by the Code of Civil Procedure. Currently, the Code of Civil Procedure does not regulate the reversal of a judicial act's execution. The provisions related to the reversal of the execution of a judicial act are included in the law "On Compulsory Enforcement of Judicial Acts." The author found that, like any type of proceeding, the proceedings for the reversal of the execution of a judicial act, as a differentiated form of civil proceedings, have formal, subjective, and objective prerequisites for initiation. Subjective prerequisites are the scope of subjects that are authorized to initiate such proceedings. The author has analyzed the authority of the court to reverse the execution of a judicial act on its own initiative. In the light of the current legislative regulations and judicial practice, the article also analyzed the scope of possible persons who have the right to apply to the court to reverse the execution of a judicial act.

Аннотация. В данной научной статье подробно рассматриваются сущность и субъективные предпосылки отмены исполнения судебного акта. В статье автор развивает концептуальный подход, согласно которому производство по отмене исполнения судебного акта должно быть отнесено к отдельной форме гражданского судопроизводства и регулироваться исключительно ГПК. В настоящее время ГПК не предусматривает регулирования вопроса отмены исполнения судебного акта. Положения, касающиеся отмены исполнения судебного акта, содержатся в Законе «О принудительном исполнении судебных актов». Автор установил, что, как и любой вид производства, производство о повороте исполнения судебного акта, как отдельная форма гражданского судопроизводства имеет формальные, субъективные и объективные предпосылки возбуждения. Субъективные предпосылки – это круг субъектов, уполномоченных возбуждать такое производство. Автором проанализированы полномочия суда по отмене исполнения судебного акта по собственной инициативе. С учётом действующего законодательства и судебной практики проанализирован круг лиц, имеющих право обратиться в суд с заявлением о отмене исполнения судебного акта.

Բանալի բառեր – վճռի կատարման շրջադարձ, դատական ակտի կատարման շրջադարձ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 26-րդ հոդված:

Keywords: reversal of the execution of a judgment, reversal of the execution of a judicial act, Article 26 of the Law “On the Compulsory Execution of Judicial Acts.”

Ключевые слова: Поворот исполнения решения суда, Поворот исполнения судебного акта, статья 26 Закона «О принудительном исполнении судебных актов» РА.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն. գիրք առաջին, Երևան, 2022:
2. Հ. Մ. Տեր-Վարդանյան, Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2009:
3. Վ. Հովհաննիսյան «Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019 № 3 (30):
4. Պապամիկալոպոլոսն ընդդեմ Հունաստանի (Papamichalopoulos v. Greece) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը:
5. Բուրդուժն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը:
6. Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը:
7. Սահմանադրական դատարանի 28.06.2013 թվականի ՍԴՈ-1102 որոշում:
8. Վճռաբեկ դատարանի՝ թիվ 2-4247/2004 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշումը:
9. Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական 07.10.2022 թվականի որոշումը:
10. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումների համապարփակ ուսումնասիրություն:

Անտոնյան Ա. – ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, էլ. հասցե՝ antonyan.anahit.court@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 12.09.2025 թ., տրվել է գրախոսության 12.09.2025 թ., երաշխավորվել է ԵԴՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ս. Մեղրյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-99>

ՄԱՐԿ ԱԶԴԱՐԻԴԻՍ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան

MARC AZDARIDIS

Advocate, Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia

МАРК АЗДАРИДИС

Адвокат, Член Палаты адвокатов Республики Армения

**ԶԵՆՔԻ ԿԱՄ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱԴԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿԱՄ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱՄ
ՄԻՋՈՑԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՈՐԱԿՅԱԼ ՀԱՏԿԱՆԻՇ՝ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ**

**THE USE OF A WEAPON OR AN OBJECT OR MEANS PREPARED OR
ADAPTED IN ADVANCE TO CAUSE BODILY HARM AS A QUALITATIVE
CHARACTERISTIC OF THE COMMITMENT OF A CRIME ACCORDING TO
THE NEW CRIMINAL CODE OF THE RA**

**ИСПОЛЬЗОВАНИЕ ОРУЖИЯ, ИЛИ ПРЕДМЕТА, ИЛИ СРЕДСТВА,
ЗАРАНЕЕ ИЗГОТОВЛЕННОГО ИЛИ ПРИСПОСОБЛЕННОГО
ДЛЯ ПРИЧИНЕНИЯ ТЕЛЕСНЫХ ПОВРЕЖДЕНИЙ КАК
КВАЛИФИЦИРУЮЩИЙ ПРИЗНАК СОВЕРШЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЯ
В СООТВЕТСТВИИ С НОВЫМ УГОЛОВНЫМ КОДЕКСОМ РА**

Ներածություն

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Նոր օրենսգիրք) զգալիորեն փոփոխեց ներպետական քրեական օրենսդրությունը՝ ներառելով նոր քրեաիրավական ինստիտուտներ, ինչպես նաև հայեցակարգային փոփոխությունների ենթարկելով գործող ինստիտուտները: Ի թիվս այլնի, էական փոփոխության է ենթարկվել մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ հանդիսացող համապատասխան հանցավոր արարքի կատարումը զենքի կամ դետրուկտիվ տեսանկյունից համադրելի հետևանքներ առաջացնող, կենդանի կամ ոչ կենդանի օբյեկտները վնասելու համար պիտանի և միաժա-

մանակ զենք չհանդիսացող այլ գործիքի (այսուհետ նաև՝ Համադրելի գործիք) գործադրմամբ:

Հոդվածի ուսումնասիրության առարկան վերաբերում է հիշատակված փոփոխությանը՝ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարված լինելու որակյալ հատկանիշով արարքի որակմանը:

Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում խնդրո առարկա հարցի վերաբերյալ հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայությունը, օրենքի ոչ միատեսակ կիրառության բազմաթիվ դեպքերը, տեսական իրարամերժ մեկնաբանությունները, ինչպես նաև իրավակարգավորման համապարփակ մեկնաբանության անհրաժեշտությունը:

Հետազոտության շրջանակում քննարկման առարկա են դարձվելու վերոնշյալ որակյալ հատկանիշի պատմական զարգացումները և փոփոխությունները ներպետական քրեական իրավունքում, ապա ներկայիս իրավակարգավորումը և դրա էությունը՝ քննարկելով նաև վերջինիս առերևույթ խնդրահարույց հանգամանքներն ու վերաբերելի իրավակիրառ պրակտիկան: Մասնավորապես՝ բարձրացվելու են նաև այն իրավական հարցերը, թե՛

- որո՞նք են առարկան կամ միջոցը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված դիտարկելու չափանիշները,

- ի՞նչ նպատակով պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի ծանրացնող հանգամանքի առկայության համար,

- ու՞մ կողմից պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի,

- կարո՞ղ է արդյոք դեպքի վայրից վերցված առարկայի գործադրումն առաջացնել ծանրացնող հանգամանքը,

- ներառու՞մ է արդյոք գործադրում հասկացությունը գործադրման սպառնալիքը:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական, անալիզի և սինթեզի, ինչպես նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

1.Որակյալ հատկանիշի զարգացումը ժամանակի ընթացքում

1.1. ՀԽՍՀ օրենսգիրք

Զենքի կամ Համադրելի գործիքի գործադրումը՝ որպես քրեորեն պատժելի արարքի կատարումն առավել հանրային վտանգավոր դարձնող գաղափարը հայկական քրեաիրավական օրենսդրությունում առկա է եղել դեռևս խորհրդային ժամանակաշրջանից: Մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ հանդիսացող ծանրացնող հանգամանքը ժամանակի ընթացքում կրել է էական փոփոխություններ, որոնք վերաբերել են թե՛ հանցակազմերին, որում ծանրացնող հանգամանքը ներառված է եղել, թե՛ ծանրացնող հանգամանքի բովանդակությանը և կիրառելիության շրջանակին:

Այսպես, 1961 թվականի մարտի 7-ին ընդունված, նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժը կորցրած Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քրեական օրենսգրքով (այսուհետ նաև՝ ՀԽՍՀ օրենսգիրք) նախատեսված էր **«իրազենի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը»** որպես ավազակության միջոցով գույքի հափշտակման (88-րդ հոդված) որակյալ հատկանիշ: Բացի դրանից՝ նույն օրենսգիրքը սահմանում էր **«զենքի գործադրումը»** որպես իշխանազանցության կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու (183-րդ հոդված), պետին դիմադրելու կամ նրան ծառայության պարտականությունները խախտելուն հարկադրելու (248-րդ հոդված), զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքի

կանոնները նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու (252-րդ հոդված) կատարման ծանրացնող հանգամանք: Վերոգրյալից զատ՝ ամրագրված էր նաև **«հրազենի կամ դանակի, կասկեղի կամ այլ սառը զենքի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաների գործադրումը»** որպես խուլիգանության (222-րդ հոդված) առավել ծանրացնող հանգամանք:

ՀԽՍՀ օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ խիստ սակավաթիվ են եղել հանցակազմերը (ընդհանուր 6 հանցակազմ), որոնք որպես որակյալ հատկանիշ են նախատեսել համապատասխան արարքի կատարումը զենքով կամ Համադրելի գործիքով: Միևնույն ժամանակ, ՀԽՍՀ օրենսգրքը զարմանալիորեն չէր նախատեսում զենքի կամ Համադրելի գործիքի կիրառմամբ արարքի կատարումը որպես որակյալ հատկանիշ մի շարք հանցակազմերի դեպքում, որոնք մշտապես աչքի են ընկել պրակտիկայում նշված գործիքների հաճախակի կիրառմամբ կատարված լինելով, որոնցից են, ի թիվս այլնի, դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելը (105-րդ հոդված) կամ բռնաբարությունը (112-րդ հոդված): ՀԽՍՀ օրենսգրքի մեկ այլ հատկանշական գիծ է տարբեր հանցակազմերի դեպքում նույնաբնույթ ծանրացնող հանգամանքի թե՛ նորմատիվային, թե՛ լեզվաբանական տարբերակումը: Այսպես, ՀԽՍՀ օրենսգրքում 6 հանցակազմի ըստ էության նույնական ծանրացնող հանգամանքը սահմանելու համար օգտագործվել են միաժամանակ 1. «հրազեն», 2. «որպես զենք օգտագործվող առարկա», 3. «զենք», 4. «դանակ», 5. «կասկեղ», 6. «սառը զենք», 7. «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկա» եզրույթները: Վերոգրյալը թերևս վկայում է ոչ լավագույն օրենսդրական տեխնիկայի կիրառման մասին՝ հաշվի առնելով, որ առկա չէ հիշատակված հանցանքների դեպքում հանցագործության գործիքի վերաբերյալ տարբերվող իրավական կարգավորումներ նախատեսելու որևէ ծանրակշիռ հիմք: Օրինակ, անհիմն է ավագակության հանցակազմում զենքի տեսակի շեշտադրումը՝ հրազեն, և հետևաբար սառը զենքի բացառումն այն դեպքում, որ տվյալ հանցակազմի դեպքում անգամ զենք չհանդիսացող, սակայն որպես զենք օգտագործվող ցանկացած առարկայի գործադրումը հանգեցնելու է որակյալ հատկանիշի առկայությանը: Այլ կերպ ասած, հիշատակված կարգավորումը ենթադրում էր բացի հրազենից որևէ այլ տեսակի զենքի գործադրման դեպքում ծանրացնող հանգամանքի բացակայություն այն պարագայում, երբ զենքից ցածր հանրային վտանգավորություն ունեցող առարկաների գործադրումը հանգեցնելու էր նույն ծանրացնող հանգամանքին: Այս առումով հատկանշական է, որ ՀԽՍՀ օրենսգրքում օգտագործված «հրազեն», «սառը զենք», «զենք» եզրույթների էությունը բացահայտված է եղել այլ իրավական ակտերով, նախ՝ Սովետական Միության տարբեր գերատեսչական ակտերով, ապա՝ 1998 թվականի հուլիսի 3-ին ընդունված և 1998 թվականի սեպտեմբերի 13-ից մինչև 2023 թվականի հունիսի 1-ն ուժի մեջ եղած «Ձենքի մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվում էր, որ **զենք** է հանդիսանում իր կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ ազդանշան արձակելու համար նախատեսված սարքը և առարկան, **հրազեն** է հանդիսանում վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին՝ նպատակաուղղված շարժում ստացած գնդակի միջոցով տարածության վրա գտնվող նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենքն, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են՝ փողը, փակադակը, թմբուկը, իրանը, փողի պահպանակը, իսկ **սառը զենքը** մարդու մկանային ուժի օգնությամբ, օբյեկտի հետ անմիջական շփման ժամանակ այն խոցելու համար նախատեսված զենքն է՝

¹1998 թվականի հուլիսի 3-ին ընդունված «Ձենքի մասին» ՀՀ օրենք

1.2. Նախկին օրենսգիրք

Վերաբերելի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետապնդման մարմինների կողմից գրեթե բոլոր այն ենթադրյալ հանցանքները, որոնք իրականացվել են որևէ գործիքի գործադրմամբ, որը դեպքի վայրից չի վերցվել, որակվել են խնդրո առարկա ծանրացնող հանգամանքով: Ընդ որում, հիմնականում խոսքը գնում է չնույնականացված գործիքների մասին (օրինակ՝ ծալովի դանակ) առանց որևէ լրացուցիչ փաստական տվյալների դրա պատրաստման կամ հարմարեցման վերաբերյալ: Բացի դրանից՝ ակններև է իրավակիրառ միտումը «նախապես հարմարեցված» եզրույթի տակ հասկանալ նաև համապատասխան գործիքը **նախապես վերցնելը**: Օրինակ, ԵԴ1/3076/01/24 քրեական գործով²⁰ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (այսուհետ՝ Դատարան) Ն. Շ.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելու մեջ վերջինիս կողմից կատարված այն արարքի համար, որ Ն. Շ.-ն վիճաբանել է անչափահասի Ա.-ի հետ, որի ընթացքում իր մոտ գտնվող, **մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայով՝ դանակով** երկու անգամ հարվածել է Ա.-ին՝ առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս: Սույն գործով հատկանշական են նախ այն, որ հանցագործության գործիքը չի հայտնաբերվել քննությամբ, իսկ այն նախապես հարմարեցված է համարվել բացառապես այն պատճառով, որ գործադրված անձն այն **վերցրել էր նախապես**: Նման մեկնաբանումը, ըստ իս, հիմնովին հակասում է թե՛ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ընդունված ծանրացնող հանգամանքի ներկա կարգավորման բառացի տեքստին, թե՛ էությանը: Ավելին, քրեական հետապնդման մարմինների քրեաիրավական գնահատականը և այն հաստատող Դատարանի դատավճիռը հակասում են նաև Վճռաբեկ դատարանի *Ռուստամ Շավալյանի* գործով արտահայտած դիր-

²⁰ Տե՛ս ԵԴ1/3076/01/24 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025 թվականի փետրվարի 21-ի դատավճիռը

քորոշմանը: Ավելորդ է ասել, որ ծանրացնող հանգամանքի նման մեկնաբանմամբ գործերը բազմաթիվ են²¹:

Մի շարք դեպքերում²² քրեական հետապնդման մարմինները քննությամբ չհայտնաբերված և չնույնականացված **դանակը per se** գնահատել են որպես մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկա:

Մեկ այլ դեպքում²³, քրեական հետապնդման մարմինների համար ծանրացնող հանգամանքի մեղսագրման, իսկ Դատարանի համար անձին մեղսագրված արարքը կատարած լինելու մեջ մեղավոր ճանաչելու համար բավարար է եղել ընդամենն այն, որ վնասը պատճառվել է սուր կտրող-ծակող գործիքով, որը ոչ միայն չի հայտնաբերվել քննությամբ, այլ որի անգամ տեսակը պարզված չի եղել (այսինքն չի բացառվում, որ վնասը կարող էր հասցված լինել ամենահասարակ կենցաղային առարկա հանդիսացող խոհանոցային դանակով): Հատկանշական է, որ տվյալ դեպքում անգամ անձին ներկայացված մեղադրանքը չի պարունակում որևէ նշում ենթադրյալ հանցանքի գործիքի զենք կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկա կամ միջոց հանդիսանալու մասին, թեև արարքը որակվել է այդ ծանրացնող հանգամանքով:

Պրակտիկան անմասն չի մնացել նաև այնպիսի դեպքերից²⁴, երբ հանցագործության գործիքն իրավակիրառի կողմից միաժամանակ գնահատվել է մարմնական վնասվածք պատճառելու համար և պատրաստված, և հարմարեցված: Մեկնաբանման նման **ապահով** տարբերակը, ըստ իս, հակադրվում է կարգավորման էությանը, որը հանգում է նրան, որ մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված կարող է լինել ոչ այդ նպատակով պատրաստված առարկան կամ միջոցը, եթե ենթարկվի համապատասխան փոփոխությունների: Մինչդեռ, մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված առարկան արդեն իսկ ստեղծման պահից հարմարեցված է մարմնական վնասվածք պատճառելու համար, ուստի այլևս չի կարող խոսք գնալ առանձին հարմարեցված լինելու մասին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի թիվ **ԵԴ1/1257/01/23** քրեական գործով դատավճիռը²⁵, որը խնդրո առարկա ծանրացնող հանգամանքի համապարփակ մեկնաբանման առաջին դատական օրինակներից է: Տվյալ գործով Ն. Ե.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով Հ. Հ.-ին մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ ձեռքերով և **իր հեղ նախապես վերցրած դանակով** հարվածներ է հասցնելու և վերջինիս առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Հիշյալ ակտով, Դատարանը, նախ իրավացիորեն արձանագրել է, որ քննարկվող հանցակազմի տեսանկյունից մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված հատկանիշները զենքին վերաբերելի չեն, այնուհետև, Դատարանն ընդգծել է, որ օրենսդրի կողմից վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի գործադրումը որպես հանցակազմի որակյալ հատկանիշ դիտարկելը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձն իր հանցավոր գործողություններն ավելի արդյունավետ կատարելու համար օգտագործում է նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկա, միջոց, որպիսի հանգամանքն իր հերթին վտանգավորության

²¹ Տե՛ս, ի թիվս այլնի, ԼԴ/0518/01/24, ԵԴ1/3428/01/24, ԵԴ1/3333/01/24, ԵԴ1/1357/01/25 քրեական գործերը

²² Տե՛ս, ի թիվս այլնի, ԵԴ1/3814/01/24, ԵԴ1/3942/01/24, ՍԴ3/0130/01/24, ԵԴ1/3265/01/24 քրեական գործերը

²³ Տե՛ս ԵԴ1/3808/01/24 քրեական գործը

²⁴ Տե՛ս ԵԴ1/3265/01/24 քրեական գործը

²⁵ Տե՛ս ԵԴ1/1257/01/23 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը

աստիճանով ավելի բարձր է բոլոր այն իրավիճակներից, երբ անձն իր հանցավոր գործողությունները կատարում է ոչ այդ նպատակով նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայով: Այլ խոսքով, ըստ Դատարանի՝ օրենսդիրը նշված ծանրացնող հանգամանքը նախատեսել է՝ առավելապես հաշվի առնելով նաև այն, թե հանցավորն ինչպիսի **նախապատրաստական աշխարհներ է ձեռնարկում** հանցանքը կատարելու համար, հակառակ պարագայում օրենսդիրն ուղղակիորեն կարող էր հրաժարվել և չգործածել «նախապես» եզրույթը, որն ըստ էության լրացուցիչ չափանիշ է սահմանում բոլոր այն իրավիճակների համար, երբ հանցավոր մտադրություններն իրագործվում են վնաս պատճառելու համար պիտանի առարկայի գործադրմամբ:

Վերոնշյալի առնչությամբ անհամաձայնություն հայտնելով Դատարանի և հետագայում, ըստ էության, նաև Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած համապատասխան դիրքորոշումներին՝ կրկին ցանկանում եմ ընդգծել, որ «նախապես» հատկանիշը վերաբերում է առարկայի կամ միջոցի պատրաստման կամ հարմարեցման ժամանակագրական սահմաններին և որևէ պարագայում չի խոսում նրա մասին, որ հենց հանցավորը պետք է հանցագործության գործիքի պատրաստման կամ հարմարեցման ձևով նախապատրաստական աշխատանքներ ձեռնարկի:

Զարգացնելով նախորդիվ արտահայտված դիրքորոշումները՝ Դատարանը սահմանել է, որ նախապես պատրաստված առարկայի ներքո պետք է ընկալվել այն իրերը, որոնք ստեղծվում են վնաս, վնասվածք պատճառելու նպատակով և արդյունքում իրենց կառուցվածքային միավորով ի զորու են նման վնասվածք պատճառել: Ընդ որում՝ այդ պայմաններում էական չէ՝ այն նախապես պատրաստված է եղել հանցավորի կողմից, թե հանցավորն արդեն իսկ մեկ այլ անձից ձեռք է բերել այն՝ իր հանցավոր նպատակն ի կատար ածելու շարժառիթից ելնելով: Ըստ Դատարանի, առարկան կամ միջոցը նախապես հարմարեցնելու հատկանիշի տակ պետք է հասկանալ այն իրավիճակները, երբ հանցավորը **փոխում է առարկայի կամ միջոցի ի սկզբանե ունեցած նպատակային նշանակությունը և այն հարմարեցնում է մարմնական վնասվածք պատճառելու համար**: Այսինքն՝ հարմարեցման տակ շատ ավելի պետք է հասկանալ առարկայի նպատակային նշանակության փոփոխությունը՝ կենցաղային կամ սպորտային նշանակությունից հանցավոր նպատակների ծառայեցնելը և այլն: Օրինակ՝ **խոհանոցային դանակը, որի նշանակությունը կենցաղային է, փոխում և հարմարեցնում (ծառայեցնում) է որևէ մեկին մարմնական վնասվածք պատճառելու համար կամ սպորտային մահակը հարմարեցվում (կամ հենց ինքն իրենով արդեն հարմար է) և ծառայեցվում է հանցավոր նպատակների համար**:

Դատարանի կողմից տրված նման մեկնաբանումը, ըստ իս, կրկին հիմնավոր չէ: Նախ, հարկ է նշել, որ **հարմարեցումը** ենթադրում է հանցավորի կողմից արդեն իսկ գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ որևէ ներգործության իրականացում, դրա ձևափոխում²⁶, ուստի որևէ առարկա կամ միջոց չի կարող հենց ինքն իրենով արդեն հարմար լինել և համարվել մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված՝ ելնելով լոկ այն փաստից, որ այն պիտանի է մարմնական վնասվածք պատճառելու համար: Հարմարեցման՝ գործիքի նպատակային նշանակության փոփոխության, Դատարանի դատողությունների առթիվ անհրաժեշտ է ընդգծել, որ օբյեկտիվ իրականությունում որևէ առարկայի՝ իր նպատակային նշանակությանը հակառակ օգտագործումը դեռևս չի փոխում վերջինիս

²⁶ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում

նպատակային նշանակությունը, և նման դեպքում խոսք չի կարող գնալ հարմարեցման մասին: Դատարանի արտահայտած դիրքորոշումը վկայում է «մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված» և «որպես զենք օգտագործվող» կոնցեպտների ասիմիլյացիայի մասին, քանի որ Դատարանի գնահատմամբ ինքնին որևէ առարկայի գործադրումը (ծառայեցումը) մարմնական վնասվածք պատճառելու համար (տվյալ առարկայի նպատակային նշանակությանը հակառակ) բավարար է առարկայի մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար, ինչը «որպես զենք օգտագործվող» չափանիշի դասական բնութագրումն է: Մինչդեռ, ներկա օրենսդրական կարգավորումների պարագայում զենք կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես չպատրաստված որևէ առարկա կամ միջոց չի կարող առաջացնել ծանրացնող հանգամանքը (համարվի մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված), եթե այն չենթարկվի մարմնական վնասվածք պատճառելի առավել հարմար դարձնող կառուցվածքային փոփոխությունների՝ անգամ եթե տվյալ գործիքը (օրինակ՝ սպորտային մահակը) ի սկզբանե հարմար էր (պիտանի էր) մարմնական վնասվածք պատճառելու համար:

Բացի դրանից՝ Դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ առարկայի կամ միջոցի նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հատկանիշը չպետք է հասկանալ որպես հանցավորի կողմից առարկայի կամ միջոցի հարմարեցումը կամ պատրաստումը հանցավոր արարքի կատարումից առաջ՝ հենց այդ հանցանքը կատարելու նպատակով: Այսինքն՝ օրենքով չի սահմանափակվում առարկայի կամ միջոցի հարմարեցումը կամ պատրաստումը հենց տվյալ հանցանքը կատարելու համար:

Հիմնավոր է թվում նաև Դատարանի այն դատողությունը, որ առարկան կամ միջոցը հարմարեցնելը կամ պատրաստելը պետք է ժամանակային առումով նախորդեն ոտնձգության կատարմանը, սակայն պարտադիր պայման չէ, որ այն նախապես պատրաստված կամ հարմարեցված լինի հենց այդ հանցանքը կատարելու համար: Դատարանը, ի հիմնավորումն նշվածի՝ բերում է այն օրինակը, որ հնարավոր են դեպքեր, երբ հիշյալ առարկան նախապես պատրաստված լինի, և անձի մոտ հանցանք կատարելու մտադրությունը դեռևս առկա չլինի, սակայն, երբ անձն այդ առարկան՝ նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքով պայմանավորված, վերցնում է իր մոտ մեկ այլ անձի մարմնական վնասվածք պատճառելու նպատակով, ապա այդ դեպքում քննարկվող ծանրացնող հատկանիշը ևս առկա է:

Այնուամենայնիվ, Դատարանը հաջորդիվ պնդում է, որ այն իրավիճակում, երբ կենցաղային օգտագործման համար հարմարեցված առարկան անձը նախապես վերցնում է իր մոտ՝ հանցավոր նպատակներով (մեկ այլ անձի հետ հաշիվներ պարզելու համար), ապա այդ դեպքում ևս խնդրո առարկա ծանրացնող հանգամանքն առկա է: Վերոգրյալով Դատարանը կիսում է իրավակիրառի այն մոտեցումը, որ նախապես վերցված առարկան ևս նախապես հարմարեցված է, սակայն պայմանով, որ այն վերցվել է մարմնական վնասվածք պատճառելու համար: Նշվածի առնչությամբ նորից անհրաժեշտ է նշել, որ առարկայի հարմարեցումը որևէ պարագայում չի կարող առկա լինել՝ սուս գործիքը նախապես վերցրած լինելու հաշվառմամբ:

Անգամ Վճռաբեկ դատարանի հարմարեցման վերաբերյալ արտահայտված դիրքորոշման բացակայության պայմաններում դժվար է նման տեսակետն ընդունելի համարել այն պատճառով, որ եթե ցանկացած կենցաղային նշանակության առարկա մարմնական վնասվածք հասցնելու նպատակով նախապես վերցնելը բավարար լիներ ծանրացնող հանգամանքի առկայության համար, ապա առարկայազուրկ կլինեին «պատրաստված» եզրույթի ներա-

ռումն իրավադրույթում: Վերոգրյալի էությունը կայանում է նրանում, որ ցանկացած նպատակով պատրաստված յուրաքանչյուր առարկայի գործադրումը, եթե այն նախապես վերցվում է վնասվածք պատճառելու համար, ինքնին կառաջացնի ծանրացնող հանգամանքը հարմարեցված հատկանիշի ուժով, քանի որ «պատրաստված»-ը նույնպես պետք է նախապես վերցնել, ուստի, ինքնանպատակ է լրացուցիչ «պատրաստված» հասկացության նախատեսումը, մինչդեռ իրավական կարգավորումները չպետք է ընկալվեն և մեկնաբանվեն տարանջատված, այլ իրավադրույթը պետք է հաշվի առնվի ամբողջությամբ և մեկնաբանվի համակարգային համակցության մեջ, ինչը միայն թույլ կտա պատշաճ վերլուծել օրենսդրի կամքը և բացահայտել կարգավորման էությունը:

Ամփոփելով ծանրացնող հանգամանքի կիրառման պրակտիկայի արդյունքները՝ գտնում են, որ դրույթի կիրառման դեպքերի գերակշիռ մասը վկայում է իրավակիրառի իներցիայով գործելու և օրենսդրական փոփոխությունների հանդեպ ունեցած պահպանողականության մասին, ինչի արդյունքում անտեսվել են իրավադրույթի էական հատկանիշները և այն գերազանցապես կիրառվել է ծանրացնող հանգամանքի Նախկին օրենսգրքում առկա շարադրանքի տրամաբանությամբ:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանգում են հետևյալին.

1. ՀՀ քրեական նոր օրենսգրքով էապես նեղացվել է հանցագործության գործիքի վերաբերյալ հիմնական ծանրացնող հանգամանքի կիրառելիության շրջանակը:

2. Քննարկված որակյալ հատկանիշի առկայության համար պարտադիր է, որ համապատասխան առարկան կամ միջոցը պատրաստված կամ հարմարեցված լինի անմիջապես մարմնական վնասվածք պատճառելու նպատակով կամ լինի զենք՝ «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի իմաստով:

3. Ծանրացնող հանգամանքի առկայության համար պարտադիր չէ, որ առարկան կամ միջոցը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված լինի այն գործադրողի կողմից: Առարկան կամ միջոցը կարող է պատրաստված կամ հարմարեցված լինել նաև այլ անձի կողմից:

4. Դեպքի վայրից վերցված առարկայի գործադրումը կարող է առաջացնել ծանրացնող հանգամանքը, եթե այն հանդիսանում է զենք կամ եթե հարմարեցվել կամ պատրաստվել է մարմնական վնասվածք պատճառելու համար մինչև հանցանքը սկսելը:

5. Ձենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկայի կամ միջոցի գործադրումը չի ներառում գործադրման սպառնալիքը: Այն բոլոր հանցակազմերի դեպքում, որոնցով ծանրացնող հանգամանքը ներառում է բացառապես համապատասխան գործիքի գործադրումը, եթե հանցավորի կողմից զենքը կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված առարկան կամ միջոցն օգտագործվել են ոչ թե փաստացի գործադրման կամ դրա փորձի, այլ սպառնալիք հասցնելու համար, ծանրացնող հանգամանքը չի կարող առկա լինել:

6. Առկա է օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն, որը կամ պետք է արտահայտվի համապատասխան հանցակազմերի ծանրացնող հանգամանքում առարկայի «գործադրումից» բացի նաև «գործադրման սպառնալիք» եզրույթի լրացմամբ, կամ խուլիգանության և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ հանցակազմերի ծանրացնող հանգամանքից «գործադրման սպառնալիք» հասկացության վերացմամբ:

7. Ծանրացնող հանգամանքը սահմանող իրավադրույթը քրեական արդարադատության մարմինների կողմից մեծապես կիրառվել է նախորդ իրավակարգավորումների հանդեպ դրսևորած պահպանողականությամբ՝ առանց հավուր պատշաճի գնահատելու օրենսդրական՝ ծանրացնող հանգամանքի էությունը փոփոխող նորամուծությունները, և առաջնորդվելով ծանրացնող հանգամանքի Նախկին օրենսգրքում առկա կարգավորման տրամաբանությամբ:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված մի շարք հանցակազմերի որակյալ հատկանիշ հանդիսացող նոր ծանրացնող հանգամանքին՝ արարքը զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարելուն: Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում խնդրո առարկա հարցի վերաբերյալ հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայությունը, օրենքի ոչ միատեսակ կիրառության բազմաթիվ դեպքերը, ինչպես նաև իրավադրույթի համապարփակ մեկնաբանության անհրաժեշտությունը, որը հենց հոդվածի գլխավոր նպատակն է: Աշխատանքում փորձ է արվել համապարփակ մեկնաբանել իրավադրույթը՝ առանձին ուշադրություն դարձնելով խնդրահարույց և մասնագետների տարակարծությունն առաջացրած հարցերին: Մասնավորապես առաջ են քաշվել հետևյալ հարցադրումները. որո՞նք են առարկան կամ միջոցը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված կամ պատրաստված դիտարկելու չափանիշները, ի՞նչ նպատակով պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի ծանրացնող հանգամանքի առկայության համար, ու՞մ կողմից պետք է առարկան կամ միջոցը հարմարեցված կամ պատրաստված լինի, կարո՞ղ է արդյոք դեպքի վայրից վերցված առարկայի գործադրումն առաջացնել ծանրացնող հանգամանքը: Բացի այդ, քննարկման առարկա են դարձվել հիշատակված ծանրացնող հանգամանքի կիրառման պրակտիկայի արդյունքները:

Annotation. The article is dedicated to the new aggravating circumstance, which is a qualitative characteristic of a number of crimes provided for by the new Criminal Code of the Republic of Armenia adopted on May 5, 2021, namely, committing the act with the use of a weapon or an object or means prepared or adapted in advance to cause bodily harm. The relevance of the chosen topic is evidenced by the existence of contradictory legal practice on the issue in question, numerous cases of non-uniform application of the law, as well as the need for a comprehensive interpretation of the legislation, which is the main goal of the article. The work attempts to comprehensively interpret the legislation, paying special attention to problematic issues and ones that have caused disagreement among specialists. In particular, the following questions are raised: What are the criteria for considering whether an object or means is prepared or adapted in advance to cause bodily harm? For what purpose should the object or means be adapted or prepared for the presence of an aggravating circumstance? By whom should the object or means be adapted or prepared? Can the use of an object taken from the scene of the crime cause an aggravating circumstance? In addition, the results of the practice of applying the aforementioned aggravating circumstance were discussed.

Аннотация. Статья посвящена новому отягчающему обстоятельству, которое является качественной характеристикой ряда преступлений, предусмотренных новым Уголовным кодексом Республики Армения, принятым 5 мая 2021 г., а именно совершение деяния с применением оружия, или предмета, или средства, заранее подготовленного или приспособленного для причинения телесных повреждений. Актуальность выбранной темы подтверждается наличием противоречивой юридической практики по рассматриваемому вопросу, многочисленными случаями неоднородного применения закона, а также необходимостью всестороннего толкования законодательства, что и является основной целью статьи. В работе предпринята попытка всестороннего толкования законодательства, при этом особое внимание уделено проблемным

вопросам и вопросам, вызвавшим разногласия среди специалистов. В частности, поднимаются следующие вопросы: «Каковы критерии рассмотрения того, является ли предмет или средство заранее приспособленным или подготовленным для причинения телесных повреждений?»; «С какой целью должен быть приспособлен или подготовлен предмет или средство для наличияотягчающего обстоятельства?»; «Кем должен быть приспособлен или подготовлен предмет или средство?»; «Может ли использование предмета, взятого с места преступления, стать отягчающим обстоятельством?». Кроме того, обсуждались результаты практики применения указанного отягчающего обстоятельства.

Բանալի բաներ – զենք, որպես զենք օգտագործվող, նախապես հարմարեցված, նախապես պատրաստված, առարկա, միջոց, ծանրացնող հանգամանք:

Keywords: *weapon, used as a weapon, adapted in advance, prepared in advance, object, means, aggravating circumstance.*

Ключевые слова: *оружие, использование в качестве оружия, заранее приспособленный, заранее изготовленный, предмет, средство, отягчающее обстоятельство.*

Օգտագործված գրականության ցանկ

1. 1998 թվականի հուլիսի 3-ին ընդունված «Ձենքի մասին» ՀՀ օրենք:
2. 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենք:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի Սերյոժա Հովակիմյանի վերաբերյալ գործով 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-125/07 որոշում:
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի Ազատ Խլղաթյանի և Աշոտ Աթաբեկյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՏԴ/0085/01/14 որոշում:
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի Հայկ Գալստյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0084/01/15 որոշում:
6. ՀՀ Վճռաբեկ դատարանի Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում:
7. ՀՀ Վճռաբեկ դատարանի Սարգիս Գրիգորյանի վերաբերյալ գործով 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ ՀԿԴ/0054/01/22 որոշում:
8. ԵԴ/3076/01/24 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025 թվականի փետրվարի 21-ի դատավճիռ:
9. ԵԴ/1257/01/23 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռ:
10. ԼԴ/0518/01/24, ԵԴ/3428/01/24, ԵԴ/3333/01/24, ԵԴ/1357/01/25, ԵԴ/3814/01/24, ԵԴ/3942/01/24, ՍԴ/3/0130/01/24, ԵԴ/3265/01/24, ԵԴ/3808/01/24 քրեական գործեր:
11. ԵԴ/1427/01/22, ԵԴ/1397/01/22, ԱԴԴ/0256/01/22, ԿԴ/0190/01/22, ԼԴ/2/0023/01/22, ԵԴ/0729/01/22, ԱԿԴ/0070/01/22, ԵԴ/0126/01/22, ԱԿԴ/2/0115/01/21, ՇԴ/0246/01/21, ԵԴ/1792/01/21, ԵԴ/1740/01/21, ԵԴ/1516/01/21, ԵԴ/1446/01/21, ԵԴ/1399/01/21, ԼԴ/0129/01/21, ԵԴ/1255/01/21, ՇԴ/0153/01/21, ԱԿԴ/0086/01/21, ԵԴ/1080/01/21, ՇԴ/0112/01/21, ԱԿԴ/4/0027/01/21, ԱԴԴ/0115/01/21, ԱԿԴ/4/0019/01/21, ԵԴ/0670/01/21, ԵԴ/0591/01/21, ԱԿԴ/1/0025/01/22, ԵԴ/0625/01/22, ԵԴ/0374/01/22, ԿԴ/0075/01/22, ԵԴ/0283/01/22, ԵԴ/0133/01/22, ԵԴ/0193/01/22, ՍԴ/1/0012/01/22, ՍԴ/1/0013/01/22, ԱԿԴ/2/0043/01/22, ԵԴ/0589/01/22, ՍԴ/0046/01/22, ՇԴ/0055/01/22, ԳԴ/0011/01/22, ԱԿԴ/1/0032/01/22, ԱԴԴ/0080/01/22, ԼԴ/2/0023/01/22, ԵԴ/1112/01/22, ԼԴ/1/0008/01/22, ԼԴ/2/0049/01/22, ԵԴ/1251/01/22 քրեական գործեր:

12. Դ. Ա. Թումայան, Կ. Հ. Հովհաննիսյան, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս», Ոստումնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-367-0, «Լիմուշ» հրատ., Երևան, 2022թ., 914 էջ:

13. Դ. Ա. Թումայան, Գ. Թ. Գրիգորյան, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս երեք հատորներում», Հատոր առաջին, Ոստումնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-400-4, «Լիմուշ» հրատ., Երևան, 2025թ., 768 էջ:

14. Ս. Վ. Առաքելյան, Ա. Վ. Բարսեղյան, «Մարդու դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-7-6, Արդարադատության ակադեմիա, 2023թ., 444 էջ:

15. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, 2022 թվական:

<https://moj.am/storage/uploads/%D5%94%D5%90%D4%B5%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D5%86%D5%88%D5%90%20%D5%95%D5%90%D4%B5%D5%86%D5%8D%D4%B3%D5%90%D5%94%D4%BB%20%D5%88%D5%92%D5%82%D4%B5%D5%91%D5%88%D5%92%D5%85%D5%91.pdf> (մուտք 06/08/2025)

16. Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդում: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4498337360.pdf (մուտք 06/08/2025)

Ազգաբիդիս Մ. – ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլիասցե՝ marcazdaridis@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 11.08.2025 թ., տրվել է գրախոսության 11.08.2025 թ., երաշխավորվել է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, ի.գ.թ., դոցենտ Դ. Թումայանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-125>

ՄԵԼԻԿ ՄԵԼԻԿՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության
գլխավոր մասնագետի պաշտոնակատար,
իրավաբանական գիտությունների թեկնածու

MELIK MELIKYAN

*Acting Chief Specialist of the Legal Expert Examinations Service,
Staff of the Court of Cassation of the Republic of Armenia,
Candidate of Legal Sciences*

МЕЛИК МЕЛИКЯН

*Исполняющий обязанности главного специалиста
Службы юридических экспертиз
Аппарата Кассационного суда РА,
кандидат юридических наук*

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ

MANIFESTATIONS OF CRIME PROVOCATION UNDER A RANGE OF CIRCUMSTANCES EXCLUDING CRIMINAL LIABILITY

ПРОЯВЛЕНИЯ ПРОВОКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ В РЯДЕ ОБСТОЯТЕЛЬСТВ, ИСКЛЮЧАЮЩИХ УГОЛОВНУЮ ОТВЕТСТВЕННОСТЬ

Ներածություն

Քրեական իրավունքի գիտությունում և իրավակիրառ պրակտիկայում արդիական են մնում հանցագործության պրովոկացիային առնչվող տարբեր հիմնահարցեր, որոնց շարքում նաև վիճահարույց են քրեական իրավունքի մի շարք ինստիտուտներում պրովոկացիայի առանձին դրսևորումները:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի նորամուծություններից էր նաև պրովոկացիայի վերաբերյալ դրույթների նախատեսումը, և այդ երևույթի «նորամուտը» հայրենական իրավունքում, որքանով հետաքրքրություն է առաջացնում ուսումնասիրման և բացահայտման տեսանկյունից, հավասարապես էլ հրամայական է դարձնում արդեն առկա

փորձով բացառել այն իրավիճակները, որոնք կարող են վտանգել իրավական պրակտիկայի զարգացման ճշգրտությանը:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում ներառված վերոհիշյալ դրույթները դրսևորված են ինչպես ուղղակի՝ պրովոկացիայի վերաբերյալ նշումով, այնպես էլ անուղղակի՝ պրովոկացիայի վերաբերյալ տերմինաբանական գործածություն չունեցող, սակայն դրա էությունից բխող ձևերով:

ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում «սադրում» բառը հիշատակվում է անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության, համապատասխանաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 7-րդ և 34-րդ հոդվածի 6-րդ մասերում, ինչը կարելի է ներառել «Պրովոկացիայի վերաբերյալ ուղղակի կարգավորումների» խմբում:

«Պրովոկացիայի վերաբերյալ անուղղակի կարգավորումների» խմբին կարելի է դասել ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը, որում գործածված չէ հիշյալ տերմինը, սակայն դրա բովանդակային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշյալ դրույթն էապես հարաբերակցվում է նախորդ պարբերությունում վկայակոչված կարգավորումների հետ:

Հոդվածի հետազոտության նպատակներն են՝

1) ծայրահեղ անհրաժեշտության, ինչպես նաև անհաղթահարելի ուժի, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի վերաբերյալ կարգավորումներում պրովոկացիայի վերաբերյալ դրսևորումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը¹,

2) նշված իրավական կառուցակարգերում պրովոկացիայի առանձնահատկություններով պայմանավորված՝ հնարավոր խնդիրների վերհանումը:

Թվարկված նպատակներին հասնելու ուղղությամբ սույն գիտական հոդվածում խնդիր է դրվել՝

- ցույց տալ մի կողմից պրովոկացիայի, մյուս կողմից՝ ծայրահեղ անհրաժեշտության, ինչպես նաև անհաղթահարելի ուժի, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ինստիտուտների՝ հարաբերակցման առանձնահատկությունները,

- հետազոտության արդյունքում որոշակի խնդիրներ վերհանելու դեպքում առաջարկել համապատասխան լուծումներ:

Վերոգրյալն էլ հենց պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Կատարվող աշխատանքի համար մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գիտական ճանաչողությանը հայտնի՝ համեմատաիրավական, համակարգակառուցվածքային, անալիզ, սինթեզ և այլ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

Հանցագործության պրովոկացիան ՀՀ գործող քրեական օրենսդրությունում հանդիսանում է նոր ինստիտուտ, և չնայած դրա վերաբերյալ առկա փորձի, այնուամենայնիվ անգամ ներպետական իրավունքից դուրս, չունի միանշանակ ընդունելի համընդհանուր բնորոշում:

Ամեն դեպքում, սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում դրա առանձին դրսևորումների, պատմական ակնարկների, դոկտրինալ մեկնաբանությունների, արտասահմանյան երկրների փորձի և դատական պրակտիկայում ձևավորված կայուն նախադեպային իրավունքում դրա վերաբերյալ բնորոշումների համապարփակ վերլուծությամբ հնարավոր է առանձ-

¹ Անհրաժեշտ պաշտպանության շրջանակում հանցագործության պրովոկացիային անդրադարձ արդեն իսկ կատարվել է. տես Մ. Մելիքյան, Հանցագործության պրովոկացիայի դրսևորումներն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան Տեղեկագիր, 3 (111), 2023 էջեր 213-224:

նացնել քննարկվող երևույթի հետևյալ բաղադրիչ տարրերը: Մասնավորապես, հանցագործության պրովոկացիան՝

- ներգործության ձև է, որը գործադրվում է պրովոկատորի կողմից՝ ուղղված մեկ այլ անձի կամ անձանց դեմ,

- միջոց է անձի կողմից հանցագործություն կատարելու վճռականություն ձևավորելու և դրա կատարմանը մղելու,

- քողարկված բնույթի մեթոդների ամբողջություն է, որի բուն նպատակը մյուս անձի համար անհայտ է և միտված է այդ անձի համար վնասաբեր հետևանքներ առաջացնելուն²:

Այսպիսով, հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում կարելի է բնորոշել անձի նկատմամբ գործադրվող ներգործություն, որը միտված է քողարկված մեթոդների միջոցով վերջինիս հանցագործության մղելուն՝ նրա նկատմամբ քրեական պատասխանատվության հիմքեր ստեղծելու կամ այլ վնասակար հետևանքներ առաջացնելու նպատակով³:

Հարկ է նաև նշել, որ չնայած սույն աշխատանքում գործածվում է «պրովոկացիա» տերմինը, սակայն ներպետական օրենսդրությամբ այն ամրագրված է «սադրանք» եզրույթով:

Տերմինաբանական շփոթից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է ընդգծել, որ դրանց բառիմաստային ընդհանրությունից զատ, քրեական իրավունքի գիտությունում, ևս, տվյալ տերմինները նույնացվել են⁴:

Այս մասով, պետք է նկատել, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում և ինչու ոչ՝ ընդհանրապես՝ տեսությունում նույն իմաստն արտահայտող, սակայն տարբեր տերմինների օգտագործումը գործնականորեն նպատակահարմար չէ, ինչը բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանությունից, որի համաձայն՝ նույն նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացության կամ տերմինի բովանդակությունը տարբեր իմաստներով կրկնվելու դեպքում կիրառվում է հասկացության կամ տերմինի այն բովանդակությունը, որը բխում է տվյալ իրավական ակտի էությունից կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի սկզբունքներից:

Այս պարագայում առավել ճշգրիտ է թվում հենց «պրովոկացիա» տերմինի գործածումը՝ ելնելով նաև իրավունքի մի շարք աղբյուրներում, որոնց թվում՝ միջազգային հանրաճանաչ փաստաթղթերում և դրանց պաշտոնական՝ հայերեն թարգմանություններում⁵, ինչպես նաև ներպետական իրավունքում⁶ առավել հաճախ հանդիպող եզրութաբանությունից:

Առաջ անցնելով և անդրադառնալով ծայրահեղ անհրաժեշտության և հանցագործության պրովոկացիայի հարաբերակցմանը՝ նախ պետք է ցույց տալ ծայրահեղ անհրաժեշտության էությունը, այնքանով, որքանով դա անհրաժեշտ կլինի սույն աշխատանքում դրված խնդիրների լուծման համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ տվյալ անձի կամ այլ անձանց

² Այս մասով, մանրամասն տես *Մ. Մելիքյան*, «Հանցագործության պրովոկացիայի բնորոշումը քրեական իրավունքում», Օրենքի պատվար, N 15, 2023, էջեր 88-100:

³ Տես նույն տեղում:

⁴ Տես *Ա. Գաբրուլյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան*, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջ 78:

⁵ Ի թիվս այլնի, տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Papayan v. Armenia* գործով 2021 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 53166/10, կետեր 80 և 88:

⁶ Տես «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը:

կյանքին, առողջությանը, իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե տվյալ իրադրությունում այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցում:

Նույն հոդվածի 6-րդ հոդվածի համաձայն՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակը բացակայում է, եթե տեղի է ունեցել ծայրահեղ անհրաժեշտության սադրում, այսինքն՝ երբ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով անձն իր արարքով վտանգ է ստեղծել օրենքով պաշտպանվող այլ շահերի համար, այնուհետև վնաս պատճառել օրենքով պաշտպանվող շահերին՝ իբրև թե ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գտնվելով:

Ստացվում է, որ ծայրահեղ անհրաժեշտության պարագայում մրցակցության մեջ են մտնում քրեական օրենքով պահպանվող բարիքները, և հասցվող վտանգի «լեգիտիմացումը» կայանում է առավել «ցածր նշանակության» բարիքին վնաս հասցնելու միջոցով համեմատաբար առավել արժեքավոր բարիքի պաշտպանությունը:

Արդյունքում ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակի առանձին բաղադրիչները զատելով՝ կարելի է առանձնացնել դրան առանձնահատուկ հետևյալ պայմանները՝

- 1) օրինական շահերին անմիջականորեն սպառնացող վտանգի առկայությունը,
- 2) տվյալ վտանգը այլ միջոցներով վերացնելու անհնարինությունը,
- 3) «Մրցակցող բարիքների» միջև «ճիշտ ընտրության կատարումը» և կանխված վնասի համեմատությամբ հավասար կամ ավելի մեծ վնաս չհասցնելը:

Հենց այս նկատառումներով պայմանավորված է, որ հատկապես՝ օրենքով պահպանվող հարաբերության վնասումը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում քողարկելու դեպքերը բացառելու նպատակով ուղղակիորեն նախատեսվեց ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի 6-րդ մասում ներկայացված պայմանը, որում սակայն, ինչպես նշվեց դրույթի մեջբերմամբ, ամրագրում է պրովոկացիայի, կամ ինչպես տառացիորեն նշվել է՝ «սադրանքի», բացակայության պայմանը, ինչն էլ հարաբերակցելով պրովոկացիայի էության և դրա բնորոշման վերաբերյալ՝ սույն աշխատանքով արդեն ցույց տրված դասական ընկալումների հետ, հարց է առաջացնում առ այն, թե որքանով է համատեղելի պրովոկացիայի դրսևորումը ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

Բարձրացված հարցի պատասխանը գտնելու համար նպատակահարմար կլինի նախևառաջ համեմատականներ անցկացնել անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության միջև, որը պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտ պաշտպանության պարագայում, ևս, ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով պրովոկացիան հանդիսանում է քրեական պատասխանատվությունը բացառող տվյալ հանգամանքի բացակայության պայման:

Տեսությամբ առանձնացվում են անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության տարբերակման հետևյալ չափանիշները.

- **Վնասի համաչափություն:** Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում վնասը պետք է լինի ավելի նվազ, քան կանխված վնասը, ինչպիսի պայմանն անհրաժեշտ պաշտպանության պարագայում բացակայում է:

- **Վտանգի աղբյուր:** Անհրաժեշտ պաշտպանության դեպքում վտանգի աղբյուրը միայն անձի ունեցվածքում է, մինչդեռ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում այն կարող է առաջանալ բազմաթիվ պատճառներով:

- **Պատճառված վնասի հատուցումը:** Անհրաժեշտ պաշտպանության իրավիճակում վնասը ենթակա չէ հատուցման, մինչդեռ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում վնասը ենթա-

կա է հատուցման այն անձի հաշվին, որի շահերից ելնելով են ձեռնարկվել գործողությունները⁷,

- **Վտանգը կանխելու համար վնաս պատճառելու փոխարեն այլ միջոցների դիմելու հնարավորությունները**: Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ հակաիրավական ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ իրավասու մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, իսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում չկա այլընտրանք, քան վնաս պատճառելու միջոցով վտանգը կանխելը (եթե կան վտանգը վերացնելու այլ եղանակներ՝ առանց վնաս պատճառելու, վնաս պատճառելն անընդունելի է)⁸:

Բացի դրանից՝ ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության կարևոր տարբերակիչ է հանդիսանում այն հանգամանքը, որ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում սպառնացող վտանգը կանխվում է ոչ թե ոտնձգողին, այլ քրեական օրենքով պահպանվող այլ բարիքի վնաս հասցնելու միջոցով⁹:

Այսպիսով, անհրաժեշտ է փաստել, որ պրովոկացիան՝ հանդիսանալով քողարկված բնույթի մեթոդների ամբողջությամբ ներգործության ձև, որը գործադրվում է պրովոկատորի կողմից՝ ուղղված մեկ այլ անձի կամ անձանց դեմ՝ միտված լինելով վերջինիս քրեորեն հակաիրավական ոտնձգության կատարմանը մղելու, անհամատեղելի է ծայրահեղ անհրաժեշտության հանգամանքի հետ:

Մասնավորապես, ծայրահեղ անհրաժեշտության շրջանակում պրովոկացիայի ներդրումն ու դրան տրված մեկնաբանությունը վկայում են այն մասին, որ պրովոկացիան կարող է լինել առանց որևէ ներգործության, այլ ընդամենը համապատասխան սուբյեկտի կողմից օրենքով պաշտպանվող այլ շահերի համար վտանգ ստեղծելու, այնուհետև պաշտպանվող շահերին վնաս պատճառելու եղանակով, սեփական նախաձեռնությամբ առանց կողմնակի անձի ազդեցության, ինչը տարամերժ է պրովոկացիայի ոգուն և բովանդակությանը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ներկայացված ինստիտուտների վերաբերյալ փորձ ունեցող երկրներում, ևս ընտրված է նույն մոտեցումը:

Իսպանիայի քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված է, որ քրեական պատասխանատվության ենթակա չէ նա, ով գործում անհրաժեշտ պաշտպանության վիճակում և նույն մասի ներքո ամրագրված է, որ այդ կարգավորման գործադրելիության պայման է պրովոկացիայի բացակայությունը¹⁰:

Մինչդեռ նույն հոդվածի 5-րդ մասով ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակը ներկայացվում է հետևյալ կերպ.

«Քրեական պաշտպանատվության ենթակա չէ այն անձը, ով գործել է սովորական իրավիճակից բխող անհրաժեշտության վիճակում և իրեն կամ ուրիշներին վնաս հասցնելուց խուսափելու»

⁷ Տե՛ս *Д. С. Бакулина*, Понятие необходимой обороны и ее отличие от крайней необходимости // Поколение будущего: взгляд молодых ученых – 2018. Сборник научных статей 6-й, Международной молодежной научной конференции: в 4 томах. 2018, էջեր 39-41:

⁸ Տե՛ս *Степанян Е.К.*, «К вопросу об институте необходимой обороны в уголовном праве» // Аллея науки. 2018, Т. 2. №6 (22), էջեր 790-795:

⁹ Տե՛ս *Е.М. Глушкова*, «Понятия «крайняя необходимость» и «превышение пределов крайней необходимости», Журнал «Гуманитарные, социально-экономические и общественные науки», № 347, էջեր 101-102, *Кальченко Н.В.*, «Крайняя необходимость в уголовном законодательстве Российской Федерации: Некоторые вопросы теории, Труды Академии МВД Республики Таджикистан» № 3 (55). 2022, էջեր 25-26:

¹⁰ Տե՛ս https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal_Code_2016.pdf (հղման վերջին մուտք՝ 15.10.2025թ.):

լու համար, վնաս է պատճառել ուրիշի օրենքով պաշտպանված շահին, եթե՝

1) Պատճառված վնասը չի գերազանցում կանխարգելվող վնասը.

2) Անհրաժեշտության իրավիճակը դիտարկելիս չի առաջացրել տվյալ անձը.

3) Անհրաժեշտության մեջ գտնվող անձը իր պաշտոնի կամ գործունեության բերումով պարտավոր չէր զոհաբերել իրեն»¹¹:

Ստացվում է, որ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում իսպանացի օրենսդիրը՝ նույն հոդվածի պայմաններում նախատեսելով հիշյալ իրավիճակները մի դեպքում նախատեսել, մյուս դեպքում խուսափել է պրովոկացիայի պայմանի և հետևապես այդ տերմինի գործածումից, ինչն ըստ էության կարելի է համարել ոչ թե տեխնիկական այլ բովանդակային մոտեցում:

Հարկ է նշել, որ նույնակերպ են կարգավորված նաև Արգենտինայի (34-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասեր¹²), Էկվադորի (30-րդ և 33-րդ հոդվածներ¹³), Ուգանդայի (37-րդ և 38-րդ հոդվածներ¹⁴) քրեական օրենսգրքերում համանման կարգավորումները:

Ի մի բերելով վերը կատարված հետազոտությունը՝ կարելի է արձանագրել, որ թեև արդարացված է ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրավակարգավորման նախատեսումը, որն իրենով արգելք է հանդիսանում բոլոր այն դեպքերի համար, երբ անձն իր հակաիրավական արարքը քղարկում է քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի տակ, սակայն միաժամանակ պետք է փաստել, որ այդ պարագայում պրովոկացիայի մասին խոսք գնալ չի կարող, քանի որ դրանք իրենց առանձնահատկություններով անհամատեղելի են միմյանց հետ:

Կատարված հետազոտության լույսի ներքո դիտարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումն այն մասով, որ անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից տվյալ իրավակարգավորման ուժով, եթե մեկ ուրիշին դրդել է իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրել՝ հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնելու համար, ի տարբերություն ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակի, լիովին տեղավորվում է պրովոկացիայի բովանդակության մեջ:

Այսպես, ներկայացված իրավիճակում առկա է ինչպես քղարկված ներգործությունը, այնպես էլ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելուն «օրինական տեսք հաղորդելու» բաղադրիչները:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով քննարկվող կարգավորման՝ անհաղթահարելի ուժի մասով դրույթին, ապա ինչպես ծայրահեղ անհրաժեշտության պարագայում, այն անհամատեղելի է պրովոկացիայի էության և բովանդակության հետ, քանի որ պրովոկացիայի բաղկացուցիչ մաս կազմող տարրերը, որոնք ներկայացվեցին նաև նախորդ պարբերությամբ, բացակայում են:

Հատկանշական է, որ «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցում», ևս այս մասով կատարվել է անդրադարձ և նշվել, որ ներկայացված դրույթով, ըստ էության, խոսքն իրավիճակի

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս <http://observatoriolegislativocele.com/en/Criminal-Code-of-the-Argentine-Republic-Law-11179/> (հղման վերջին մուտք՝ 29.09.2023թ.):

¹³ Տե՛ս <https://www.global-regulation.com/translation/ecuador/3349985/comprehensive-criminal-code.html> (հղման վերջին մուտք՝ 15.10.2025թ.):

¹⁴ Տե՛ս <https://lex.uz/mobileact/111457> (հղման վերջին մուտք՝ 15.10.2025թ.):

պրովոկացիայի մասին է և հիշյալ նորմով նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը կոչված է կանխելու քրեական պատասխանատվությունից ազատելու նշված հանգամանքի կիրառման հնարավոր չարաշահումներն այն դեպքերում, երբ անձն ինքն է ստեղծում դրա կիրառման համար «իրավաչափ» իրավիճակ, ինչը, սակայն, օրենսդրական մակարդակով չի ամրագրվել¹⁵, ինչպիսի մեկնաբանումը, սակայն ստացվում է, որ տրվել է Ա անհաղթահարելի ուժը, Ա ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի մասով, մինչդեռ սույն հետազոտության շրջանակներում արձանագրվածը կարող է վերաբերել միայն երկրորդ պայմանին:

Եզրակացություն

1) Ամբողջացնելով աշխատանքի արդյունքները՝ արձանագրել ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի 6-րդ մասում առկա է օրենսդրական լրամշակում կատարելու անհրաժեշտություն, քանի որ պրովոկացիայի վերաբերյալ պայմանի նախատեսումը համատեղելի չէ ծայրահեղ անհրաժեշտության բովանդակային տարրերի հետ, **ուստի այդ մասով առաջարկվում է կամ հանել «սադրանք» բառը կամ այն փոխարինել իմիտացիա կամ քողարկում բառերով:**

2) ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասում՝ իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրելու մասով ավելացնել պրովոկացիայի պայմանը.

«4. Անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով նախատեսված հիմքով, եթե օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով ինքն է ստեղծել անհաղթահարելի ուժ՝ հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն այդ հիմքով արդարացնելու համար կամ թույլ է տվել իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրելու պրովոկացիա՝ հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն օրվալ հանգամանքի ազդեցությամբ արդարացնելու համար»:

Ամփոփագիր: Հանցագործության պրովոկացիան լինելով բազմաշերտ և բարդ երևույթ՝ հաճախ տեսական և գործնական տարբեր ասպեկտներում առաջ է բերում իրարամերժ մոտեցումներ և տարբեր խնդիրներ:

Հատկանշական է, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ գործող ՀՀ քրեական օրենսգրքում ներառվեցին մինչ այդ հայրենական իրավունքում նախադեպը չունեցող կարգավորումներ, որոնցով պայմանավորված պահանջվում է խորքային ուսումնասիրություններ կատարել քննարկվող երևույթի վերաբերյալ և ապահովել դրա գործնականում անշեղ կիրառման համար անհրաժեշտ որոշակիությունը:

Հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ նորամուծությունները նախատեսվեցին, ինչպես քրեական իրավունքի Ընդհանուր, այնպես էլ Հատուկ մասերում, որի թվում նաև քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակում, ինչն էլ հենց հանդիսացել է սույն հետազոտության առարկան:

Այդ համատեքստում հանցագործության պրովոկացիայի իրավական կարգավորման վերաբերյալ նախատեսված դրույթների կատարելագործման նպատակով՝ զուգակցելով իրավունքի տարբեր աղբյուրներում առկա մոտեցումները՝ անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել այն հնարավոր բացերը, որոնք առկա

¹⁵ Տե՛ս Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջեր 89-90:

են դրանցում, և դրանց շուրջ առաջ քաշել գիտականորեն հիմնավորված թեզեր և առաջարկներ, որոնք էլ հենց կազմել են աշխատանքի նպատակները:

Անցկացված հետազոտության արդյունքում հնարավոր է եղել հասնել վերը նշյալ նպատակների կենսագործմանը և ցույց այն խնդիրները, որոնք առկա են եղել այդ շրջանակում: Զուգահեռաբար ներկայացվել են նաև այդ խնդիրների լուծմանն ուղղված օրենսդրական լրամշակումներ կատարելու համապատասխան առաջարկներ, որոնք իրենց նպաստը կարող են ունենալ այդ մասով իրավունքի հետագա զարգացմանը:

Annotation. Being a multilayered and complex phenomenon, the provocation of a crime often gives rise to contradictory approaches and various problems in both theoretical and practical aspects.

It is noteworthy that in the Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021, provisions were included that had no precedent in domestic law before. These new regulations require in-depth research into the discussed phenomenon and the establishment of sufficient clarity to ensure its consistent application in practice.

Innovations concerning the provocation of a crime were introduced in both the General and Special Parts of criminal law, including within the context of circumstances excluding criminal liability.

In this context, with the aim of improving the provisions related to the legal regulation of the provocation of a crime—and combining the approaches found in various legal sources—it is first necessary to identify the potential gaps within these provisions and to propose scientifically grounded theses and recommendations, which form the objectives of this work.

As a result of the research conducted, it was possible to achieve the aforementioned goals and to reveal the problems existing within this scope. At the same time, relevant legislative improvement proposals aimed at solving these issues have been presented, which can contribute to the further development of law in this area.

Аннотация. Провокация преступления, являясь многослойным и сложным явлением, часто вызывает противоречивые подходы и различные проблемы как в теоретическом, так и в практическом аспектах.

Следует отметить, что в Уголовный кодекс Республики Армения, принятый 5 мая 2021 г., были включены положения, ранее не имеющие прецедента в национальном праве. Эти новые нормы требуют глубокого исследования рассматриваемого явления и обеспечения достаточной определённости для его безошибочного применения на практике.

Нововведения, касающиеся провокации преступления, были предусмотрены как в Общей, так и в Особенной частях Уголовного права, в том числе в рамках обстоятельств, исключающих уголовную ответственность.

В этом контексте, с целью совершенствования положений, касающихся правового регулирования провокации преступления, и сочетая подходы, существующие в различных источниках права, необходимо прежде всего выявить возможные пробелы и выдвинуть научно обоснованные тезисы и предложения, которые и составляют цели данной работы.

В результате проведённого исследования удалось достичь указанных целей и выявить проблемы, существующие в данной области. Одновременно были представлены соответствующие предложения по законодательным улучшениям, направленные на их решение, которые могут способствовать дальнейшему развитию права в этой сфере.

Բանալի բառեր - հանցագործության պրովոկացիա, ծայրահեղ անհրաժեշտություն, քրեական պաշտպանականությունը բացառող հանգամանքներ, տեսություն, քրեական օրենսգիրք, անհրաժեշտ պաշտպանություն, քրեական իրավունք:

Keywords: Provocation of crime, extreme necessity, circumstances excluding criminal liability, theory, criminal code, self-defense, criminal law.

Ключевые слова: провокация преступления, крайняя необходимость, обстоятельства, исключающие уголовную ответственность, теория, уголовный кодекс, необходимая оборона, уголовное право.

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Մելիքյան, Հանցագործության պրովոկացիայի դրսևորումներն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան Տեղեկագիր, 3 (111), 2023 էջեր 213-224:
2. Ա. Գաբուրյան, Ա. Մարգարյան, Ս. Սիմոնյան, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջեր 78, 89-90:
3. Снѣ Д. С. Бакулина, Понятие необходимой обороны и ее отличие от крайней необходимости // Поколение будущего: взгляд молодых ученых – 2018. Сборник научных статей 6-й, Международной молодежной научной конференции: в 4 томах. 2018, էջեր 39-41:
4. Степанян Е. К, «К вопросу об институте необходимой обороны в уголовном праве» // Аллея науки. 2018, Т. 2. №6 (22), էջեր 790-795:
5. Снѣ Е. М. Глушкова, “Понятия «крайняя необходимость» и «превышение пределов крайней необходимости», Журнал «Гуманитарные, социально-экономические и общественные науки», № 347, էջեր 101-102:
6. Кальченко Н. В., «Крайняя необходимость в уголовном законодательстве Российской Федерации: Некоторые вопросы теории, Труды Академии МВД Республики Таджикистан» № 3 (55). 2022, էջեր 25-26:
7. Իսպանիայի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal_Code_2016.pdf (հղման վերջին մուտք՝ 15.10.2025 թ.):
8. Արգենտինայի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ <http://observatoriolegislativecele.com/en/Criminal-Code-of-the-Argentine-Republic-Law-11179/> (հղման վերջին մուտք՝ 15.10.2025 թ.):
9. Էկվադորի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.global-regulation.com/translation/ecuador/3349985/comprehensive-criminal-code.html> ((հղման վերջին մուտք՝ 15.10.2025 թ.):
10. Ուզբեկստանի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ <https://lex.uz/mobileact/111457> (հղման վերջին մուտք՝ 15.10.2025 թ.):

Մելիքյան Մ. - ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի պաշտոնակատար, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիասցե՝ melikmelikyan1994@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 23.10.2025 թ., տրվել է գրախոսության 23.10.2025 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-134>

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

*ի.գ.թ., Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս
ՎԱՐԱԶԴԱՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ*

*ի.գ.թ., Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս*

ADELINA SARGSYAN

*PhD in Law,
Lecturer at the Department of Criminal Law and
Criminal Procedure Law Institute of Law and Politics of the
Russian-Armenian University*

VARAZDAT SUKIASYAN

*PhD in Law,
Lecturer at the Department of Criminal Law and
Criminal Procedure Law Institute of Law and Politics of the
Russian-Armenian University*

АДЕЛИНА САРГСЯН

*Кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права Российско-Армянского университета*

ВАРАЗДАТ СУКИАСЯН

*Кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права Российско-Армянского университета*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑԻԱՅԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

SOME ISSUES OF THE IMPLEMENTATION OF THE PRINCIPLES OF INTERNATIONAL CRIMINAL LAW

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИМПЛЕМЕНТАЦИИ ПРИНЦИПОВ МЕЖДУНАРОДНОГО УГОЛОВНОГО ПРАВА

*The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA
(Research project № 25YR-5E005).*

Ներածություն

Քրեական օրենսդրության սկզբունքների ուսումնասիրությունն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում Միջազգային քրեական դատարանի Հռոմի Ստատուտի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացման լույսի ներքո: Կարևոր է հատկապես ՀՀ քրեական օրենսգրքի և Հռոմի Ստատուտի դրույթների համեմատականը, հնարավոր առկա բացերի և հակասությունների վերհանումը, դրանց վերացման հիմնական ուղղությունները, ինչպես նաև հայկական քրեական օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործմանն ուղղված հիմնավոր առաջարկությունների մշակումը:

Միջազգային քրեական իրավունքը համատեղում է ներքին քրեական իրավունքի դրույթները և միջազգային իրավունքի դրույթները, ինչը որոշում է նաև դրա սկզբունքների հատուկ ամբողջությունը¹: Միջազգային քրեական իրավունքի սկզբունքների հետահայաց վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք առաջին անգամ արտացոլվել են 1945 թվականի Նյուրնբերգի տրիբունալի կանոնադրության մեջ: Հետագայում սկզբունքներն արտացոլվել են Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (1993) և Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալի (1994 թ.) կանոնադրություններում, այնուհետև 1998 թվականի ՄԲԴ կանոնադրության մեջ:

5.2. Վճռաբեկ դատարանն առաջին հերթին անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոգրյալ հարցադրմամբ առաջադրված սեփականատիրոջ կամքից անկախ նրա տիրապետումից գույքի դուրս գալու պայմանի բովանդակության բացահայտմանը: Այսպես.

5.3. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների

անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: (...) Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

5.4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

5.5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

5.6. ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: **«Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է:** Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում

կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ (*տես Նեյլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

5.7. Վերը նշված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հանդես են գալիս հավասար հիմունքներով և որպես այդ հարաբերությունների ինքնուրույն մասնակից՝ օգտվում են հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքներով ամրագրված երաշխիքներից: Պետությունը (համայնքը)՝ որպես սեփականատեր, բացառիկ իրավունք ունի իր հայեցողությամբ գույքի նկատմամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, որը դրսևորվում է օրենսդրի կողմից չսահմանափակված եղանակով տնօրինելու միջոցով, այն է՝ իր գույքը որպես սեփականություն այլ անձանց օտարելով, այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները նրանց փոխանցելով, գույքը գրավ դնելով կամ այլ եղանակով տնօրինելով: Գույքի ճակատագիրը որոշելուն ուղղված այդ գործողությունների կատարմամբ պետությունը (համայնքը) արտահայտում է իր ներքին ցանկությունը՝ կամքը, որը դրսևորվում է իրավական հետևանքներ առաջացնող գործարքներ կնքելու միջոցով:

5.8. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը, եթե այլ բան չի բխում դրա էությունից, կարող է կնքվել սակարկությունների միջոցով: Պայմանագիրը կնքվում է սակարկություններում հաղթած անձի հետ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որպես սակարկությունների կազմակերպիչ՝ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքում կամ այլ օրենքում նշված դեպքերում գույքը կամ գույքային իրավունքը վաճառելու մասին պայմանագրերը կարող են կնքվել միայն սակարկությունների միջոցով:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ սակարկություններն անց են կացվում աճուրդի կամ մրցույթի ձևով: Աճուրդում հաղթած է համարվում առավել բարձր գին առաջարկած անձը, իսկ մրցույթում՝ այն անձը, որը սակարկությունների կազմակերպիչների կողմից նախապես նշանակված մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ: Սակարկությունների ձևը որոշում է վաճառվող գույքի սեփականատերը կամ իրացվող գույքային իրավունք տիրապետողը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

5.9. Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքների

սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, բացառությամբ նույն օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, կատարվում է աճուրդով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աճուրդների կազմակերպման և իրականացման կարգը սահմանվում է Քաղաքացիական օրենսգրքով, նույն օրենսգրքով և հրապարակային սակարկությունների մասին օրենքով:

5.10. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օրենքով սահմանված կանոնների խախտմամբ անցկացված սակարկությունները շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սակարկություններն անվավեր ճանաչելը հանգեցնում է սակարկություններում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

5.11. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 3-5-րդ, 8-9-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը, շահագրգիռ անձի պահանջով, դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

5.12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երբ աճուրդով վաճառքի է դրվում պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասը, դրանով պետությունն իրացնում է գույքն օտարելուն ուղղված իր կամքը:

Յուրաքանչյուր դեպքում, երբ գործի փաստական հանգամանքները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելուց ու խախտման բնույթը, ծանրությունը և հետևանքները գնահատման առարկա դարձնելուց հետո դատարանը հաստատված է համարում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնների խախտմամբ աճուրդի անցկացված լինելը, ապա այն ճանաչվում է անվավեր և հանգեցնում աճուրդում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

Այսինքն, երբ գույքի սեփականատերն արդեն իսկ արտահայտել է գույքն օտարելու իր կամքը, սակայն գույքի օտարման գործընթացն իրականացվում է պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի՝ օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ, իսկ այդ խախտումների առկայությունը կարող է հանգեցնել կնքված գործարքի անվավերության, ապա այս դեպքում չի կարող խոսք լինել սեփականատիրոջ՝ գույքն օտարելու կամքի խաթարման մասին:

Այլ կերպ ասած, եթե օրենսդիրը նախատեսել է պետության և (կամ) համայնքի կողմից պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի հստակ եղանակ, որի ընթացքը սակայն զուգորդվել է որոշակի խախտումներով, ապա չի կարող համարվել, որ նշված հողամասը տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ սեփականատիրոջ կամքից:

Այսինքն՝ աճուրդի միջոցով պետության և (կամ) համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու դեպքում անհրաժեշտ է միայն սեփականատիրոջ՝ գույքն օտարելուն ուղղված կամքը, որպիսի պայմանի առկայության պարագայում կարող ենք խոսել սեփականատիրոջ՝ գույքն օտարելու նպատակի և ցանկության իրագործման մասին:

5.13. Անդրադառնալով սեփականատիրոջ կողմից բարեխիղճ ձեռք բերողից իր գույքը հետ պահանջելու իրավունքի իրացման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում

է հետևյալը:

5.14. Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: (...):

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5.15. Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ի տարբերություն քաղաքացիաիրավական շրջանառության մյուս մասնակիցների, որոնք ազատ են անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանն ու օրենքներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

5.16. ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկում անդրադառնալով օրինականության սկզբունքին, նշել է, որ այս սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա. (...): Օրինականության սկզբունքը բացառիկ կարևոր նշանակություն ունի հատկապես այն ժամանակ, երբ պետական մարմիններն առնչվում են մասնավոր անձանց հիմնական իրավունքների հետ (*տես «Ինենկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ Սահմանադրությամբ ամրագրված է առանցքային նշանակություն ունեցող սահմանադրական այն պահանջը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները պետք է սահմանված լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով (*տես Ֆինանսների նախարարության Կապանի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Վարդանի Զարթոնքը» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/11193/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

5.17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի

համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր սեփականությունից՝ բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

5.18. Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային իրավական նորմերի ուժով: Մինևույն ժամանակ Սահմանադրության 60-րդ հոդվածի, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքը բացարձակ չէ, ուստի Սահմանադրությամբ և Արձանագրությամբ նախատեսվում է այն սահմանափակելու իրավական հնարավորություն:

5.19. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախատեսել է մի շարք չափանիշներ, որոնց պետք է բավարարի այդ սահմանափակումը, և որոնց առկայության դեպքում այն կարող է համարվել թույլատրելի սահմանափակում: Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով,
2. բխում է հանրային շահից,
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*տես the Former king of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար, առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*տես James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*տես James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*): Պետք է լինի համաչափության ողջամիտ կապ օգտագործվող միջոցների և անձին իր ունեցվածքից զրկող ցանկացած միջոցառմամբ իրագործվող նպատակի միջև (*տես Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, 38-րդ կետ*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի

սեփականատերն ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց, քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Մյուս կողմից, հետապնդվող նպատակի և միջամտության համարժեքության հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի այլընտրանքային լուծումների առկայությունը: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*տե՛ս the Former king of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետ, ինչպես նաև Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետ*):

Արձանագրության 1-ին պարբերության 2-րդ նախադասությամբ ամրագրված կանոնի կիրառումը կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ սեփականության իրավունքից զրկումը «բխում է հանրային շահից» և «ենթարկվում է օրենքով նախատեսված պայմաններին» (*տե՛ս, օրինակ, Brumărescu v. Romania գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, 78-րդ կետ*): Եվրոպական դատարանը հաստատել է, որ «օրենքով նախատեսված պայմաններով» արտահայտությունն առաջին հերթին պահանջում է պատշաճ մակարդակի մատչելի և բավարար հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն ու դրանց համապատասխանություն (*տե՛ս Lithgow and Others v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, 102-րդ կետ*):

5.20. ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Սահմանադրությունը, հռչակելով սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, երաշխավորում է յուրաքանչյուրի՝ սեփականություն ունենալու բացարձակ իրավունքը՝ միաժամանակ ամրագրելով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքից զրկելու հնարավորությունը միայն դատական կարգով (*տե՛ս Գևորգ Գևորգյանն ընդդեմ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2434/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2009 թվականի որոշումը*):

5.21. Եվրոպական դատարանը բազմիցս հաստատել է, որ սեփականության նկատմամբ ցանկացած միջամտություն, բացի օրինական լինելուց և օրինական նպատակ ունենալուց, պետք է նաև բավարարի համաչափության պահանջը: Միջամտության համաչափությունը ենթադրում է համայնքի ընդհանուր շահի պահանջների և անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության հրամայականների միջև արդարացի հավասարակշռության գոյություն: **Այս հավասարակշռությունը խախտվում է, եթե շահագրգիռ անձը ստիպված է լինում կրել «հատուկ և չափազանց մեծ բեռ»:** Արդար հավասարակշռության գոյության ստուգումը պահանջում է ընդհանուր վերլուծություն՝ կապված տվյալ գործով առկա տարբեր շահերի հետ: Դատարանների կողմից դիտարկվող հանգամանքները տարբեր գործերում կարող են տարբեր լինել՝ կախված փաստական իրավիճակից և կիրառված միջամտության բնույթից: Համաչափության վերլուծության շրջանակում, Եվրոպական դատարանը, բացի իշխանությունների վարքից, հաճախ դիտարկում է նաև **գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը, մասնավորապես՝ թե որքանով է նա եղել մեղավոր կամ որքան զգուշավորություն է ցուցաբերել** (*տե՛ս Agosiv. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 24.10.1986 թվականի վճիռը, 54-րդ կետ*): Մասնավորապես, **անշարժ գույք ձեռք բերելիս անձը պետք է պատշաճ զգուշություն ցուցաբերի, եթե կան ակնհայտ նշաններ,**

որոնք ցույց են տալիս, որ սեփականության փոխանցման շղթայի ավելի վաղ փուլում կարող էին լինել խարդախություններ: Դատարանը միևնույն ժամանակ ուսումնասիրում է միջամտության հետևանքները տվյալ անձի համար և, եթե տեղի է ունեցել գույքի կորուստ, պարզում է՝ արդյո՞ք փոխհատուցում է տրամադրվել և ինչ պայմաններով (*Կրե'ս Գավրիլովա et autres c. Russie գործով Եվրոպական դատարանի 16.03.2021 թվականի վճիռը, 74-րդ կետ*):

Եվրոպական դատարանը գտել է, որ բարեխղճորեն գործող անձը, որպես կանոն, իրավունք ունի հիմնվելու այն հայտարարությունների վրա, որոնք արվել են պետական կամ հանրային պաշտոնյաների կողմից, և որոնք, ըստ երևույթին, ունեն նման հայտարարություններ անելու լիազորություն, որ պահպանվել են ներքին կանոններն ու ընթացակարգերը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հստակ հակասում է հանրությանը հասանելի փաստաթղթերին (օրենսդրությանը), կամ եթե անձը այլ կերպ գիտեր կամ պետք է իմանար, որ որոշակի պաշտոնատար անձ չունի իրավասություն՝ ստանձնելու պետության անունից իրավական պարտավորություն: Անձի պարտականությունը չպետք է լինի ապահովել, որ պետական մարմինները հետևեն իրենց սեփական ներքին կանոններին և ընթացակարգերին, որոնք անհասանելի են հանրությանը և որոնք հիմնականում նախատեսված են պետական մարմնի հաշվետվողականությունն ու արդյունավետությունն ապահովելու համար (*Կրե'ս Կրե'ս v. Croatia գործով Եվրոպական դատարանի 11.06.2009 թվականի վճիռը, 67-րդ կետ, Gashi v. Croatia, գործով Եվրոպական դատարանի 13.12.2007 թվականի վճիռը, 40-րդ կետ*):

Լավ կառավարման սկզբունքը, որպես ընդհանուր կանոն, չպետք է խոչընդոտի իշխանություններին ուղղելու պատահական սխալները, եթե նույնիսկ դրանք առաջացել են իրենց իսկ անփութության հետևանքով: Այնուամենայնիվ, **հին «սխալը» ուղղելու անհրաժեշտությունը չպետք է անհամաչափորեն խանգարի այն նոր իրավունքին, որը ձեռք է բերվել անձի կողմից՝ բարեխղճորեն հիմնվելով պետական մարմնի գործողությունների օրինականության վրա:** Այլ կերպ ասած, պետական մարմինները, որոնք չեն կարողանում կիրառել կամ պահպանել իրենց սեփական ընթացակարգերը, չպետք է օգտվեն իրենց սխալներից կամ խուսափեն իրենց պարտավորություններից: Պետական մարմնի կողմից թույլ տրված ցանկացած սխալի դիսկրիմինացիոն պետք է կրի ինքը՝ պետությունը, և սխալները չպետք է շտկվեն շահագրգիռ անձանց հաշվին: Սխալմամբ փոխանցված գույքի սեփականության իրավունքը չեղյալ համարելու համատեքստում, լավ կառավարման սկզբունքը կարող է ոչ միայն իշխանություններին պարտադրել անհապաղ գործել իրենց սխալը շտկելու համար, այլև կարող է պահանջել համարժեք փոխհատուցման կամ այլ տեսակի համապատասխան փոխհատուցման վճարում դրա նախկին բարեխիղճ տիրոջը (*Կրե'ս Լելաս v. Croatia, գործով Եվրոպական դատարանի 20.05.2010 թվականի վճիռը, 74-րդ կետ, Maksymenko and Gerasymenko v. Ukraine, Եվրոպական դատարանի 16.05.2013 թվականի վճիռը, 64-րդ կետ և Bogdel v. Lithuania, Եվրոպական դատարանի 26.11.2013 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

Պետական մարմինները, որոնք դիմողներին տրամադրել էին համապատասխան փաստաթղթերն ու թույլտվությունները, չեն հայտնաբերել հողամասերի օտարման գործընթացում թույլ տրված խախտումները, դրանք ավելի ուշ արձանագրվել են դատարանների կողմից: Հետևաբար Եվրոպական դատարանը բավարար հիմնավորված չի համարել Կառավարության այն պնդումը, որ դիմորդներն ավելի մանրամասն ստուգելու դեպքում կպարզեին, որ տեղական ինքնակառավարման մարմինն իրավասու չէր վաճառելու տվյալ հողամասերը, այն դեպքում, երբ այդ հանգամանքը չեն հայտնաբերել իրավասու այլ պետական մարմիններ (*Կրե'ս Ibrahimbeyov and others v. Azerbaijan գործով Եվրոպական դատարանի 16.02.2023 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Բելովան ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը նշել է. «Դատարանը համաձայն է Կառավարության հետ, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, մասնավորապես՝ Քաղաքացիական օրենսգրքի 301-րդ և 302-րդ հոդվածներին [Ուրիշի կողմից անօրինական տիրապետումից գույքի հետ պահանջելը և բարեխիղճ ձեռք բերողից գույքի հետ պահանջելը]՝ ներպետական դատարանների մեկնաբանությամբ: Դատարանը այնուհետև գտնում է, որ միջամտությունը բխում է հանրային շահերից, քանի որ, ինչպես բացատրում են ներպետական իշխանությունները և Կառավարությունը, պետությունը մտադիր էր վերադարձնել այն գույքը, որը կորցրել էր սխալ կառավարման արդյունքում և օգտագործել այն խոշոր միջազգային սպորտային իրադարձությունների անցկացման համար ու պաշտպանել բնությունը: Դատարանը գտնում է, որ **գույք ձեռք բերողը պետք է հետամուտ լիներ պարզելու գույքի ծագումը՝ հնարավոր բռնագանձման պահանջներից խուսափելու համար, իսկ դա անելու դեպքում կբացահայտեր, որ մեկ տարվա ընթացքում երեք անգամ գույքի սեփականատեր է փոխվում»** (տե՛ս *Belova v. Russia* գործով Եվրոպական դատարանի 15.09.2020 թվականի վճիռը, 41-րդ կետը):

Եթե դատական վարույթում հայցվոր սեփականատերն ապացուցում է, որ ձեռքբերողը պետք է ողջամտորեն կասկածեր գույքը վաճառողի՝ այն տնօրինելու իրավասության վերաբերյալ, ապա ձեռքբերողի բարեխիղճությունը մերժվում է (տե՛ս *Seregin and other v. Russia* գործով Եվրոպական դատարանի 16.03.2021 թվականի վճիռը, 64-րդ կետը):

5.22. ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի վերլուծությանն, արձանագրել է, որ գույքը ձեռք բերողը կարող է օրենսդրության տեսանկյունից դիտվել որպես բարեխիղճ ձեռք բերող, եթե գույքը ձեռք է բերել այն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ: Օրենսդիրն ամրագրել է այն ելակետային դրույթը, որ այս պարագայում գույքը հետ չի կարող պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշ նախապայմանների առկայության պարագայում, այնուամենայնիվ, հնարավորություն է նախատեսված նման գույքը հետ պահանջելու բարեխիղճ ձեռք բերողից, ինչը նպատակ է հետապնդում հավասարակշռելու նաև գույքի սեփականատիրոջ իրավունքները՝ հաշվի առնելով, որ որոշ դեպքերում հնարավոր է, որ գույքը վերջինիս տիրապետությունից դուրս եկած լինի անկախ սեփականատիրոջ կամքից: Այս պարագայում օրենսդիրն առաջնորդվել է այն դրույթով, որ սեփականատերը նպատակ չի ունեցել գույքը տնօրինելու օտարման եղանակով: Ըստ այդմ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը սահմանել է, որ բարեխիղճ ձեռք բերողից սեփականատերն իրավունք ունի տվյալ գույքը պահանջելու հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝

1. գույքը ձեռք է բերվել հատուցմամբ,
2. գույքը ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից,
3. գույքը ձեռք բերողը չի իմացել կամ չէր կարող իմանալ դրա մասին,
4. սեփականատերը կամ գույքը տիրապետողը կորցրել են գույքը, կամ այն նրանցից հափշտակվել է, կամ դուրս է եկել նրանց տիրապետումից այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վերոգրյալ նախապայմանների միաժամանակյա առկայությունը բավարար է, որպեսզի սեփականատերը վերականգնի իր սեփականության իրավունքը՝ չնայած այն հանգամանքին, որ գույք ձեռք բերողը հանդիսացել է բարեխիղճ ձեռք բերող: **Հետևաբար նշված նախապայմանները պետք է քննարկման**

առարկա դարձվեն և պարզվեն գործի քննության ընթացքում (տե՛ս Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյաններն ընդդեմ Վահագն Սահակյանի, երրորդ անձ Երևանի «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտար Աստղիկ Մազմանյանի թիվ ԵՇԴ/0056/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետո պահանջելու իրավական հարցին, նշել է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի պահանջներին հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով պաշտպանված չէ սեփականատիրոջ՝ գույքը վերադարձնելու պահանջից, եթե գույքը վերջինիս տիրապետումից դուրս է եկել նրա կամքից անկախ պատճառներով (տե՛ս *Լաուրա Ամիրյանն ընդդեմ Եղիսաբեթ Ալավերդյանի, Գոհար Պողոսյանի թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը թիվ ԿԴ/3359/02/21 քաղաքացիական գործով 03.08.2023 թվականի որոշմամբ հարկ է համարել հավելել, որ բարեխիղճ ձեռքբերողի հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի կողմերի վարքագծի իրավաչափությունը: Այս առումով, Եվրոպական դատարանը գտել է, որ իրավասու պետական մարմինները պետք է հնարավորություն ունենան ուղղել անցյալում կատարված սխալները, թեկուզև դրանք կատարված լինեն սեփական անփութության հետևանքով: **Բարեխիղճ ձեռքբերողի առումով պետք է հաշվի առնել, թե ձեռքբերողն անշարժ գույք ձեռքբերելիս որքանով է զգուշավորություն և զգոնություն դրսևորել, երբ առկա են ակնհայտ նշաններ ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ** (տե՛ս *Vukušić v. Croatia*, գործով Եվրոպական դատարանի 31.05.2016 թվականի վճիռը, 64-րդ կետը):

5.23. Եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետության լավ կառավարում ասելով նկատի է առնվում պետական իշխանությունների այն գործունեությունը, որի հիմքում ընկած է օրինականությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու արդարությունը՝ ի կատարումն Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու ու պաշտպանելու հանրային իշխանության պարտականության, որպիսի պարագայում անձանց մոտ առաջանում է համոզմունք՝ վստահելու պետական մարմինների գործունեության արդյունքին: Այլ կերպ ասած՝ լավ կառավարումը պետության և քաղաքացու միջև վստահելի ու պատասխանատու հարաբերությունների հիմքն է:

Պետության կողմից սեփականության իրավունքը պաշտպանելու պարտավորության ու երաշխիքի առկայության հրամայականով պայմանավորված՝ սեփականության իրավունքի սահմանափակումը կարող է տեղի ունենալ միայն այդ իրավունքի սահմանափակում նախատեսող իրավունքի գերակայությանը համապատասխանող օրենքի առկայության պարագայում, երբ սեփականության իրավունքին միջամտություն ու սահմանափակումը համաչափ է և հետապնդում է հանրային շահերից բխող իրավաչափ նպատակ: Համաչափության սկզբունքի պահպանված լինելու տեսանկյունից գնահատվում է պետական մարմինների կողմից լավ կառավարման սկզբունքի պահպանված լինելը, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ բարեխիղճ վարքագիծը՝ իր իրավունքներն իրացնելու ընթացքում զգոնություն և զգուշավորություն դրսևորելու առումով:

Միևնույն ժամանակ սեփականության իրավունքին համաչափ միջամտությունը պահանջում է հանրային շահի և անձի իրավունքների միջև բարենպաստ և արդարացի

հավասարակշռություն: Պետությունը պետք է ճիշտ համադրի իր և անձի շահերը, որպեսզի պետական շահը չգերակշռի անձի հաշվին: Այդ հավասարակշռությունը խախտվում է այն դեպքում, երբ տեղի է ունենում անձի իրավունքներին ոչ համաչափ միջամտություն, քանի որ պետությունը, որպես լավ կառավարման պատասխանատու՝ կրելով սեփական սխալների ռիսկը, դրանք փորձում է շտկել՝ անձի վրա անհամաչափ ծանր բեռ դնելով:

Այսինքն, իրավունքին միջամտությունը, որը դրսևորվում է իշխանությունների կողմից իրենց նախկին սխալներն ուղղելու միջոցով, չպետք է խաթարի գույքի նոր սեփականատիրոջ՝ բարեխիղճ ձեռքբերողի սեփականության իրավունքը, երբ վերջինս ունեցել է անհրաժեշտ բոլոր հիմքերը՝ հիմնվելու ու վստահելու պետական մարմինների գործողությունների իրավաչափությանն ու օրինականությանը:

Վճռաբեկ դատարանն ամբողջ վերոգրյալի համատեքստում, վերահաստատելով նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, անդրադառնալով սեփականատիրոջ կամքից անկախ նրա տիրապետումից գույքի դուրս գալու պայմանի և անձի բարեխիղճության հարցի բացահայտմանը՝ արձանագրում է, որ օրենքով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ գործերով առկա փաստական հանգամանքների հաշվառմամբ, յուրաքանչյուր դեպքում դատարանները պետք է պարզեն ու գնահատման առարկա դարձնեն պետության գույքն օտարելուն ուղղված կամքի առկայության հարցը, որպիսի հանգամանքի պարզումը թույլ կտա որոշելու գույքը սեփականատիրոջը վերադարձնելու հնարավորությունը: Իսկ այն դեպքում, երբ դատարանը կպարզի ու հաստատված կհամարի, որ առկա է եղել պետության գույքն օտարելու կամքը, ապա այս դեպքում պարզման ենթակա հարց է դառնում նաև անձի բարեխիղճ ձեռքբերող լինելու հանգամանքը: Ընդ որում, անձի բարեխիղճությունը գնահատելիս երբ հայցվորը հիմնավորում է, որ գույքը ձեռքբերողի մոտ պետք է առկա լիներ կասկած՝ գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ, դատարանները պետք է քննության առարկա դարձնեն բարեխիղճ ձեռքբերողի գործողությունների բնույթը, մասնավորապես՝ գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ ակնհայտ նշանների առկայության պարագայում որքանով են դրանք եղել ողջախոհ ու զգուշավոր, արդյո՞ք անձը գույքը ձեռք բերելիս ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները դրա վերաբերյալ իրեն հասանելի ու բավարար տեղեկատվություն ստանալու համար:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

5.24. Գործի փաստերից (տես վերը 4.1.-4.2.-րդ կետերը) հետևում է, որ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի «Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի օտարումը կազմակերպող հանձնաժողով ստեղծելու և հողերի օտարման մասին» թիվ 67 որոշմամբ՝ հիմք ընդունելով Կառավարության 05.04.2007 թվականի «Հողի կատեգորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ, 68-րդ հոդվածների պահանջներով, Կառավարության 29.12.2003 թվականի «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746 որոշման 2-րդ կետի գ/ ենթակետի պահանջներով, որոշվել է՝ 1. Համայնքների վարչական սահմաններից դուրս մարզի տարածքում գտնվող պետական

սեփականություն համարվող հատուկ պահպանվող տարածքների հողերից 48.57 հա հանգստի կազմակերպման նպատակով ներկայացնել օտարման՝ աճուրդային կարգով (...):

5.25. Սույն գործով Դատարանը, բավարարելով հայցը՝ պատճառաբանել է, որ «26.05.2007 թվականի թիվ 7 լուրի հողամասի աճուրդի վերաբերյալ հրապարակային ծանուցումը կատարվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ի մասի և 14-րդ հոդվածի 1-6-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ: (...) Ընդ որում, նշվածը հերքող կամ հակառակը հիմնավորող որևէ ապացույց քաղաքացիական գործի նյութերում բացակայում է»:

Դատարանն անդրադառնալով, երրորդ անձ Հայկ Հարությունի Ղարազյոզյանի բարեխիղճ ձեռքբերող հանդիսանալու առարկություններին նշել է, որ «(...) բոլոր դեպքերում գույքը ձեռքբերած անձի բարեխիղճության հարցի լուծման համար վճռական են սկզբնական սեփականատիրոջ տիրապետումից գույքի դուրս գալու հանգամանքները, հետևաբար սույն գործի փաստերի ներքո ենթակա է քննարկման այն հարցը, թե արդյո՞ք հողամասը պետության տիրապետումից դուրս է եկել իր կամքից անկախ: Երրորդ անձի ներկայացուցիչը գտնում է, որ հողամասի օտարման համար հիմք է հանդիսացել ՀՀ Կոստյուքի մարզպետի 23.04.2007 թվականի թիվ 67 որոշումը, որի հիման վրա կայացված աճուրդով հողամասն օտարվել է, հետևաբար պետության կամքով է հողամասն իրա տիրապետությունից դուրս եկել:

Այն որ, պետությունն իրոք կամեցել է օտարել վեճի առարկա հողամասը և դրա օտարման կազմակերպման համար որոշումներ են կայացվել, դա անվիճելի է: Սակայն սեփականատիրոջ կամքը հողամասն աճուրդի միջոցով օտարելու վերաբերյալ չի կարող գնահատվել բացառապես օտարելու մրադրության վերաբերյալ տվյալներով, այլ նաև պետք է հաշվի առնել օտարման իրականացման՝ հողամասը սեփականատիրոջ տիրապետությունից դուրս գալու գործարքի օրինականության հարցը, առավել ևս, որ պետության կողմից հողամասի օտարման համար աճուրդի իրականացման կարգը օրենքով հստակ կարգավորող ընթացակարգ է: Սույն գործով Դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ վեճի առարկա հողամասի աճուրդը՝ օտարման գործարքը կատարվել է օրենքի խախտմամբ, հետևաբար Դատարանը եզրահանգում է, որ հողամասը սեփականատիրոջ տիրապետությունից դուրս է եկել նրա կամքից անկախ:

Այս առումով Դատարանը հիմնավոր է գտնում հայցվորի փաստարկներն առ այն, որ տվյալ դեպքում մարզպետը՝ պետական սեփականության հողամասերն օտարելու իրավունք ունեն բացառապես աճուրդային եղանակով՝ օրենքով սահմանված կարգով, այլ կարգով օտարման իրավունք վերջինս չունի:

Բացի այդ, ուշադրության է արժանի նաև հողամասի աճուրդով ձեռքբերման և հետագայում Հայկ Ղարազյոզյանին օտարելու գների տարբերությունը: Եթե աճուրդի արդյունքներով 31.05.2007 թվականին կնքված պայմանագրով հողամասը ձեռք է բերվել 4.880.000 ՀՀ դրամով, ապա դրանից ընդամենը մի քանի ամիս ամիս անց՝ 06.12.2007 թվականի գործարքով նույն հողամասն օտարվել է 16.200.000 ՀՀ դրամով, այսինքն ավելի քան 3 անգամ ավելի թանկ: Այդ տեղեկությունը հասանելի էր և Հայկ Ղարազյոզյանը պետք է հաշվի առներ դա, քանի որ գույքի որևէ սեփականատեր ողջամտորեն չի ցանկանա այն օտարել մի քանի անգամ ավելի նվազ գնով, քան հնարավոր էր: Եվ հակառակը՝ որևէ գնորդ ողջամտորեն չի ցանկանա գույքը գնել ավելի քան երեք անգամ ավելի թանկ, քան դրա գինն է: Այս փաստը նույնպես ստվերում է երրորդ անձ Հայկ Ղարազյոզյանի բարեխիղճ ձեռքբերող լինելու փաստարկը:

Փաստացի, պետական սեփականություն հանդիսացող հողամասը օտարվել և պետության տիրապետումից դուրս է եկել պաշտոնապար անձանց ոչ օրինաչափ գործողությունների



հետևանքով՝ ձևական աճուրդով, սեփականատիրոջ կամքից անկախ, հետևաբար սույն գործով վեճի առարկա հանդիսացող հողամասը պետք է վերադարձվի սկզբնական սեփականատիրոջը»:

5.26. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Դատարանի այն եզրահանգմանը, որ հողամասը սեփականատիրոջ տիրապետությունից դուրս է եկել նրա կամքից անկախ, քանի որ վեճի առարկա հողամասի աճուրդը՝ օտարման գործարքը կատարվել է օրենքի խախտմամբ և մասնակիորեն բավարարելով Հայկ Հարությունի Ղարազյոզյանի վերաքննիչ բողոքը՝ արձանագրել է հետևյալը. «(...) օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով գործարքի անվավերությունը ինքնին չի կարող հաստատել գույքը՝ դրա սեփականատիրոջ կամքից անկախ տիրապետումից դուրս եկած լինելու, գույքը օտարելու կամքի բացակայության փաստը: Այսինքն, պետությունը, իրականացնելով գույքը օտարելու նպատակի առկայությունը վկայող գործողություններ (հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին որոշման ընդունում, պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործարքից բխող իրավունքների գրանցում և այլն), չի կարող պնդել նշված գույքն իր տիրապետումից այլ ճանապարհով՝ անկախ պետության կամքից դուրս եկած լինելու հանգամանքը՝ հղում կատարելով միայն գրանցման համար հիմք հանդիսացած գործարքի օրենքի պահանջի խախտմամբ կնքված լինելու՝ աճուրդն օրենսդրական որոշ ընթացակարգային պահանջների խախտմամբ անցկացված լինելու փաստին: Վեճի առարկա հողամասը օտարելու պետության կամքը սույն դեպքում դրսևորվել է պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարմանն ուղղված ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողի կապեզորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշման ընդունմամբ, ՀՀ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի «Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի օտարումը կազմակերպող հանձնաժողով ստեղծելու և հողերի օտարման մասին» թիվ 67 որոշման ընդունմամբ, ինչպես նաև «Հրազդան» նոտարական տարածքի նոտար Ա.Հովհաննիսյանի կողմից կատարված 31.05.2007 թվականին կնքված հողամասի առուվաճառքի մասին թիվ 2595 պայմանագրի նոտարական վավերացմամբ և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից կատարված առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված անշարժ գույքի նկատմամբ Հովհաննես Հենրիկի Գևորգյանի սեփականության իրավունքի պետական գրանցմամբ: Մինչույն ժամանակ, օտարման գործընթացում, պաշտոնատար անձի կողմից ոչ օրինաչափ վարքագիծ դրսևորելու արդյունքում աճուրդի ընթացակարգային կանոնների խախտման հիմքով՝ աճուրդի անվավերությունը՝ չի կարող վկայել այն մասին, որ վեճի առարկա գույքը դուրս է եկել պետության տիրապետումից՝ անկախ վերջինիս կամքի: Այսինքն, սույն դեպքում գործարքի անվավերության հիմքը վերաբերելի չէ գործարքի կողմերի մի կողմից գույքի օտարման և մյուս կողմից գույքի ձեռքբերման կամքի խաթարմանը:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ «(...) Տվյալ դեպքում Դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու որոշմամբ սահմանված երրորդ անձի՝ բարեխիղճ ձեռք բերող չլինելու փաստը հաստատելու նպատակով հայցվորը պետք է ներկայացներ փաստարկներ և դրանք հիմնավորող ապացույցներ այն մասին, որ գույքը ձեռքբերողը ողջամտորեն պետք է կասկածեր վաճառողի՝ գույքի օտարման իրավունք ունենալու հանգամանքին: Մինչդեռ բողոքարկվող դատական ակտը չի պարունակում դատարանի հստակ և որոշակի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ:

(...) երրորդ անձի բարեխիղճության վերաբերյալ Դատարանի կատարած եզրահանգումը

ոչ հաստատում է փաստը, ոչ էլ՝ ժխտում, այլ ընդամենը կասկածի տակ է առնում երրորդ անձի բարեխիղճ ձեռք բերող լինելու հանգամանքը: Միաժամանակ, սույն գործով Հայկ Հարությունի Ղարազյոզյանի՝ բարեխիղճ ձեռք բերող չլինելու փաստի ապացուցման պարտականությունը Դատարանի որոշմամբ դրված է եղել Հայցվորի վրա, հետևաբար Դատարանի կողմից փաստը չհաստատվելու բացասական հետևանքները պետք է կրի Հայցվորը»:

Նշել է նաև, որ «(...) Դատարանը չի վկայակոչել որևէ փաստարկ, համաձայն որի՝ համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ ավելի քան վեց ամիս անց հողամասը սկզբնական գնից ավելի քան 3 անգամ ավելի թանկ (աճուրդի արդյունքներով 31.05.2007 թվականին կնքված պայմանագրով հողամասը ձեռք է բերվել 4.880.000 ՀՀ դրամով, իսկ 06.12.2007 թվականի գործարքով հողամասն օտարվել է 16.200.000 ՀՀ դրամով) վաճառված լինելը երրորդ անձ Հայկ Ղարազյոզյանի մոտ պետք է կասկած հարուցեր գույքը օտարողի՝ Հովհաննես Գևորգյանի՝ գույքը տնօրինելու իրավունքի բացակայության վերաբերյալ»:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ. «սույն գործով որպես աճուրդի անվավերության հետևանք Հովհաննես Հենրիկի Գևորգյանի և Հայկ Հարությունի Ղարազյոզյանի միջև 06.12.2007 թվականին կնքված հողամասի առուվաճառքի թիվ 7007 պայմանագիրը և դրա հիման վրա կատարված Հայկ Հարությունի Ղարազյոզյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցի բավարարման հիմքում դրվել է գույքը պետության տիրապետումից՝ նրա կամքից անկախ դուրս եկած լինելու փաստը հաստատված լինելու հանգամանքը, որի հիմքով Դատարանն ըստ էության չի անդրադարձել երրորդ անձի՝ բարեխիղճ ձեռք բերող լինելու հարցին և որևէ հստակ եզրահանգման չի եկել երրորդ անձի՝ բարեխիղճ ձեռք բերող լինելու կամ չլինելու վերաբերյալ, ինչպես նաև հաշվի առնելով, որ գույքը պետության տիրապետումից՝ նրա կամքից անկախ դուրս եկած լինելու փաստը հաստատված լինելու մասով Դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները Վերաքննիչ դատարանը գնահատել է ոչ իրավաչափ» և արձանագրել, որ «երրորդ անձի բարեխիղճության հարցը պարզելու նպատակով առկա է գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն»:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գործի քննության լրիվությունն ու բազմակողմանիությունը, անձանց արդար դատաքննության իրավունքն առավելագույնս ապահովելու նպատակով գործի նոր քննության ծավալ է սահմանել 26.05.2007 թվականին իրականացված թիվ 7 լուսի աճուրդի և դրա հաղթողի հետ 31.05.2007 թվականին Կոտայքի մարզպետի կնքած առուվաճառքի պայմանագրով օտարված հողամասի հետագա՝ 06.12.2007 թվականի օտարման գործարքով գնորդ ու գրանցված սեփականատեր Հայկ Հարությունի Ղարազյոզյանի բարեխիղճ ձեռք բերող չլինելու հարցի պարզումը, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովումը՝ ներկայացված հայցադիմումի փաստական ու իրավական հիմնավորումների շրջանակում՝ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունների և վերլուծությունների լույսի ներքո:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որպես գործարքների անվավերության հետևանք գործարքի կողմերից յուրաքանչյուրի կողմից մյուս կողմին գործարքով իր ամբողջ ստացածը վերադարձնելու՝ երկկողմանի ռեստիտուցիայի հարցի պարզումը հնարավոր է երրորդ անձի բարեխիղճության հարցի մասով գործի նոր քննության իրականացմամբ, մասնավորապես՝ սույն դեպքում գույքը բնեղենով վերադարձնելու հնարավորության հարցի պարզաբանման վերաբերյալ:

5.27. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները հաստատված են համարել, որ աճուրդն ընդհանրապես չի կայացել, վիճելի հողամասը, ըստ էության, օտարվել է ուղիղ վաճառքի ձևով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված աճուրդի անցկացման կանոնների խախտմամբ:

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանները յուրաքանչյուր դեպքում պետք է պարզման և գնահատման առարկա դարձնեն պետության գույքն օտարելուն ուղղված կամքի առկայության հարցը, որպիսի հանգամանքի պարզումը թույլ կտա որոշելու գույքը սեփականատիրոջը վերադարձնելու հնարավորությունը: Երբ դատարանը կպարզի ու հաստատված կհամարի, որ առկա է եղել պետության գույքն օտարելու կամքը, ապա պարզման ենթակա հարց է դառնում նաև անձի բարեխիղճ ձեռքբերող լինելու հանգամանքը, որի դեպքում հայցվորը պետք է հիմնավորի, որ գույքը ձեռքբերողի մոտ առկա է եղել կասկած՝ գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ, իսկ անձի բարեխղճության հանգամանքի գնահատումը պետք է իրականացվի վերջինիս գործողությունների բնույթը բացահայտելու միջոցով: Այսինքն՝ պարզման է ենթակա այն հարցը, թե անձը գույքի ձեռքբերման գործընթացի անօրինական լինելու վերաբերյալ ակնհայտ նշանների առկայության պարագայում անշարժ գույքը ձեռքբերելիս որքանով է զգուշավորություն և զգոնություն դրսևորել գույքի ձեռքբերմանն ուղղված գործողությունները կատարելիս, արդյո՞ք անձը գույքը ձեռք բերելիս ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները դրա վերաբերյալ իրեն հասանելի և բավարար տեղեկատվություն ստանալու համար:

Վերաքննիչ դատարանը գալով ճիշտ եզրահանգման՝ իրավացիորեն արձանագրել է, որ երրորդ անձի բարեխղճության հարցը պարզելու նպատակով առկա է գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտություն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի 03.05.2024 թվականի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, Դատարանի 27.09.2023 թվականի վճիռը մասնակիորեն բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող եզրափակիչ դատական ակտ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

6. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

6.1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] կանոններին համապատասխան:

6.2. Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը 03.05.2024 թվականին որոշում է կայացրել Դատարանի 27.09.2023 թվականի վճիռը մասնակիորեն բեկանելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու մասին, և սույն որոշմամբ Դատախազության վճռաբեկ բողոքը մերժվում է ու Վերաքննիչ դատարանի 03.05.2024 թվականի որոշումը թողնվում է օրինական ուժի մեջ, որպիսի պարագայում գործը բեկանված մասով ուղարկվում է նոր քննության՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի քննության ներկա փուլում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ, ուստի այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 03.05.2024 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԵԴ/37654/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2025 թվականի նոյեմբերի 14-ին

գրավոր ընթացակարգով քննելով Կարեն Մխիթարյանի և Անժելա Հարությունյանի (այսուհետ՝ Համապատասխանողներ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Արամ Սանոսյանի հայցի ընդդեմ Համապատասխանողների՝ գործարքները լուծելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արամ Սանոսյանը պահանջել է լուծել թիվ ԵԴ/3447/02/19 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները՝ որոշելով նշված գործարքների լուծման հետևանքները, մասնավորապես՝ սահմանելով պատասխանողների՝ մինչ օտարումն իրենց ունեցած անշարժ գույքերի շուկայական արժեքի փոխհատուցման չափը՝ ելնելով այդ գործարքները կատարելու կապակցությամբ իր ու պատասխանողների կողմից կրած ծախսերն իրար միջև արդարացի բաշխելու անհրաժեշտությունից:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.11.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ քաղաքացիական դատավարության կարգով այն քննության ենթակա չլինելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.03.2023 թվականի որոշմամբ Արամ Սանոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը վերացվել է:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Համապատասխանողները (ներկայացուցիչ Էդիկ Ոսկանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ

հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 63-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-468-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 6-9-րդ, 151-րդ, 182-րդ և 381-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել են հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործի լրիվ, բազմակողմանի և ամբողջական քննություն, վերջինիս կայացրած դատական ակտն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված չէ, այն չի պարունակում ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքն ու դրանից բխող եզրահանգումները, դրանում արտացոլված չեն այն կայացնելու համար անհրաժեշտ և բավարար փաստական ու իրավական հիմքերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման, հետևաբար գործն ըստ էության լուծող դատական ակտի նկատմամբ գործարքի փոփոխման նորմերը կիրառելի չեն:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

1) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատել է Արամ Սանոսյանի և Կարեն Մխիթարյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը հետևյալի մասին.

«(...) 1. Արամ Արտյուշի Սանոսյանը պարտավորվում է վճարել Կարեն Վանիկի Մխիթարյանին և Անժելլա Հարությունյանին 6.737.640 (վեց միլիոն յոթ հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ, սույն հաշտության համաձայնությունը ստորագրելուց և դատարանի կողմից հաստատվելուց հետո, Կարեն Մխիթարյանի և Անժելլա Հարությունյանի կողմից ք. Երևան, Կենտրոն, Ռոսպոմի փողոց 32/4 հասցեում գտնվող անշարժ գույքը և ք. Երևան, Կենտրոն, Ռոսպոմի փողոց 32/1 հասցեում գտնվող ավտոմեքլակ հասցեում գտնվող անշարժ գույքը հանձնելու պահին:

2. Արամ Արտյուշի Սանոսյանը պարտավորվում է ք. Երևան, Կենտրոն, Ռոսպոմի փողոց 26 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից (բնակարանը գտնվելու է Ռոսպոմի փողոցի վրա կառուցվող շենքում) ձեռք բերել և սեփականության իրավունքով Կարեն Վանիկի Մխիթարյանին և Անժելլա Հարությունյանին փոխանցել 7-րդ հարկում 58 (հիսունութ) ք.մ. մակերեսով մեկ բնակարան և այդ բնակարանին կից 42 (քառասուներկու) ք.մ. մակերեսով մեկ բնակարան՝ ներքին հարդարմամբ, որը պետք է կատարված լինի Արամ Սանոսյանի որոշած տեսակի և արժեքի նյութերով (լուսամուկները, դրսի դռները պետք է լինեն տեղադրված, միջսենյակային պատերը շարված, գաջած, ներկված սպիտակ ներկով, լամինատե հատակները (մեկ ք.մ. մինչև երկու հազար ՀՀ դրամ արժողությամբ), ներքին դռները (յուրաքանչյուրը մինչև քսանչորս հազար ՀՀ դրամ արժողությամբ), սանիտարական սարքավորումները (վաճարանը մինչև տասնչորս հազար ՀՀ դրամ արժողությամբ, զուգարանակոնքը մինչև քսանչորս հազար

ՀՀ դրամ արժողությամբ), էլեկտրական վարթակները և անջափիչները (յուրաքանչյուր բնակարանի համար ընդհանուր գնով մինչև տասնհինգ հազար ՀՀ դրամ արժողությամբ) տեղադրված, ինչպես նաև սանհանգույցը սալիկապատված (մեկ ք.մ. մինչև երկու հազար ՀՀ դրամ արժողությամբ)), սույն հաշվության համաձայնությունը ստորագրելուց և դատարանի կողմից հաստատվելուց հետո 36 (երեսունվեց) ամսվա ընթացքում:

3. Արամ Արտյուշի Սանոսյանը պարտավորվում է, որպես սույն հաշվության համաձայնության 2-րդ կետում նշված բնակարանների տրամադրման ապահովում տրամադրել 36.094.500 (երեսունվեց միլիոն ինսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով բանկային երաշխիք Կարեն Վանիկի Մխիթարյանի և Անժելլա Հարությունյանի կողմից սույն համաձայնության 6-րդ կետում նշված գույքը հանձնելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում: Սույն հաշվության համաձայնության 2-րդ կետում նշված պարտավորությունը Արամ Սանոսյանի կողմից չկատարելու դեպքում Կարեն Վանիկի Մխիթարյանը և Անժելլա Հարությունյանը իրավունք ունեն պահանջել Արամ Սանոսյանից վճարել բնակարանների տվյալ պահին գործող շուկայական արժեքին համարժեք գումար կամ ստանալ բանկային երաշխիքով սահմանված գումարը, իսկ եթե այդ գումարը բնակարանների տվյալ պահի շուկայական գնից պակաս լինելու դեպքում, տարբերություն կազմող գումարը ստանալ Արամ Սանոսյանից:

4. Մեկ ԱՄՆ դոլարի փոխարժեքը 481,26 ՀՀ դրամ է: Սույն հաշվության համաձայնությամբ գումարի վճարման օրը ԱՄՆ դոլարի փոխարժեքի ՀՀ դրամի նկատմամբ փոփոխության դեպքում կատարվում է վճարման ենթակա գումարի ինդեքսավորում: Սույն կետը չի կարող որևէ կերպ մեկնաբանվել արտարժույթով գնանշում:

5. ք. Երևան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 32/1 հասցեում գտնվող ավտոտնակ հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 0.004757 հա հողամասը և 31.7 ք.մ. մակերեսով ավտոտնակը Կարեն Վանիկի Մխիթարյանի և Անժելլա Հարությունյանի կողմից սեփականության իրավունքով հանձնվում է Արամ Արտյուշի Սանոսյանին: Սույն հաշվության համաձայնությունը դատարանի կողմից հաստատվելուց հետո, դատարանի վճիռը ներկայացվում է ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի համապատասխան ստորաբաժանում ք. Երևան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 32/1 հասցեում գտնվող ավտոտնակ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Արամ Արտյուշի Սանոսյանի սեփականության իրավունքը գրանցելու համար:

6. Կարեն Վանիկի Մխիթարյանը և Անժելլա Հարությունյանը պարտավորվում են ք. Երևան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 32/4 հասցեում գտնվող անշարժ գույքը և ք. Երևան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 32/1 հասցեում գտնվող ավտոտնակ հասցեում գտնվող անշարժ գույքը փաստացի հանձնել Արամ Սանոսյանին սույն հաշվության համաձայնությունը ստորագրելուց և դատարանի կողմից հաստատվելուց հետո 15 /տասնհինգ/ օրվա ընթացքում:

7. Կողմեր հաստատում են, որ սույն հաշվության համաձայնությունը դատարանի վճռով հաստատվելու և սույն հաշվության համաձայնությամբ սահմանված պարտավորությունները կատարելու պահից կողմերը միմյանց հանդեպ սույն վեճի (ք. Երևան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 32/4 հասցեի անշարժ գույքի և ք. Երևան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 32/1 հասցեում գտնվող ավտոտնակի վերաբերյալ) շրջանակներում պահանջ կամ պարտավորություններ չունեն: (...):»:

Նշված վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 80-85**).

2) սույն գործով ներկայացված հայցադիմումով Արամ Սանոսյանը, որպես իրավական հիմք վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածը, խնդրել է լուծել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի

թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները՝ որոշելով նշված գործարքների լուծման հետևանքները, մասնավորապես՝ սահմանելով պատասխանողների՝ մինչ օտարումն իրենց ունեցած անշարժ գույքերի շուկայական արժեքի փոխհատուցման չափը՝ ելնելով այդ գործարքները կատարելու կապակցությամբ իր ու պատասխանողների կողմից կրած ծախսերն իրար միջև արդարացի բաշխելու անհրաժեշտությունից (**հատոր 1-ին, գ.թ. 56-64**).

3) Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ քաղաքացիական դատավարության կարգով այն քննության ենթակա չլինելու հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 127-132**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ ու 182րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը դատական ակտի վերջնական և պարտադիր լինելու համապետությունը հարկ է համարում անդրադառնալ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնության դրույթները վերանայելու պահանջների քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու հարցին:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն

իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*տե՛ս Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*տե՛ս Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների ու հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*տե՛ս Khalifaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի: Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ, ի թիվս այլնի, ներառվում է նաև դրույթ այն մասին, որ կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած, դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի, արդարադատության սխալ իրականացման ուղղման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար (*տե՛ս Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան ու Միշա Վարդանյանների և մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով ՀՀ*

վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելիություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության հատկանիշն անմիջականորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի իրավակարգավորումից և ենթադրում է, որ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ու իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում (*տե՛ս Անժելա և Նունե Հարությունյաններն ընդդեմ Բեգլար Մկրտումյանի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները և Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքը, արձանագրել է, որ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային տարրերից մեկը դատական ակտերի կայունության կամ *res judicata* սկզբունքն է, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության խաթարման ու ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա: *Res judicata* սկզբունքի հիմքում ընկած է իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության և համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է դատարանների հեղինակությունն ու վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Իրավական պետության հայեցակարգից և դրանից ածանցվող իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքից բխում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նկատմամբ վստահության, այլ կերպ ասած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ճշմարտացիության կանխավարկածը, ինչից էլ բխում է ներպետական դատարանների վերջնական դատողությունները հարգելու ու դրանք կասկածի տակ չդնելու կանոնը:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նաև փաստել, որ օրինական ուժը դատական ակտի իրավական որոշակիության արտահայտումն է: Այդպիսով դատական ակտը ձեռք է բերում օրենքի ուժ՝ սահմանելով խիստ որոշակի վարքագծի կանոններ և դառնալով դրա հասցեատերերի համար պարտադիր: Բացի այդ, օրինական ուժի մեջ մտնելու պահից է դատական ակտն ստանում վերջնական բնույթ՝ կարգավորելով վիճելի իրավահարաբերությունները, դառնում պարտադիր և ապահովվում պետական հարկադրանքի ուժով (*տե՛ս ըստ Նունուֆար Հովհաննիսյանի դիմումի թիվ ՍնԴ/1166/04/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2025 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են անհերքելիությունը, բացառիկությունը, նախադատելիությունը, պարտադիրությունը և կատարելիությունը, ուղղված լինելով իրավունքի գերակայության, ներառյալ իրավական որոշակիության ու դրա դրսևորում հանդիսացող *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքի ապահովմանը, երաշխավորում են ոչ միայն դատական ակտով սահմանված պետաիշխանական պատվիրանների կենսագործումը, իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրական պաշտպանությունը, այլ նաև

դատական ակտի ու, որպես հետևանք, նաև քաղաքացիական շրջանառության կայունությունը՝ դատական վարույթի առարկա հանդիսացած վիճելի իրավահարաբերության սուբյեկտների և նրանց հետ որոշակի իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց ու մարմինների մոտ ձևավորելով իրավաչափ համոզում, որ վիճելի իրավահարաբերությունն այլևս անվիճելի է, վեճն սպառված է, իսկ կայացված դատական ակտը որոշակի և հաստատուն է ու որոշ ժամանակ անց չի վերացվի կամ փոփոխվի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով (...) կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է տնօրինչականության սկզբունքի բովանդակությանը՝ արձանագրելով, որ այն քաղաքացիական դատավարության հիմնաքարային սկզբունքներից է, որը յուրաքանչյուրի համար երաշխավորում է սեփական հայեցողությամբ իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակները տնօրինելու հնարավորություն: Տնօրինչականության սկզբունքը կողմերին ընձեռում է իրենց հայեցողությամբ օրենքով նախատեսված որոշակի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից հրաժարվելու ազատություն: Այն իր արտահայտումն է գտել դատարանի վարույթում գտնվող վեճը դատավարության ցանկացած փուլում հաշտության համաձայնությամբ ավարտելու գործին մասնակցող անձանց վերապահված հնարավորությամբ: Ընդ որում, հաշտության համաձայնությունը գործին մասնակցող անձանց համատեղ կամահայտնության արդյունքն է, այսինքն՝ երկկողմանի փոխհամաձայնեցված տնօրինչական գործողությունը (տես Սոնա Առաքելյանը և մյուսներն ընդդեմ Բուրասյան Դավթյանի և մյուսների թիվ ԱՐԱԴ/2965/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2022 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, որը ձևակերպվում է գրավոր, ստորագրում են գործին մասնակցող անձինք և ներկայացվում է դատարանի հաստատմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հաշտության համաձայնությունը քննարկվում է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց մասնակցությամբ, եթե վերջիններս չեն միջնորդել հաշտության համաձայնությունն իրենց բացակայությամբ քննարկելու վերաբերյալ: Նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը դատարանը դատական նիստին ներկայացած գործին մասնակցող անձանց պարզաբանում է դրա դատավարական հետևանքները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատվելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե՝

1) այն հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին.

2) խախտում է այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը.

3) պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել.

4) պարունակում է այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում առաջին ատյանի դատարանը վճիռ է կայացնում գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին, որը պետք է պարունակի նույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասով, 3-րդ մասի 1-9-րդ կետերով սահմանված տեղեկությունները և հաշտության համաձայնության բառացի շարադրանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը, ներառյալ՝ հաշտարարության արդյունքով կնքված հաշտության համաձայնությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական կարգով կնքված հաշտության համաձայնությանը, արձանագրել է, որ հաշտության համաձայնությունը կողմերի միջև փոխզիջման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածություն է, որը հաստատվում է դատարանի կողմից: Հաշտության համաձայնություն կնքելը տնօրինչական դատավարական գործողություն է, որի միջոցով կողմերը տնօրինում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ՝ դատավարական իրավունքները: Մասնավորապես, կնքելով նման համաձայնություն՝ կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ որոշակի փոփոխության են ենթարկում վիճելի իրավահարաբերությունը՝ այդ իրավահարաբերության շրջանակներում ստանձնելով նոր պարտավորություններ կամ վիճելի իրավահարաբերությունը փոխարինելով մեկ այլ իրավահարաբերությամբ կամ ուղղակիորեն դադարեցնելով այն: Վերը նշվածում դրսևորվում է հաշտության համաձայնության նյութաիրավական (քաղաքացիաիրավական) կողմը: Հաշտության համաձայնությամբ կողմերը միաժամանակ տնօրինում են իրենց դատավարական իրավունքները, ինչի արդյունքում դատավարության հետագա ընթացքը գործի վարույթի կարճմամբ դադարում է: Նշվածում էլ դրսևորվում է հաշտության համաձայնության դատավարական կողմը: Ընդ որում, հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն ըստ էության լուծող վճռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման (տես «Յունիբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

«Լուսակերտի Հարություն թոչնաբուժական ֆաբրիկա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6098/05/17 վարչական գործով 21.07.2021 թվականի որոշման շրջանակում անդրադառնալով դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով

ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց հարկային օրենսդրության իմաստով հարկվող գործարք հանդիսանալու հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտված դիրքորոշումները, արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքն առավել ցայտուն արտահայտվում է դատարանի վարույթում գտնվող վեճը հաշտության համաձայնությամբ ավարտելու կողմերին վերապահված հնարավորության մեջ, որն ուղղված է կողմերի միջև ծագած նյութաիրավական վեճի փոխադարձ կարգավորմանը՝ երկկողմանի ընդունելի պայմաններով: Միևնույն ժամանակ (...) տնօրինչականության սկզբունքը բացարձակ չէ, և նշված տնօրինչական գործողությունները կարող են իրացվել միայն օրինականության սկզբունքի պահպանության շրջանակներում՝ դատարանի վերահսկողություն ներքո: Այս տեսանկյունից դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատումը դիտարկվում է որպես օրինականության սկզբունքի ապահովման նախադրյալ, քանի որ միայն նման պայմաններում է հնարավոր ճիշտ կիրառել նյութական իրավունքի նորմերը և հասնել վեճի օրինաչափ լուծման: Հետևաբար՝ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման դատարանի կողմից, որի արդյունքում կողմերը փոխադարձ նյութաիրավական զիջումների ճանապարհով նորովի որոշում են իրենց իրավունքները և պարտականությունները և պարտավորվում են կամավոր կարգավորել իրենց միջև ծագած վեճը՝ փոխադարձաբար ընդունելի պայմաններով: (...) դատական կարգով հաստատված հաշտության համաձայնությունը, ըստ էության, նույնացվում է «գործարք» եզրույթի բնորոշմանն այն հաշվառմամբ, որ վերջինիս պայմանների վավերականությունը պետք է քննարկվի նյութական օրենսդրության կարգավորումների լույսի ներքո, և միայն կնքման ձևը և դատավարական հետևանքները պետք է կարգավորվեն դատավարական օրենսդրությամբ: Վերոգրյալով պայմանավորված՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը պետք է դիտարկել որպես՝

1. կողմերի տնօրինչական գործողություն, որն ուղղված է դատավարական վեճը լուծելու պայմանների համաձայնեցման միջոցով այն դադարեցնելուն,

2. նյութաիրավական վեճերն օրենքին չհակասող, այլ անձանց իրավունքները չխախտող փոխադարձաբար ընդունելի պայմաններով լուծելու եղանակ,

3. կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիր (գործարք), որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքները և պարտականությունները՝ դրանով իսկ դադարեցնելով իրենց միջև եղած վեճը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ, ի տարբերություն գործի վարույթն այլ հիմքերով կարճելու դեպքերի, կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատարանը կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վճիռ, որն օրինական ուժի մեջ մտնելու պահից ձեռք է բերում վերջնական ակտերին հատուկ հատկանիշներ՝ անհերքելիություն, պարտադիրություն և կատարելիություն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով գործի վարույթը կարճելու մասին վճռի եզրափակիչ մասում հաշտության համաձայնության բառացի շարադրանքը նշելու պահանջն ինքնանպատակ չէ: Հաշտության համաձայնության տեքստը բառացիորեն վերարտադրելով վճռի եզրափակիչ մասում՝ դատարանը դատական ակտում ոչ միայն արտացոլում է վեճը փոխադարձաբար ընդունելի պայմաններով լուծելու և վարույթը դադարեցնելու վերաբերյալ կողմերի կամահայտնությունը, այլ նաև վերարտադրում է այդ պայմանները՝ դրանց հաստատմամբ արձանագրելով այդ պայմանների համապատասխանությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

151-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված չափանիշներին, միաժամանակ **անհերքելիության, պարտադիրության ու կատարելիության հատկանիշ հաղորդելով նշված պայմաններից յուրաքանչյուրին**: Բացի այդ, վճռի եզրափակիչ մասում հաշտության համաձայնության բառացի շարադրանքի առկայությունը հնարավորություն է տալիս հետագայում շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կատարողական թերթ տրամադրելիս հաշտության համաձայնության բոլոր պայմանները նույնությամբ վերարտադրել հարկադիր կատարման հիմք հանդիսացող տվյալ փաստաթղթում՝ դրանով իսկ ամրագրելով օրենքով նախատեսված հարկադիր կատարման գործիքակազմով նշված պայմաններից յուրաքանչյուրի կատարումն ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունը:

Դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից եզրափակիչ դատական ակտը, այդ թվում՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռը, դառնում է վերջնական, քանի որ սպառվում է դրա հետագա բողոքարկման ու վերանայման հնարավորությունը, և այն ձեռք է բերում իրավական ակտի որոշակիության հատկանիշ՝ խիստ որոշակիացնելով վճռի կողմերի սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները, վերջնականորեն դադարեցնելով սուբյեկտիվ իրավունքի մասին վեճը: Վերջնական դառնալու պահից էլ դատական ակտի կատարումն ապահովվում է պետական հարկադրանքի ուժով, իսկ **դրա վերանայումը հնարավոր է դառնում միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով**:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի վերաքննության կարգով վերանայման իրավունքն ապահովվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բողոքարկվում են օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների (...) դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի, (...) դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել առաջին ատյանի դատարանի (...) օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝ գործին մասնակցող անձինք (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել երեք ամսվա ընթացքում, (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոք չի կարող ներկայացվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի: Նշված ժամկետը ենթակա չէ վերականգնման:

Վերը նշված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը գործին մասնակցող անձանց ոչ միայն վերապահել է դատավարության ցանկացած փուլում գործը հաշտության համաձայնությամբ ավարտելու, այլ նաև գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռը սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան բողոքարկելու, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետներում իրավասու դատարանին նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև հաշտության համաձայնությունը հանդիսանում է դատական վարույթի կողմերի ազատ կամահայտնությամբ կնքվող պայմանագիր (գործարք), որն ուղղված է փոխադարձաբար ընդունելի պայմաններով քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն, այդուհանդերձ վեճն ըստ էության լուծող դատական ակտով՝ վճռով հաստատվելու փաստի ուժով այն իր էությամբ ու իրավական հետևանքներով փոխակերպվում է դատական ակտի և կարող է վիճարկվել բացառապես օրենքով նախատեսված բողոքարկման կամ վերանայման մեխանիզմով: Նման պայմաններում գործին մասնակցող անձինք հաշտության համաձայնության դրույթները կարող են վիճարկել միայն տվյալ հաշտության համաձայնությունը հաստատած վճռի բողոքարկման կամ վերանայման օրենքով նախատեսված ընթացակարգերով: Համապատասխանաբար դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնության կամ դրա առանձին պայմանների նկատմամբ քաղաքացիական օրենսդրության՝ գործարքների անվավերության, պայմանագիրը դատական կարգով փոփոխելու կամ լուծելու վերաբերյալ իրավակարգավորումները կիրառելի չեն, հետևաբար դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնության պայմանները վերանայելու վերաբերյալ հայցերը, անկախ դրանց հիմքերից, ենթակա չեն քննության քաղաքացիական դատավարության կարգով, քանի որ այլևս դուրս են դատարանի իրավասության շրջանակներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձինք չեն օգտվում դատական ակտը բողոքարկելու օրենքով իրենց վերապահված հնարավորությունից, և գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռը մտնում է օրինական ուժի մեջ, այդ պահից այն ստանում է վերջնական բնույթ, դառնում է անհերքելի (անփոփոխելի, անբողոքարկելի), պարտադիր ու ապահովվում է պետական հարկադրանքի ուժով, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք ու քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով լուծված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում: Ըստ այդմ, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնության պայմանները վերանայելու վերաբերյալ հայցադիմումի ընդունումը պետք է մերժվի, իսկ այն

դեպքում, երբ այն սխալմամբ ընդունվել է վարույթ, դատարանը պարտավոր է կայացնել գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտ՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատվել է Արամ Սանոսյանի և Կարեն Մխիթարյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը: Նշված վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (տե՛ս փաստ 1):

Դիմելով դատարան՝ Արամ Սանոսյանը պահանջել է լուծել թիվ ԵԴ/3447/02/19 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները՝ որոշելով նշված գործարքների լուծման հետևանքները, մասնավորապես՝ սահմանելով պատասխանողների՝ մինչ օտարումն իրենց ունեցած անշարժ գույքերի շուկայական արժեքի փոխհատուցման չափը՝ ելնելով այդ գործարքները կատարելու կապակցությամբ իր ու պատասխանողների կողմից կրած ծախսերն իրար միջև արդարացի բաշխելու անհրաժեշտությունից:

Դատարանը 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճել է քաղաքացիական դատավարության կարգով այն քննության ենթակա չլինելու հիմքով՝ պատճառաբանելով, որ «(...) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 07.06.2019 թվականին կայացված թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատվել է կողմերի կնքած հաշտության համաձայնությունը, որով կողմերը համաձայնության են եկել բնակարաններ տրամադրելու, բնակարանները վերանորոգելու, փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ: Հաշտության համաձայնությունը հաստատվելու մասին դատարանի վճիռը չի բողոքարկվել և սրացել է օրինական ուժ: Սույն հայցով հայցվորը վիճարկում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության դրույթները, որպիսի հարցի քննության իրավասություն օրենսդիրը սույն դատարանին չի օժտել հակառակ մեկնաբանության դեպքում, կխախտվի օրինական ուժ սրացած դատական ակտի պարտադիրության, ինչպես նաև օրինականության սկզբունքը»:

Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշմամբ Արամ Սանոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը վերացվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) Վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Դատարանի նշված եզրահանգման իրավաչափությունը՝ Վերաքննիչ դատարանը այն գնահատում է ոչ իրավաչափ, քանի որ նախ՝ հայցվորը վիճարկում է ոչ թե օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության դրույթները, այլ՝ այդ դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությամբ կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիրն այլ հիմքով լուծելու հարց է առաջ քաշում և երկրորդ՝ Դատարանն անդրեսել է, որ հաշտության համաձայնությունը տնօրինական սկզբունքի իրացման արդյունքում կողմերի միջև կնքվող գործարք է, որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքները և պարտականությունները՝ դրանով իսկ վերացնելով նախկինում իրենց միջև եղած վեճը, ինչն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ դրանից հետո

պայմանագրի լուծման պահանջը չի կարող դուրս լինել դատարանի քննության առարկայի շրջանակներից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ Դատարանը կայացրել է քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշում, առանց դրա իրավական հիմքերի առկայության, ուստի վերաքննիչ բողոքի համապատասխան հիմքի առկայությունը բավարար է Դատարանի որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ վերացնելու և քաղաքացիական գործը նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննություն ուղարկելու համար»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատված համաձայնությունը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Տվյալ դեպքում Արամ Սանոսյանի կողմից դատարան է ներկայացվել վերը նշված վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները լուծելու պահանջ, այսինքն՝ սույն գործով վեճի առարկան օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության դրույթներն են, որպիսի իրավաչափ եզրահանգման եկել է Դատարանը:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով «Լուսակերտի Հարություն թոչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6098/05/17 վարչական գործով 21.07.2021 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, որ դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությունը, ի թիվս այլի, պետք է դիտարկել նաև որպես կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիր (գործարք), հարկ է համարում արձանագրել, որ այն արտահայտվել է դատական ակտով հաստատված հաշտության համաձայնության հիման վրա անշարժ գույքի օտարումը փոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց հարկային օրենսդրության իմաստով «հարկվող գործարք» հանդիսանալու հարցի համատեքստում, և ամենևին չի հետապնդել նպատակ թե՛ նյութաիրավական և թե՛ դատավարական հետևանքներով նույնացնելու «գործարք (պայմանագիր)» և «դատական ակտով հաստատված հաշտության համաձայնություն» հասկացությունները՝ ինքնաբերաբար վերջինի նկատմամբ կիրառելի դարձնելով քաղաքացիական օրենսդրության՝ գործարքի (պայմանագրի) անվավերության կամ այն փոփոխելու և լուծելու մասին կանոնները:

Նշվածգործովարտահայտվածդիրքորոշմանլույսիներքոանդրադառնալովփոխառության պայմանագրով ստացված գումարի չվերադարձված մասի դիմաց անշարժ գույքի օտարմանը, որըկատարվելէդատականակտովհաստատվածհաշտությանհամաձայնությամբ՝ՀՀվճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային պարտավորությունների առաջացման համար հատկանշական է հիմնական միջոցների և այլ ակտիվների օտարման կամ սեփականության իրավունքի փոխանցման փաստը, այլ ոչ թե նշված գործողության իրացման եղանակը: Նման պայմաններում (...) այն դեպքում, երբ փոխառության պայմանագրով նախատեսված վերադարձման ենթակա գումարի կամ գումարի չվերադարձված մասի դիմաց օտարվում է անշարժ գույք, ըստ էության տեղի է ունենում հիմնական միջոցի օտարում, իսկ փոխառության պայմանագրով տրամադրված գումարը կամ դրա չվերադարձված մասը դիտարկվում է որպես հիմնական միջոցի օտարումից ստացվող հասույթ: Վերջինս իր հերթին դասվում է

եկամուտների թվին և ենթակա է ներառման հաշվետու տարում հարկատուի համախառն եկամտի մեջ: (...) հակառակ մեկնաբանության պայմաններում հարկային օրենսդրության իմաստով գույքի օտարումը կարող է ներկայացվել որպես փոխառության պայմանագրով ստացված և չվերադարձված գումարի դիմաց տրվող հատուցում և պարտավորության մարում՝ հնարավորություն տալով շրջանցել գույքի օտարման համար սահմանված հարկային պարտավորությունները:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.06.2019 թվականի թիվ ԵԴ/3447/02/19 վճռով հաստատված հաշտության համաձայնության 2-րդ և 3-րդ կետերում թվարկված գործարքները կարող էին վիճարկել բացառապես նշված հաշտության համաձայնությունը հաստատած վճիռը բողոքարկելու միջոցով, այնինչ նշված վճիռը չի բողոքարկվել ու մտել է օրինական ուժի մեջ, այսինքն՝ դարձել է վերջնական և պարտադիր, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ հայցվորն առաջ է քաշում օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հաշտության համաձայնությամբ կողմերի միջև կնքվող քաղաքացիաիրավական պայմանագիրն այլ հիմքով լուծելու հարց, և որ հաշտության համաձայնությունը տնօրինչական սկզբունքի իրացման արդյունքում կողմերի միջև կնքվող գործարք է, որի ուժով վերջիններս վիճելի իրավահարաբերության մասով նորից են որոշում իրենց իրավունքներն ու պարտականությունները՝ դրանով իսկ վերացնելով նախկինում իրենց միջև եղած վեճը, ինչից էլ հետևում է, որ դրանից հետո պայմանագրի լուծման պահանջը չի կարող դուրս լինել դատարանի քննության առարկայի շրջանակներից, անհիմն են և չեն բխում սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից, քանի որ դատարանի վճռով հաստատված հաշտության համաձայնությունը կամ դրա առանձին պայմանները չեն կարող վերանայվել նույնիսկ հանգամանքների էական փոփոխության հիմքով:

Վերոգրյալից հետևում է, որ Դատարանը, 24.11.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով կարճելով գործի վարույթը, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ և 182-րդ հոդվածների այնպիսի խախտում թույլ տալը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտին ամբողջությամբ բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելը և Դատարանի դատական ակտին ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանն օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործով մի քանի հայցվորների կամ բողոք բերողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, իսկ մի քանի պատասխանողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, բացառությամբ այն դեպքի, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն: Այդ դեպքում պատասխանողները կրում են դատական ծախսերի փոխհատուցման համապարտ պարտականություն: Մասնաբաժինները որոշելու անհնարինության դեպքում դատական ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Վճռաբեկ բողոքը բավարարելու՝ Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշումը բեկանելու և Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանն ամբողջությամբ օրինական ուժ տալու պայմաններում անդրադառնալով պետական տուրք բռնագանձելու հարցին՝ Վճռաբեկ

դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ դատական ծախսերի բաշխման հարցը լուծված լինելու, ինչպես նաև Վերաքննիչ դատարանում Արամ Սանոսյանի կողմից վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի գումարը վճարված լինելու պայմաններում դատական ծախսերի բաշխման հարցն այդ մասերով պետք է համարել լուծված: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի 17.03.2023 թվականի որոշման դեմ վճարել բողոք ներկայացնելու համար Համապատասխանողները վճարել են 20.000 ՀՀ դրամ, իսկ ներկայացված վճարել բողոքը բավարարվում է և օրինական ուժ է տրվում Դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը, Վճարել դատարանը գտնում է, որ Արամ Սանոսյանից հոգուտ Համապատասխանողների գանձման է ենթակա 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճարել դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2023 թվականի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 24.11.2022 թվականի «Գործի վարույթը կարճելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

2. Արամ Սանոսյանից հոգուտ Կարեն Մխիթարյանի և Անժելա Հարությունյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԵԴ/0646/01/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

5 դեկտեմբերի 2025 թվական

ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալներ Անրրի Մանուկի Սեդոյանի և Կարեն Արշակի Մարությանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 19-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի նոյեմբերի 10-ին, ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով, 301-րդ հոդվածով ու 301.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 58231520 քրեական գործը:

1.1. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ի, 18-ի, 20-ի և 23-ի ու դեկտեմբերի 11-ի որոշումներով թիվ 58231620, 58232220, 59105720, 58232520, 58232620, 70900820 և 58233720 քրեական գործերը միացվել են թիվ 58231520 քրեական գործին:

1.2. 2021 թվականի մարտի 31-ին Անրրի Մանուկի Սեդոյանն ու Կարեն Արշակի Մարությանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ Անրրի Սեդոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով և 324-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Կարեն Մարությանը ներգրավվել է որպես մեղադրյալ, ու նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով ու 324-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ մեղադրյալ Կ.Մարությանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Սեդոյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մայիսի 12-ի որոշմամբ Ա.Սեդոյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով և 324-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Կ.Մարությանին առաջադրված մեղադրանքը ևս փոփոխվել է, ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով ու 324-րդ հոդվածի 1-ին մասով:

1.3. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մայիսի 12-ի որոշմամբ թիվ 58231520 քրեական գործից մեղադրյալներ Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով և 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները ենթադրաբար կատարելու մասն անջատվել է առանձին վարույթում, որին շնորհվել է 58212421 համարը:

2021 թվականի մայիսի 19-ին թիվ 58212421 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 13-ի դատավճռով ճանաչվել ու հռչակվել է Ա.Սեդոյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Ա.Սեդոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանք: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, Ա.Սեդոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ սկիզբը հաշվելով 2021 թվականի մարտի 31-ից, և տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Նույն դատավճռով ճանաչվել ու հռչակվել է Կ.Մարությանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Կ.Մարությանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս ժամկետով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Կ.Մարությանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ սկիզբը հաշվելով 2021 թվականի մարտի 31-ից:

Դատախազության կողմից ներկայացված քաղաքացիական հայցը մերժվել է:

3. Դատախազի և մեղադրյալների պաշտպանների վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝

նաև Վերաքննիչ դատարան) 2022 թվականի դեկտեմբերի 19-ին որոշում է կայացրել բողոքները մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 13-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու ու փոփոխելու մասին: Ճանաչվել և հռչակվել է Ա.Սեդոյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով Ա.Սեդոյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, որին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ 1 (մեկ) տարի 8 (ութ) ամիս 19 (տասնինը) օրը, և նրան թողնվել է կրելու ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 9 (ինը) ամիս 11 (տասնմեկ) օր ժամկետով: 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի հիման վրա, ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ու սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Ա.Սեդոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է չհեռանալու մասին ստորագրությամբ:

Նույն որոշմամբ ճանաչվել և հռչակվել է Կ.Մարությանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ կետերով Կ.Մարությանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ սկիզբը հաշվելով 2021 թվականի մարտի 31-ից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունիսի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է վարույթի ելքի վրա, ու միաժամանակ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտություն:

Այսպես, բողոք բերած անձը գտել է, որ մեղադրյալներ Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի՝ Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենք մուտք գործելը, այնտեղ տեղի ունեցող զանգվածային անկարգություններին մասնակցելն ու հափշտակություններ կատարելը հաստատվում է քրեական վարույթով ձեռք բերված և դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների ամբողջությամբ, իսկ հակառակի մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնված է ենթադրությունների վրա:

Անդրադարձ կատարելով Վերաքննիչ դատարանի ներկայացրած փաստարկներին՝ բողոքի հեղինակը նախ արձանագրել է, որ դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով, այդ թվում՝ վիճարկվող դատական ակտում մատնանշված, հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք բավարար են արձանագրելու ոչ միայն մեղադրյալներին վերագրված գործողությունների ժամանակագրությանը, այլ նաև դրանց բովանդակությունն ու դրանցից յուրաքանչյուրի նպատակը: Իսկ զանգվածային անկարգություններն ավարտված լինելու պահի առումով ստորադաս դատարանի հետևությունը կառուցված է ենթադրությունների վրա: Ինչ վերաբերում է «անձանց առանձին փոքր խմբերի առկայությունը» Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշելուն, ապա զանգվածային

անկարգությունների հասկացությանն օրենսդրի կողմից տրված բովանդակության իմաստով, նույնիսկ անձանց փոքր խմբի համապատասխան գործողությունները կարող են դիտարկվել որպես զանգվածային անկարգություններ: Բացի այդ, նման պնդումը չի բխում վարույթի փաստական հանգամանքներից, քանի որ քրեական գործով հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածում առկա է եղել ամբոխ, որի գործողությունները Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում ծառայություն իրականացնող ոստիկանության ուժերի կողմից հնարավոր չի եղել խափանել:

Բողոքաբերը նաև փաստարկել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքի երկրորդ հարկում գտնվող թիվ 221 աշխատասենյակից հափշտակություն կատարված չլինելու պայմաններում, մեղադրյալների կողմից քննությամբ չպարզված անձանց հետ այդ աշխատասենյակի դռանը հարվածելն ու այն կոտրելը որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես հափշտակություն կատարելու համար խոչընդոտներ վերացնել, և հանդիսանում են զանգվածային անկարգություններին մեղադրյալների մասնակցությունը հիմնավորող գործողություններ: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքի տարբեր հարկերի որոշ աշխատասենյակներում առկա պահարանները բացելու, ուսումնասիրելու և աշխատասենյակներում առկա գույքը խմբավորելու վերաբերյալ փաստական տվյալները, մեղադրյալների անձը բնութագրող տվյալների հետ մեկտեղ գնահատելով, ինչպես նաև արձանագրելով մեղադրյալների ներկայացրած՝ հիշյալ մասնաշենք մուտք գործելու պատճառի անարժանահավատ լինելը՝ բողոքի հեղինակը եզրահանգել է, որ այդպիսիք իրենց համակցությամբ հիմնավորում են մեղադրյալների կողմից մեղադրանքում նշված առարկաների, այդ թվում՝ դիվանագիտական անձնագրի հափշտակությունը: Այս համատեքստում փաստարկելով, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալների գործողությունները դիտարկել է որպես հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ մասը, այլ խոսքով, հետևություն է կատարել հափշտակություն կատարելու դիտավորությամբ համապատասխան աշխատասենյակներ մուտք գործելու մասին՝ բողոք բերած անձն անտրամաբանական է գնահատել նշված աշխատասենյակներից հափշտակություն կատարելն անհիմն համարելու Վերաքննիչ դատարանի հետևությունը: Վերոգրյալով փոխկապակցված, բողոքի հեղինակը հիմնավոր չի գնահատել նաև ներկայացված քաղաքացիական հայցի մերժումը:

Հղում կատարելով մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների փաստական նկարագրությանը՝ բողոքի հեղինակն արձանագրել է, որ մեղադրանքներում «այլ գործողություններով» արտահայտություն ձևակերպված լինելը չի ազդում վերագրված արարքների քրեաիրավական որակման և դրա նկարագրի վրա: Մինչույն ժամանակ, ըստ բողոքաբերի՝ սույն դեպքում «այլ գործողություններ» են հանդիսացել հափշտակություններ կատարելը, զանգվածային անկարգությունների կատարման վայրում շարունակական գտնվելն ու քաղաքացիական հասարակության անդամի պարտականությունները չկատարելը:

5.1. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Ա.Սեդոյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չլիքառելու հարցում Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության, իսկ Կ.Մարությանի նկատմամբ՝ նշանակել անարդարացի՝ ակնհայտ մեղմ պատիժ:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ. մեղադրյալ Ա.Սեդոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով և 324-

րդ հոդվածի 1-ին մասով ու հանցանքների համակցության կանոններով նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2021 թվականի մարտի 31-ից: Կ.Մարությանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով և 324-րդ հոդվածի 1-ին մասով ու հանցանքների համակցության կանոններով նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 8 (ութ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2021 թվականի մարտի 31-ից:

Վճռաբեկ բողոքի պատասխանը.

7. Կ.Մարությանի պաշտպան Գ.Գալիկյանը, ներկայացրած դատական վերանայման բողոքի պատասխանում նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ չի տրվել նյութական կամ քրեադատավարական օրենքի խախտում, որը կարող էր հիմք հանդիսանալ վիճարկվող որոշումը փոփոխելու համար:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոքի պատասխանի հեղինակը խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի վճռաբեկ բողոքը՝ բողոքարկվող դատական ակտը թողնելով անփոփոխ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Անրիի Սեդոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով և 324-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքների համար, որ նա «2020 թվականի նոյեմբերի 10-ին Երևան քաղաքում բազմաթիվ անձանց հեղափոխական մասնակցել է ջարդերով, գույք ոչնչացնելով և վնասելով զուգորդված զանգվածային անկարգություններին, ինչպես նաև՝ նախնական համաձայնության գալով Կ.Մարությանի հեղափոխական մուրք գործելով ՀՀ Կառավարության շենքի թիվ 218, 219 և 402 աշխատասենյակներ՝ կարարել է խոշոր չափերով ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն:

Այսպես.

Ա.Սեդոյանը, Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմը դադարեցնելու մասին 2020 թվականի նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության միջև ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելուց հետո Կ.Մարությանի հեղափոխական մուրք գործելով ՀՀ Կառավարության թիվ 218, 219 և 402 աշխատասենյակներ՝ կարարել է խոշոր չափերով ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն:

Այդ ժամանակ, երբ զանգվածային անկարգությունների այլ մասնակիցներ ուրքերով հարվածներ հասցնելով կոտրել են ՀՀ Կառավարության շենքի երկրորդ հարկի թիվ 218 աշխատասենյակի դուռը և մուրք գործել ներս, Ա.Սեդոյանն ու Կ.Մարությանը, գործելով նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն կատարելու մեկ միասնական դիտարկությամբ նրանց հետևից ապօրինի մուրք են գործել շինություն հանդիսացող հիշյալ աշխատասենյակ և այնտեղ գտնվող պահարանից բացահայտ հափշտակելով ՀՀ վարչապետի աշխատակազմի աշխատակից Ա.Ս.-ին պատկանող, 17.000 ՀՀ դրամ արժողության կանացի անթև մուշտակը, որն Ա.Սեդոյանը հագած վիճակում դուրս է

բերել աշխատասենյակից:

Այնուհետք, Ա.Սեդոյանն ու Կ.Մարությանը, շարունակելով իրենց հանցավոր գործողությունները, նախնական համաձայնության գալով, ապօրինի մուտք են գործել շինություն հանդիսացող՝ ՀՀ Կառավարության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության թիվ 219 աշխատասենյակ, որտեղ գտնվող պահարանից բացահայտ հափշտակել են գլխավոր մասնագետ Ա.Մ.-ին պատկանող, 90.000 ՀՀ դրամ արժողության պիջակը, որն Ա.Սեդոյանի հագին գտնվող, Ա.Ս.-ին պատկանող մուշտակի հետ տեղավորել են պոլիէթիլենային տոպրակի մեջ և տարել իրենց հետ:

Այնուհետք, Ա.Սեդոյանն ու Կ.Մարությանը քննությամբ չպարզված անձանց հետ ՀՀ Կառավարության շենքի երկրորդ հարկում ուղքերով հարվածներ են հասցրել ՀՀ փոխվարչապետի խորհրդականին հատկացված թիվ 221 աշխատասենյակի դռանը, կտրել այն և մյուսների հետ մտել ներս՝ այդ և այլ գործողություններով ակտիվորեն մասնակցելով Կառավարության շենքում կատարվող զանգվածային անկարգություններին, ինչի արդյունքում ջարդվել են ՀՀ վարչապետի, Կառավարության անդամների և աշխատակազմի մի շարք աշխատասենյակների դռները, առանձնապես խոշոր չափերով վնասվել կամ ոչնչացվել է ՀՀ գործադիր իշխանության բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ պետական և մասնավոր գույքը, խաթարվել է ՀՀ Կառավարության գործունեությունը, վրանգվել է հասարակական անվտանգությունը:

Այնուհետք, Ա.Սեդոյանն ու Կ.Մարությանը, շարունակելով իրենց հանցավոր գործողությունները, նախնական համաձայնությամբ ապօրինի մուտք են գործել շինություն հանդիսացող՝ ՀՀ վարչապետի արարողակարգի պատասխանատու Վ.Հ.-ին հատկացված թիվ 402 աշխատասենյակ, որտեղից բացահայտ հափշտակել են պետությանը պատկանող խոշոր չափերի՝ 1.903.975 ՀՀ դրամ ընդհանուր արժողության տարբեր ապրանքներ՝ 425.000 ՀՀ դրամ արժողության «Էրեբունի 50», 50.000 ՀՀ դրամ արժողության «Ազնավուր», 25.125 ՀՀ դրամ արժողության «Դվին», 21.850 ՀՀ դրամ արժողության «Նաիրի» տեսակի կոնյակներ, յուրաքանչյուրը 74.000 ՀՀ դրամ արժողության՝ 3 հատ «AWI» ապրանքանիշի ժամացույցներ՝ «ՀՀ վարչապետից» գրառմամբ, Ղազախստանի զինանշանով գրիչ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված, 5 հատ «Հովհաննես Թումանյան», յուրաքանչյուրը 232.000 ՀՀ դրամ արժողության՝ 5 հատ «Գալուստ Գյուլբենկյան», անվանումով տարբեր հուշադրամներ, ինչպես նաև Վ.Հ.-ին 2019 թվականի մայիսի 8-ին տրված՝ ***** սերիա-համարի դիվանագիտական անձնագիրը¹:

9.1. Կարեն Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերով և 324-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքների համար, որ նա «2020 թվականի նոյեմբերի 10-ին Երևան քաղաքում բազմաթիվ անձանց հետ միասին մասնակցել է ջարդերով, գույք ոչնչացնելով և վնասելով զուգորդված զանգվածային անկարգություններին, ինչպես նաև՝ նախնական համաձայնության գալով Ա.Սեդոյանի հետ, ապօրինի մուտք գործելով ՀՀ Կառավարության շենքի թիվ 218, 219 և 402 աշխատասենյակներ՝ կատարել է խոշոր չափերով ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն:

Այսպես.

Կ.Մարությանը, Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմը դադարեցնելու մասին 2020 թվականի նոյեմբերի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 306-317:

10-ին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության միջև ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելուց հետո տեղեկանալով այդ մասին, հորեղբոր որդու՝ Ա.Սեդոյանի, հետ գնացել է ՀՀ Կառավարության թիվ մեկ շենքի մոտ, միացել այնտեղ գտնվող ամբոխին և ապօրինի մուտք գործել ՀՀ Կառավարության վարչական շենք, որտեղ մասնակցել են ջարդերով, գույք ոչնչացնելով և վնասելով զուգորդված զանգվածային անկարգություններին:

Այդ ժամանակ, երբ զանգվածային անկարգությունների այլ մասնակիցներ ուրբերով հարվածներ հասցնելով կոտրել են ՀՀ Կառավարության շենքի երկրորդ հարկի թիվ 218 աշխատասենյակի դուռը և մուտք գործել ներս, Կ.Մարությանն ու Ա.Սեդոյանը, գործելով նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն կատարելու մեկ միասնական դիտավորությամբ նրանց հետևից ապօրինի մուտք են գործել շինություն հանդիսացող հիշյալ աշխատասենյակ և այնտեղ գտնվող պահարանից բացահայտ հափշտակել ՀՀ վարչապետի աշխատակազմի աշխատակից Ա.Ս.-ին պարկանող, 17.000 ՀՀ դրամ արժողության կանացի անթև մուշտակը, որն Ա.Սեդոյանը հագած վիճակում դուրս է բերել աշխատասենյակից:

Այնուհետ, Կ.Մարությանն ու Ա.Սեդոյանը, շարունակելով իրենց հանցավոր գործողությունները, նախնական համաձայնության գալով, ապօրինի մուտք են գործել շինություն հանդիսացող՝ ՀՀ Կառավարության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության թիվ 219 աշխատասենյակ, որտեղ գտնվող պահարանից բացահայտ հափշտակել են գլխավոր մասնագետ Ա.Մ.-ին պարկանող, 90.000 ՀՀ դրամ արժողության պիջակը, որն Ա.Սեդոյանի հագին գտնվող, Ա.Ս.-ին պարկանող մուշտակի հետ տեղավորել են պոլիէթիլենային տոպրակի մեջ և տարել իրենց հետ:

Այնուհետև, Կ.Մարությանն ու Ա.Սեդոյանը քննությամբ չպարզված անձանց հետ ՀՀ Կառավարության շենքի երկրորդ հարկում ուրբերով հարվածներ են հասցրել ՀՀ փոխվարչապետի խորհրդականին հարկացված թիվ 221 աշխատասենյակի դռանը, կոտրել այն և մյուսների հետ մտել ներս՝ այդ և այլ գործողություններով ակտիվորեն մասնակցելով կառավարության շենքում կատարվող զանգվածային անկարգություններին, ինչի արդյունքում ջարդվել են ՀՀ վարչապետի, կառավարության անդամների և աշխատակազմի մի շարք աշխատասենյակների դռները, առանձնապես խոշոր չափերով վնասվել կամ ոչնչացվել է ՀՀ գործադիր իշխանության բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ պետական և մասնավոր գույքը, խաթարվել է ՀՀ Կառավարության գործունեությունը, վրանգվել է հասարակական անվտանգությունը:

Այնուհետ, Կ.Մարությանն ու Ա.Սեդոյանը, շարունակելով իրենց հանցավոր գործողությունները, նախնական համաձայնությամբ ապօրինի մուտք են գործել շինություն հանդիսացող՝ ՀՀ վարչապետի արարողակարգի պալատի սանատու Վ.Հ.-ին հարկացված թիվ 402 աշխատասենյակ, որտեղից բացահայտ հափշտակել են պետությանը պարկանող խոշոր չափերի՝ 1.903.975 ՀՀ դրամ ընդհանուր արժողության տարբեր ապրանքներ՝ 425.000 ՀՀ դրամ արժողության «Էրեբունի 50», 50.000 ՀՀ դրամ արժողության «Ազնավուր», 25.125 ՀՀ դրամ արժողության «Դվին», 21.850 ՀՀ դրամ արժողության «Նաիրի» տեսակի կոնյակներ, յուրաքանչյուրը 74.000 ՀՀ դրամ արժողության՝ 3 հապ «AWI» ապրանքանիշի ժամացույցներ՝ «ՀՀ վարչապետից» գրառմամբ, Ղազախստանի զինանշանով գրիչ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված, 5 հապ «Հովհաննես Թումանյան», յուրաքանչյուրը 232.000 ՀՀ դրամ արժողության՝ 5 հապ «Գալուստ Գյուլբենկյան», անվանումով տարբեր հուշադրամներ, ինչպես նաև Վ.Հ.-ին 2019 թվականի մայիսի 8-ին տրված՝ ***** սերիա-համարի

դիվանագիտական անձնագիրը»²:

10. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) [2]ի ձևավորվել ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը թույլ կտար եզրահանգում կատարել ամբաստանյալներից յուրաքանչյուրի՝ Ա.Սեդոյանի և Կ.Մարության կողմից Վ.Հ.-ին 2019 թվականի մայիսի 8-ին տրված՝ ***** սերիա-համարի դիվանագիտական անձնագրի բացահայտ հափշտակություն կատարելու ապացուցվածության վերաբերյալ:

Թեև «AylLur.am» կայքէջում հրապարակված և [Առաջին ատյանի դ]ատարանում հետազոտված տեսաձայնագրության մեջ երևում է, որ Կ.Մարությանը և Ա.Սեդոյանը գտնվում են ՀՀ Կառավարության թիվ 1 շենքի թիվ 402 աշխատասենյակում, որտեղ պահարանից դուրս են բերում, ուսումնասիրում և խմբավորում տուփերում եղած ապրանքները, թեև գործով բավարար ապացույցներ են առկա՝ Վ.Հ.-ին 2019 թվականի մայիսի 8-ին տրված ***** սերիա-համարի դիվանագիտական անձնագրի ենթադրաբար հափշտակված լինելու վերաբերյալ, այնուամենայնիվ բավարար ապացույցներ առկա չեն հաստատված համարելու համար ամբաստանյալների կամ նրանցից որևէ մեկի կողմից, Վ.Հ.-ին պատկանող, վերը նշված դիվանագիտական անձնագիրը բացահայտ հափշտակելու հանգամանքը:

Այսպիսով, (...) [Առաջին ատյանի դ]ատարանը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու համար, որ ամբաստանյալները կամ նրանցից որևէ մեկը՝ կատարել են ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, նրանց վերագրվող հանցավոր արարքը:

(...)

Հետազոտելով գործի ապացույցները, այդ թվում՝ ամբաստանյալներ Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի ցուցմունքները, որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված, Կ.Մարությանի և Ա.Սեդոյանի կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ ՀՀ Կառավարության թիվ 1 շենքի 2-րդ հարկի 221 աշխատասենյակի դռանը ուղարկված և վնասելը պատկերող, ինչպես թիվ 218, 219 և 402 աշխատասենյակներում նրանց արարքների վերաբերյալ տեսագրությունները, դրանք պարունակող լազերային սկավառակի զննության արձանագրությունները՝ [Առաջին ատյանի դ]ատարանը գտնում է, որ առկա չէ որևէ ուղղակի ապացույց, որի հիման վրա հնարավոր կլիներ գալ եզրահանգման՝ ամբաստանյալներից որևէ մեկի կողմից ՀՀ Կառավարության շենքի թիվ 218, 219 և 402 աշխատասենյակներից որևէ այլ գույքի հափշտակություն կատարելու վերաբերյալ՝ բացի տուժող Ա.Ս.-ին պատկանող՝ 17.000 ՀՀ դրամ արժողությամբ կանացի անթև մուշտակից:

Ամբաստանյալներից յուրաքանչյուրի՝ ՀՀ Կառավարության շենքի վերոհիշյալ սենյակներում գտնվելու, սենյակներում առկա պահարանների դռները բացելու, իրերն ուսումնասիրելու, խմբավորելու հանգամանքը դեռևս բավարար չէ հիմնավորված համարելու համար, որ Ա.Ս.-ն պատկանող, 90.000 ՀՀ դրամ արժողությամբ պիջակը, 425.000 ՀՀ դրամ արժողությամբ «Էրեբունի 50», 50.000 ՀՀ դրամ արժողությամբ «Ազնավուր», 25.125 ՀՀ դրամ արժողությամբ «Դվին», 21.850 ՀՀ դրամ արժողությամբ «Նաիրի» տեսակի կոնյակները, «ՀՀ վարչապետից» գրառմամբ՝ յուրաքանչյուրը 74.000 ՀՀ դրամ արժողությամբ երեք հափ «AWI» ապրանքանիշի ժամացույցները, Ղազախստանի զինանշանով գրիչը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված հինգ հափ «Հովհաննես Թումանյան», յուրաքանչյուրը 232.000 ՀՀ դրամ արժողությամբ հինգ հափ «Գալուստ Գյուլբենկյան» անվանումով տարբեր հուշադրամները

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 306-317:

բացահայտ հափշտակվել են Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի կողմից:

Այսպիսով, (...) [Առաջին արյանի դ]ադարանը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ ամբաստանյալներից յուրաքանչյուրը՝ Ա.Սեդոյանը և Կ.Մարությանը կատարել են ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցավոր արարք, (...) ուստի ամբաստանյալներից յուրաքանչյուրին՝ Ա.Սեդոյանին և Կ.Մարությանին առաջադրված մեղադրանքի ծավալից պետք է հանվի ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը:

(...) [Առաջին արյանի դ]ադարանը դադարանությունամբ և գործի տվյալներով հիմնավորված է համարում հետևյալը.

Ամբաստանյալներ Ա.Սեդոյանը և Կ.Մարությանը, Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմը դադարեցնելու մասին 2020թ. նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության միջև ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելուց հետո, տեղեկանալով այդ մասին՝ գնացել են ՀՀ Կառավարության թիվ մեկ շենքի մոտ, միացել այնտեղ գտնվող ամբոխին և ապօրինի մուտք գործել ՀՀ Կառավարության վարչական շենք, որտեղ մասնակցել են ջարդերով, գույք ոչնչացնելով և վնասելով զուգորդված զանգվածային անկարգություններին:

Այդ ժամանակ, երբ զանգվածային անկարգությունների այլ մասնակիցները ոտքերով հարվածել և կոտրել են ՀՀ Կառավարության առաջին շենքի երկրորդ հարկի թիվ 218 աշխատասենյակի դուռը և մուտք գործել ներս՝ Ա.Սեդոյանն ու Կ.Մարությանը, նախնական համաձայնությամբ, ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն կատարելու մեկ միասնական դիտարկությամբ ապօրինի մուտք են գործել շինություն հանդիսացող հիշյալ աշխատասենյակ և այնտեղ գտնվող պահարանից բացահայտ հափշտակել ՀՀ վարչապետի աշխատակազմի աշխատակից Ա.Ս.-ին պատկանող, 17.000 ՀՀ դրամ արժողությամբ, կանացի, անթև մուշտակը, որն Ա.Սեդոյանը հագած վիճակում դուրս է բերել աշխատասենյակից:

Այնուհետև, Ա.Սեդոյանն ու Կ.Մարությանը քննությամբ չպարզված անձանց հետ, ՀՀ Կառավարության շենքի երկրորդ հարկում, ոտքերով հարվածներ են հասցրել ՀՀ փոխվարչապետի խորհրդականին հատկացված թիվ 221 աշխատասենյակի դռանը, կոտրել այն և մյուսների հետ մտել ներս՝ այդ և այլ գործողություններով ակտիվորեն մասնակցելով կառավարության շենքում կատարվող զանգվածային անկարգություններին, ինչի արդյունքում ջարդվել են ՀՀ վարչապետի, կառավարության անդամների և աշխատակազմի մի շարք աշխատասենյակների դռները, առանձնապես խոշոր չափերով վնասվել կամ ոչնչացվել է ՀՀ գործադիր իշխանության բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ պետական և մասնավոր գույքը, խաթարվել է ՀՀ Կառավարության գործունեությունը, վրանգվել է հասարակական անվտանգությունը:

Այսպիսով, (...) [Առաջին արյանի դ]ադարանը գտնում է, որ ամբաստանյալներից յուրաքանչյուրին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով առաջադրված մեղադրանքը հիմնավորող ցուցմունքներն արժանահավասար են, հաստատվում են քրեական գործի քննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցների համակցությամբ:

Ամբաստանյալ Կ.Մարությանի ցուցմունքն այն մասին, որ ինքը զանգվածային անկարգություններին չի մասնակցել և մի խումբ անձանց կողմից նախնական

համաձայնությամբ շինություն ապօրինի մուտք գործելով ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն չի կատարել՝ իրականությանը չի համապատասխանում, արժանահավատ չէ, քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակ է հետապնդում և հերքվում է վերոհիշյալ ապացույցներով:

Ամբաստանյալ Ա.Սեդոյանի ցուցմունքն այն մասին, որ ինքը զանգվածային անկարգություններին չի մասնակցել և իր կողմից կանացի անթև մուշտակի բացահայտ հափշտակության մասին Կ.Մարությանը տեղյակ չի եղել՝ իրականությանը չի համապատասխանում, արժանահավատ չէ, առավել խիստ քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակ է հետապնդում և հերքվում է վերոհիշյալ ապացույցներով»³:

11. Վերաքննիչ դատարանը, Ա.Սեդոյանին և Կ.Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելով, արձանագրել է. «(...) [Դ]ատարանության ընթացքում հետազոտված և գնահատված ապացույցների համակցությունը բավարար չէ ամբաստանյալների անմեղության կանխավարկածը հաղթահարելու համար, իսկ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

Վերաքննիչ դատարանն անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին, նախ և առաջ արձանագրում է հետևյալը.

- Հաստատված մեղադրական եզրակացությունը չի պարունակում որևէ նշում այն մասին, թե 2020 թվականի նոյեմբերի 10-ի որ ժամին են ամբաստանյալներ Ա.Սեդոյանը և Կ.Մարությանը գնացել ՀՀ Կառավարության թիվ մեկ շենքի մուտք, միացել այնտեղ գտնվող ամբոխին, ինչպես նաև թե որ ժամին է այդ ամբոխն ապօրինի մուտք գործել ՀՀ Կառավարության վարչական շենք:

- Ամբաստանյալ Կ.Մարությանի ցուցմունքի համաձայն՝ վերջինս 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 03:30-ից 04:00-ի սահմաններում հորեղբոր որդու՝ Ա.Սեդոյանի հետ գնացել է ՀՀ Կառավարության շենք և տեսել, որ շենքի մուտքի դռները բաց վիճակում են և կոտրված:

- Տեսագրության լրացուցիչ զննում կատարելու մասին 2021 թվականի ապրիլի 1-ի և զննում կատարելու մասին 2021 թվականի մայիսի 11-ի արձանագրությունների համաձայն՝ ՀՀ Կառավարության թիվ 1 շենքի 2-րդ հարկի միջանցքում, թիվ 218, 219, 221 և այլ աշխատասենյակների մուտքերի հարակից հատվածներում տեղակայված տեսախցիկների տեսագրություններում երևում է, թե ինչպես են 2020 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը 04:00:31-ին Ա.Սեդոյանը և Կ.Մարությանը մուտք գործում ՀՀ Կառավարության թիվ 1 շենքի 2-րդ հարկում գտնվող, պուժող Ա.Ս.-ի թիվ 218 աշխատասենյակ, իսկ ժամը 04:00:57-ին նրանք երկուսով միասին դուրս գալիս այդ աշխատասենյակից: Ժամը 04:02:10-ին վերջիններս դուրս են գալիս նշված աշխատասենյակից և մի խումբ անձանց հետ մուտենում են թիվ 221 աշխատասենյակի դռանը, ոտքերով հարվածում և վնասելով բացում այդ աշխատասենյակի դուռը: Դատարանությամբ հիմնավորվել է, որ ամբաստանյալները ոտքերով հարվածել են բացառապես աշխատասենյակների դռներին, մուտք գործել սենյակներ, այդ սենյակներից մեկից հափշտակել պուժողի անթև մուշտակը: Նշված հանգամանքը ողջամտորեն վկայում է այն մասին, որ դռներին հարվածելը հետապնդել է դրանք բացելու, այնտեղ գտնվող իրերին հասանելիություն ձեռք բերելու, որոշ իրեր հափշտակելու նպատակ, հարկապես երբ հիմնավորվել է ամբաստանյալների կողմից կանացի անթև մուշտակը հափշտակելու փաստը,

³ Տես քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 49-69:

ամբաստանյալ Կ.Մարությանի կողմից նախկինում հափշտակության համար դատապարտվելու և դրա համար չմարված դատապարտության առկայությունը: Աշխատասենյակների ներսում, կառավարական տան միջանցքներում կամ որևէ այլ վայրում ամբաստանյալների կողմից բռնություն գործադրելու, ջարդ կամ հրկիզում իրականացնելու, գույք ոչնչացնելու կամ վնասելու, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելու կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելու վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել և դատաքնությանը չեն հետազոտվել:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ Առաջին աստիճանի դատարանում հետազոտված ապացույցների ամբողջությամբ առհասարակ չի հաստատվել ամբաստանյալներ Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի մասնակցությունը 2020 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 02:00-02:30-ի սահմաններում սկսված զանգվածային անկարգություններին, այդ թվում՝ չի հաստատվել վերջիններիս՝ ամբոխի հետ միասին ՀՀ Կառավարության վարչական շենք մուտք գործելու պահը, շարժառիթը և այնպեղ գտնվելու տևողությունը: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալների՝ կառավարության մասնաշենք մուտք գործելու ժամի և հանգամանքների պարզումն ունի վճռորոշ նշանակություն բուն զանգվածային անկարգություններ իրականացնող ամբոխի մեջ վերջիններիս գտնվելու և արարքի կատարման օբյեկտիվ կողմին նրանց մասնակցությունը հիմնավորելու տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանի համոզմամբ, հետազոտված ապացույցների ամբողջությունը, այդ թվում՝ տեսագրությունների զննության արձանագրությունները, վկայում են այն մասին, որ ամբաստանյալներ Ա.Սեդոյանը և Կ.Մարությանը կառավարության մասնաշենքում գտնվել են այն ժամանակ, երբ զանգվածային անկարգություններն ըստ էության արդեն իսկ ավարտվել էին: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ տեսագրությունների զննության արձանագրություններով հաստատված տվյալները վկայում են այն մասին, որ ամբաստանյալները կառավարության մասնաշենքում գտնվել են ժամը 04:00-ի սահմաններում՝ այն ժամանակ, երբ ամբոխն այլևս շենքի ներսում չէր (տեսագրությունների զննության արձանագրությունների համաձայն՝ դեպքի վայրում գտնվել են համեմատաբար նվազ թվով անձինք՝ առանձին փոքր խմբերով), իսկ անկարգությունները, առնվազն կառավարության նշված մասնաշենքում, դադարել էին:

Անդրադառնալով մեղադրական եզրակացության մեջ առկա այն պնդմանը, որ ամբաստանյալները «ոտքերով հարվածներ են հասցրել ՀՀ փոխվարչապետի խորհրդականին հափկացված թիվ 221 աշխատասենյակի դռանը, կոտրել այն և մյուսների հետ մտնել ներս՝ այդ և այլ գործողություններով ակտիվորեն մասնակցելով կառավարության շենքում կատարվող զանգվածային անկարգություններին, ինչի արդյունքում ջարդվել են ՀՀ վարչապետի, կառավարության անդամների և աշխատակազմի մի շարք աշխատասենյակների դռները, առանձնապես խոշոր չափերով վնասվել կամ ոչնչացվել է ՀՀ գործադիր իշխանության բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ պետական և մասնավոր գույքը, խաթարվել է ՀՀ Կառավարության գործունեությունը, վրանգվել է հասարակական անվտանգությունը», Վերաքննիչ դատարանը փաստում է, որ տվյալ գործողությունն ըստ էության հանդիսացել է ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված արարքի կատարման օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ մաս՝ աշխատասենյակ ապօրինաբար մուտք գործելու միջոց, (...): Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերագրված արարքի փաստական կողմի նկարագրում տեղ գրած «այլ գործողություններով» եզրույթի բովանդակությունն առհասարակ բացահայտված չէ, Վերաքննիչ դատարանի համար պարզ չէ, թե ամբաստանյալների կոնկրետ որ արարքներն

են վարույթն իրականացնող մարմնի կողմից գնահատվել որպես «այլ գործողություններ»:
Նման պարագայում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ երբ «մեղադրանք» եզրույթն
իր մեջ չի ներառում արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական
հանգամանքների հստակ նկարագիրը, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության
իրավունքը կոնկրետ և իրական չի հանդիսանում, իսկ վերացական ու պատրանքային
բնույթ կրող փաստական հիմքի քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքն
առարկայազուրկ է»⁴:

11.1. ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված
մեղադրանքներում Ա.Սեդոյանին և Կ.Մարությանին արդարացնելու, կողոպուտի համար
ներկայացված մեղադրանքները նույն օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 3-րդ
կետերով որակելու մասով վիճարկվող դատական ակտը Վերաքննիչ դատարանն անփոփոխ
է թողել հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Առաջին արյանի դատարանն (...) իրավաչափ
եզրահանգում է կատարել առ այն, որ ամբաստանյալներ Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի
արարքներում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես
նաև բացի տուժող Ա.Ս.-ին պատկանող՝ 17.000 ՀՀ դրամ արժողությամբ կանացի անթև
մուշտակից՝ մնացած գույքի հափշտակությունը կատարելու դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի
176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմերը: (...) Վերաքննիչ
դատարանի գնահատմամբ Առաջին արյանի դատարանում հետազոտված ապացույցների
համակցությունը՝ իրենդեն ապացույցների, ինչպես նաև տեսագրությունների զննության
արձանագրություններում դրանք հափշտակելու (իրենց մուտ վերցնելու և տեղափոխելու)
վերաբերյալ տվյալների բացակայությունը բացառում է ամբաստանյալներ Ա.Սեդոյանի և
Կ.Մարությանի կողմից նշված հանցանքները կատարելու ողջամիտ հավանականությունը:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ դատաքննության ընթացքում
հետազոտված և գնահատված ապացույցների համակցությունը բավարար չէ ամբաստանյալներ
Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու համար, իսկ
քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է
ապացուցված անմեղության:

Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Առաջին արյանի դատարանի
այն հետևությանը, որ առկա չէ որևէ ուղղակի ապացույց, որի հիման վրա հնարավոր կլիներ
գալ եզրահանգման՝ ամբաստանյալներից որևէ մեկի կողմից ՀՀ Կառավարության շենքի
թիվ 218, 219 և 402 աշխատասենյակներից որևէ այլ գույքի հափշտակություն կատարելու
վերաբերյալ՝ բացի տուժող Ա.Ս.-ին պատկանող՝ 17.000 ՀՀ դրամ արժողությամբ կանացի
անթև մուշտակից: Միևնույն ժամանակ ինչպես իրավացիորեն փաստել է Առաջին արյանի
դատարանը, ամբաստանյալներից յուրաքանչյուրի՝ ՀՀ Կառավարության շենքի վերոհիշյալ
սենյակներում գտնվելու, սենյակներում առկա պահարանների դռները բացելու, իրեն
ուսումնասիրելու, խմբավորելու հանգամանքը դեռևս բավարար չէ հիմնավորված համարելու
համար, որ Ա.Ս.-ին պատկանող, 90.000 ՀՀ դրամ արժողությամբ պիջակը, 425.000 ՀՀ
դրամ արժողությամբ «Էրեբունի 50», 50.000 ՀՀ դրամ արժողությամբ «Ազնավուր», 25.125
ՀՀ դրամ արժողությամբ «Դվին», 21.850 ՀՀ դրամ արժողությամբ «Նաիրի» տեսակի
կոնյակները, «ՀՀ վարչապետից» գրառմամբ՝ յուրաքանչյուրը 74.000 ՀՀ դրամ արժողությամբ
երեք հատ «AWI» ապրանքանիշի ժամացույցները, Ղազախստանի զինանշանով գրիչը,
ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված հինգ հատ «Հովհաննես Թումանյան»,

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 49-93:

յուրաքանչյուրը 232.000 ՀՀ դրամ արժողությամբ հինգ հազար «Գալուստ Գյուլբենկյան» անվանումով տարբեր հուշադրամները բացահայտ հափշտակվել են ամբաստանյալներ Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի կողմից, ինչը չի հերքվում նաև տեսագրությունների զննության արձանագրություններով: Ավելին, ՀՀ Կառավարության շենք բացի ամբաստանյալներից մուտք են գործել նաև այլ անձինք, այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները բավարար ապացուցողական զանգվածով չեն հերքել քննարկվող առարկաների և փաստաթղթերի հափշտակությունն այլ անձանց կողմից կատարվելու վարկածը, որի պայմաններում դրանց հափշտակությունն ամբաստանյալներին վերագրելը, առավել ևս նրանց մեղավորությունը փաստելը ոչ իրավաչափ է: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրվագին, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալների՝ ՀՀ վարչապետի արարողակարգի պատասխանատու Վ.Հ.-ին հափկացված թիվ 402 աշխատասենյակում գտնվելու հանգամանքը դեռևս բավարար չէ վերջիններիս կողմից նշված անձնագրի հափշտակությունը հիմնավորված համարելու համար»⁵:

11.2. Վերաքննիչ դատարանը Կ.Մարությանին կատմամբ պատժինշանակելիս արձանագրել է. «(...) Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում որպես ամբաստանյալ Կ.Մարությանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք արձանագրել է վրանգավոր ռեցիդիվի առկայությունը: Նշվածի կապակցությամբ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով հանցանքը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելը հաշվի չի առնվում որպես ծանրացնող հանգամանք այն դեպքում, երբ անձի նկատմամբ պատիժ է նշանակվել հանցագործությունների ռեցիդիվի համար սահմանված կանոններով, որպիսի կարգավորումն ըստ էության հանդիսանում է ամբաստանյալ Կ.Մարությանի վիճակն այլ կերպ բարելավող նորմ, հետևաբար դրան պետք է տրվի հետադարձ ուժ: Որպես ամբաստանյալ Կ.Մարությանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում պատճառված վնասը բնեղենով հատուցելը»⁶:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»:

Վերոգրյալից հետևում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Հետևաբար, սույն բողոքի քննությունն իրականացնելիս, որպես Վճռաբեկ դատարանում բողոքի քննության ընթացակարգ, հիմք է ընդունվում 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանն Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի վերաբերյալ քրեական գործը քննության է առել, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը գնահատել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում, ուստի ստորադաս դատարանների հետևությունների իրավաչափության

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 49-93:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 49-93:

գնահատման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները:

13. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք Ա.Սեդոյանին ու Կ.Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. *Չանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը՝*

պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով, եթե այդ արարքները կատարելն ինքնին չի առաջացնում սույն օրենսգրքի այլ հոդվածներով ավելի խիստ պատասխանատվություն:

(...)

5. Սույն օրենսգրքում զանգվածային անկարգություններ են համարվում բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված մեկից ավելի անձանց գործողությունները, որոնց հետևանքով վրանգվում է հասարակական անվտանգությունը»:

15. Մեջբերված իրավանորմի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում զանգվածային անկարգությունների համար: Հոդվածի հինգերորդ մասում տրվում է զանգվածային անկարգությունների հասկացությունը, համաձայն որի՝ զանգվածային անկարգություններ են համարվում բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված մեկից ավելի անձանց գործողությունները, որոնց հետևանքով վտանգվում է հասարակական անվտանգությունը:

Չանգվածային անկարգությունների բովանդակության օրենսդրական բնորոշումից հետևում է, որ զանգվածային անկարգություններն առկա են միայն այն դեպքում, երբ ուղեկցվում են վերը թվարկված գործողություններից թեկուզ մեկի՝ մեկից ավելի անձանց կողմից կատարմամբ, որի հետևանքով վտանգվում է հասարակական անվտանգությունը: Այդ պատճառով, որպես զանգվածային անկարգություններ չեն կարող որակվել ամբոխի այնպիսի գործողությունները, որոնք թեև խախտում են հասարակական կարգը, սակայն չեն ուղեկցվում նշված արարք(ներ)ով: Ընդ որում՝ հանցագործությունն ավարտված է համարվում ամբոխի կողմից նշված արարք(ներ)ը կատարելու պահից, եթե դրա հետևանքով վտանգվում է հասարակական անվտանգությունը: Հարկ է նկատել, որ հոդվածի երկրորդ մասը պատասխանատվություն է սահմանում զանգվածային անկարգության մասնակցի կողմից վերը նշված գործողություն(ներ)ն *անմիջականորեն* կատարելու համար: Այն անձինք, ովքեր, թեև գտնվում են ամբոխի մեջ, բայց չեն մասնակցում վերը նշված արարք(ներ)ի կատարմանը, քննարկվող հոդվածով ենթական չեն քրեական պատասխանատվության: Հարկ է նաև նկատել, որ քննարկվող հանցագործության շարժառիթներն ու նպատակները հանցակազմի հատկանիշ չեն և կարող են ամենաբազմազան դրսևորումներ ունենալ:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Ա.Սեդոյանին ու Կ.Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ

մասով մեղադրանքներ են ներկայացվել 2020 թվականի նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում ջարդերով, գույքը ոչնչացնելով և վնասելով զուգորդված զանգվածային անկարգություններին մասնակցելու համար⁷:

- Դատաքննությամբ հետազոտված ապացույցների հիման վրա Առաջին ատյանի դատարանն ապացուցված է համարել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով վերագրված հանցանքները կատարելու մեջ Ա.Սեդոյանի ու Կ.Մարությանի մեղավորությունը⁸:

- Վերաքննության արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցների համակցությունը բավարար չէ ապացուցված համարելու մեղադրյալների կողմից այդ արարքները կատարելը: Մասնավորապես՝ չի հաստատվել 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը՝ 2:00-2:30-ի սահմաններում սկսված զանգվածային անկարգություններին մեղադրյալների մասնակցությունը, այդ թվում՝ նրանց՝ ամբոխի հետ Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենք մուտք գործելու պահը, շարժառիթը և այնտեղ գտնվելու տևողությունը:

Հղում կատարելով դատաքննությամբ հետազոտված ապացույցներին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ մեղադրյալներ Ա.Սեդոյանն ու Կ.Մարությանը Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում գտնվել են ժամը 4:00-ին՝ այն ժամանակ, երբ ամբոխն արդեն շենքի ներսում չէր, այսինքն՝ զանգվածային անկարգությունները նշված վայրում արդեն դադարել էին: Այս համատեքստում Վերաքննիչ դատարանը փաստարկել է, որ տեսագրության զննությունների արձանագրությունների համաձայն՝ դեպքի վայրում գտնվել են համեմատաբար նվազ թվով անձինք՝ առանձին փոքր խմբերով:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ամբաստանյալները ոտքերով հարվածել են բացառապես աշխատասենյակների դռներին, մուտք գործել սենյակներ, այդ սենյակներից մեկից հափշտակել տուժողի անթև մուշտակը, որպիսի հանգամանքը ողջամտորեն վկայում է այն մասին, որ դռներին հարվածելը հետապնդել է դրանք բացելու, այնտեղ գտնվող իրերին հասանելիություն ձեռք բերելու, որոշ իրեր հափշտակելու նպատակ: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ աշխատասենյակների ներսում, կառավարական տան միջանցքներում կամ որևէ այլ վայրում ամբաստանյալների կողմից բռնություն գործադրելու, ջարդ կամ հրկիզում իրականացնելու, գույք ոչնչացնելու կամ վնասելու, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելու կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելու վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել և դատաքննությամբ չեն հետազոտվել:

Վերոգրյալից գատ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների՝ փաստերի նկարագրում տեղ գտած՝ «այլ գործողություններով» եզրույթի բովանդակությունն առհասարակ բացահայտված չէ, և հնարավոր չէ պատկերացում կազմել, թե մեղադրյալների կոնկրետ իր արարքներն են վարույթն իրականացնող մարմնի կողմից գնահատվել որպես այլ գործողություններ, ինչը, դատարանի գնահատմամբ, չի ապահովում պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը⁹:

17. Սույն որոշման 15-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով նախորդ կետում վկայակոչված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

⁷ Տե՛ս սույն որոշման 9-րդ և 9.1-րդ կետերը:

⁸ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

հանցակազմի բացակայությունը, պատշաճ չի գնահատել զանգվածային անկարգություններին մեղադրյալների հնարավոր մասնակցության մասին վկայող՝ սույն վարույթում առկա փաստական տվյալների համակցությունը:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ հարկ է համարում փաստել, որ դատալսումների ընթացքում հետազոտված ապացույցներով Առաջին ատյանի դատարանը հաստատել է Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում **ջարդերով, գույք ոչնչացնելով և վնասելով** զուգորդված զանգվածային անկարգություններ տեղի ունենալը, ինչը Վերաքննիչ դատարանը կասկածի տակ չի դրել, ավելին՝ արձանագրել է զանգվածային անկարգությունների՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 2:00-2:30-ի սահմաններում սկսված լինելը:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենք ներխուժած անձանց գործողությունների արտաքին դրսևորմանը՝ հարկ է փաստել, որ վկաներ՝ ՀՀ պետական պահպանության ծառայության ծառայողներ Հ.Հ.-ի, Ս.Բ.-ի, Կ.Ս.-ի և վկաներ Ա.Գ.-ի ու Ա.Ա.-ի ցուցմունքների համաձայն՝ զանգվածային անկարգությունների մասնակիցները վնասել և ոչնչացրել են տարատեսակ գույք, այդ թվում՝ կահույք, հարվածել ու վնասել են աշխատասենյակների մուտքի դռները, մուտք են գործել տարբեր հարկերում գտնվող աշխատասենյակներ¹⁰: Զանգվածային անկարգությունները նման արարքներով ուղեկցված լինելը և այդպիսիք որպես ջարդեր, գույքի ոչնչացում ու վնասում դիտարկելը Վերաքննիչ դատարանը կրկին կասկածի տակ չի դրել:

Անդրադառնալով մեղադրյալներ Ա.Սեդոյանին ու Կ.Մարությանին մեղսագրվող՝ զանգվածային անկարգության օբյեկտիվ կողմը կազմող գործողություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը. տեսագրության զննություններով արձանագրված տվյալներից հետևում է, որ տեսագրությունը պատկերում է Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքի երկրորդ հարկի միջանցքը, որտեղ մեղադրյալներից բացի գտնվել են նաև քննությամբ չպարզված այլ անձինք: Միջանցքում գտնվելիս մեղադրյալների գործողությունների բնույթն ու հաջորդականությունը հանգում է նրան, որ վերջիններս նախ մոտենում են աշխատասենյակներին, արդեն իսկ բացված դռներից մուտք են գործում այնտեղ: Մասնավորապես, տուժող Ա.Ս.-ին հատկացված թիվ 218 աշխատասենյակից դուրս գալով՝ **մեղադրյալները մոտենում են տուժող Ա.Ս.-ին հարկացված թիվ 219 աշխատասենյակի մուտքի դռան մոտ կանգնած անձանց, ովքեր, մինչ այդ ուրքերով հարվածներ հասցնելով, բացել էին այդ աշխատասենյակի դուռը, ու հիշյալ անձանց հեղ մուտք են գործում նշված աշխատասենյակ:**

Այնուհետև, մեղադրյալները թիվ 219 աշխատասենյակից դուրս գալուց հետո ևս երկու անձանց հետ մոտենում են թիվ 221 աշխատասենյակին, Ա.Սեդոյանը փորձում է բացել աշխատասենյակի դուռը, սակայն չկարողանալով մեկ քայլ առաջ է գնում, և նրա հետևից գնացող երիտասարդը **սկսում է ուրքով հարվածել դռանը, ինչից հետո նրան է միանում Կ.Մարությանը և ուրքով մեկ անգամ հարվածում է աշխատասենյակի դռանը:** Այնուհետև մեկ այլ երիտասարդ մոտենում է Ա.Սեդոյանին ու գործով չպարզված անձին, և **նրանք երեքով շարունակում են ուրքերով հարվածներ հասցնել, ինչի արդյունքում դուռը վնասվում է, և վերջիններս մուտք են գործում աշխատասենյակ¹¹:**

18. Նախորդվետումվերլուծվածփաստականտվյալներիցարդենիսկբխումէ,որՎերաքննիչ

¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 49-69:

¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 50-63 և հատոր 3-րդ, թերթեր 229-243:

դատարանի այն եզրահանգումը, որ աշխատասենյակների ներսում, կառավարական տան միջանցքներում կամ որևէ այլ վայրում ամբաստանյալների կողմից բռնություն գործադրելու, ջարդ կամ հրկիզում իրականացնելու, գույք ոչնչացնելու կամ վնասելու, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելու կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելու վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել և դատաքննությամբ չեն հետազոտվել, հիմնավոր չէ, քանզի առնվազն ուրիշի գույքը վնասելու վերաբերյալ գործի նյութերում առկա են բավարար փաստական տվյալներ:

Հետևաբար, տեսագրության զննություններով արձանագրված մեղադրյալների գործողությունները համադրելով Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում զանգվածային անկարգությունների մասնակիցների գործողությունների վերաբերյալ նախորդիվ վկայակոչված փաստական տվյալների հետ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալներ Ա.Սեդոյանի ու Կ.Մարությանի գործողությունները **համընկնել են զանգվածային անկարգությունների մասնակիցների գործողություններին, դրանց մաս են կազմել և պայմանավորված են եղել ընդհանուր փրկող իրադրությամբ:**

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալներին մեղսագրված է ջարդերով, **գույք ոչնչացնելով և վնասելով** զուգորդված զանգվածային անկարգություններին մասնակցելը: Հաշվի առնելով «ջարդեր» ու «գույք ոչնչացնել կամ վնասել» արտահայտությունների լեզվաբացատրական նշանակությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ առկա դոկտրինալ մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ջարդերը ենթադրում են գույքի զանգվածային ոչնչացում և վնասում: Ինչ վերաբերում է գույքը ոչնչացնելուն կամ վնասելուն, ապա այն տարբերվում է ջարդերից իր ծավալներով. այստեղ նկատի են ունեցվում գույքի ոչնչացման կամ վնասման եզակի, ոչ զանգվածային դեպքերը: Այս վերլուծության ներքո գնահատելով տեսագրության զննություններով արձանագրված մեղադրյալների գործողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանցում արդեն իսկ պարունակվում են Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում մեղադրյալների կողմից առնվազն **գույք ոչնչացնելու և վնասելու** մասին վկայող տվյալներ:

18.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պնդմանը, թե Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում մեղադրյալները գտնվել են այն ժամանակ, երբ ամբոխն այլևս շենքում չէր, այսինքն՝ զանգվածային անկարգությունները դադարել էին, ապա հարկ է նկատել, որ վերոնշյալը հերքվում է ինչպես վերը մեջբերված և վերլուծված փաստական տվյալներով, այնպես էլ Վերաքննիչ դատարանի այն արձանագրումով, որ դեպքի վայրում գտնվել են համեմատաբար նվազ թվով անձինք՝ առանձին փոքր խմբերով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զանգվածային անկարգության մասնակիցների թվաքանակի նվազումն ինքնին չի ենթադրում, որ զանգվածային անկարգությունները դադարել էին՝ հատկապես, երբ առկա են թիվ 1 մասնաշենքում առանձին խմբերով մարդկանց առկայության և վերջիններիս կողմից գույքի վնասման վերաբերյալ փաստական տվյալներ, ուստի զանգվածային անկարգություններն ավարտված լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը չի բխում սույն վարույթի նյութերից: Ավելին՝ վկա, ՀՀ պետական պահպանության ծառայության ծառայող Կ.Ս.-ն իր ցուցմունքներով հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենք ներխուժած անձինք հեռացել են ժամը 8-ի սահմաններում¹², իսկ տեսագրության զննություններով արձանագրվել է

¹² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 167-175:

մեղադրյալների՝ ժամը 4-ի սահմաններում այդտեղ գտնվելու հանգամանքը:

18.2. Անդրադարձ կատարելով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, թե մեղադրյալների գործողությունները կազմել են նրանց վերագրված բացահայտ հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել մեղադրանքում արձանագրված իրադրությունը, հատկապես՝ **Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենք մուտք գործելը և մեղադրյալների գործողությունների՝ զանգվածային անկարգությունների մասնակիցների գործողությունների հետ նույնանալը և, ըստ էության, դրանց մաս կազմելը**: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ հափշտակություններ կատարելու համար դատվածության առկայությունը և նույնաբնույթ արարք ենթադրաբար կատարելը, **տվյալ իրադրությունում չի բացառում մեղադրյալների արարքներում զանգվածային անկարգություններին մասնակցելու հանցակազմի առկայությունը**:

Ինչ վերաբերում է մեղադրյալների՝ ամբոխի հետ Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենք մուտք գործելու պահը, շարժառիթը և այնտեղ գտնվելու տևողությունը պարզված չլինելու առումով Վերաքննիչ դատարանի մոտեցմանը, ապա հարկ է նկատել, որ հանցագործության շարժառիթը հանցակազմի պարտադիր հատկանիշ չէ, իսկ զանգվածային անկարգություններն առկա են դրա մասնակիցների կողմից հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողություններից որևէ մեկը կատարելու պահից, եթե դրա հետևանքով վտանգվում է հասարակական անվտանգությունը: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում մեղադրյալների արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի առկայությունը հավաստելու տեսանկյունից Վերաքննիչ դատարանի մատնանշված հանգամանքները որոշիչ նշանակություն չեն կարող ունենալ:

Վերագրյալի հետ մեկտեղ, իրավաչափ համարելով մեղադրանքների փաստական կողմում ձևակերպված՝ «այլ գործողություններով» արտահայտության առնչությամբ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքների ձևակերպումն առերևույթ ներառում է նշված քրեաիրավական նորմով նախատեսված՝ հանրորեն վտանգավոր և քրեորեն պատժելի արարքի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները:

19. Այսպիսով, հիմք ընդունելով նախորդ կետերում ներկայացված փաստական տվյալներն ու դրանց տրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանը պատշաճ չի գնահատել մեղադրյալների գործողությունների՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքում ջարդերով, գույք ոչնչացնելով և վնասելով զուգորդված զանգվածային անկարգությունների մասնակիցների ընդհանուր գործողությունների մասը ողջամտորեն կազմելու մասին վկայող հանգամանքները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Սեդոյանին ու Կ.Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

20. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք մեղադրյալներ Ա.Սեդոյանին և Կ.Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում

արդարացնելու, կողոպուտի համար առաջադրված մեղադրանքները նույն օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

21. Ապացույցների բավարարության հիմնահարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որ հավաքված ապացույցները որակական կողմից ապահովվեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը¹³,

- գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների այնպիսի համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքներն ու հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում¹⁴:

22. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարանները, Ա.Սեդոյանին և Կ.Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելով, կողոպուտի համար առաջադրված մեղադրանքները նույն օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որակելով, հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցներն ու առաջնորդվելով անմեղության կանխավարկածով և դրա բաղադրիչը հանդիսացող՝ չփարատված կասկածներն իրար հակադրող մեղադրյալի մեկնաբանելու պահանջի կենսագործման անհրաժեշտությամբ, հանգել են հիմնավոր հետևության առ այն, որ սույն գործով առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու դիվանագիտական անձնագիրը, ինչպես նաև՝ կանացի անթև մուշտակից բացի, մեղադրանքում նշված մնացյալ գույքը մեղադրյալներ Ա.Սեդոյանի ու Կ.Մարությանի կողմից հափշտակելը: Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանների հետևությանն առ այն, որ մեղադրյալների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենքի 219 և 402 աշխատասենյակներում գտնվելու, աշխատասենյակներում առկա պահարանի դռները բացելու, իրերն ուսումնասիրելու և խմբավորելու հանգամանքը դեռևս բավարար չէ Ա.Սեդոյանին ու Կ.Մարությանին մեղսագրված հանցավոր արարքների

¹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սիրակ Սաքանյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-րդ կետը:

¹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի* և *Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 33-րդ կետը:

փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանի համար ընդունելի է նաև Վերաքննիչ դատարանի փաստարկն առ այն, որ Հայաստանի Հանրապետության կառավարական տան թիվ 1 մասնաշենք բացի մեղադրյալներից մուտք են գործել նաև այլ անձինք, իսկ քրեական հետապնդման մարմինն ապացույցների բավարար համակցությամբ չի հերքել համապատասխան գույքի և անձնագրի հափշտակությունն այլ անձանց կողմից կատարելու կասկածը, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանն իրավաչափորեն գտել է, որ առկա է չփարատված կասկած, որը պետք է մեկնաբանել հոգուտ մեղադրյալների:

23. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Սեդոյանին ու Կ.Մարությանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու, կողոպուտի համար առաջադրված մեղադրանքները նույն օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որակելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են: Հիմքում ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն առարկայազուրկ է համարում ներկայացված քաղաքացիական հայցը մերժելու իրավաչափության առումով բողոքաբերի փաստարկին անդրադառնալը:

Անդրադարձ կատարելով բողոքի հեղինակի՝ սույն որոշման 5.1-րդ կետում նշված փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով մեղադրյալ Կ.Մարությանի պատժի անհատականացման գործընթացում հաշվի առնված հանգամանքները, գտնում է, որ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նշանակվել է համաչափ պատիժ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով սույն որոշման 17-19-րդ կետերում կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Սեդոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմնավորվածությունը քննարկելու իրավական հնարավորությունը բացակայում է:

22. Հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ճանաչելով և հռչակելով Ա.Սեդոյանի ու Կ.Մարությանի անմեղությունն այն փաստական հանգամանքներով, որոնք դրված էին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքների հիմքում, թույլ է տվել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ և 127-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են վարույթի ելքի վրա: Այսինքն, թույլ է տրվել 2022 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, նույն օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու ու վարույթը նույն դատարան՝ նոր քննության փոխանցելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում Ա.Սեդոյանի և Կ.Մարությանի մեղավորության հարցում պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից ու ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության



Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ ու 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Մեղադրյալներ Անրրի Մանուկի Սեդոյանի և Կարեն Արշակի Մարությանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը բեկանել ու վարույթը փոխանցել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ՎԴ/11705/05/21

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)**

2025 թվականի դեկտեմբերի 15-ին

գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.04.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Վոլոդյա Դավթյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ■■■¹ հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտ տրամադրելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Վոլոդյա Դավթյանը պահանջել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին տրամադրել ■■■² հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ե. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 28.12.2023 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.04.2025 թվականի որոշմամբ Վոլոդյա Դավթյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 28.12.2023 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ՝ Սևակ Բարսեղյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջները.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ հողային օրենսգրքի 58-րդ հոդվածի 4-րդ մասը,

¹ Հանդիսանում է անձնական տվյալ

² Հանդիսանում է անձնական տվյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 67-րդ, 124-րդ, 126-րդ, 144-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորը, առաջնորդվելով տնօրինչականության սկզբունքով, ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված գործողության կատարման հայց, և Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ որոշման պատճառաբանական մասում նշելով, որ տվյալ վեճը չի կարող լուծվել գործողության կատարման հայցի շրջանակներում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ պարագայում հայցվորի պահանջը վերաբերում է ոչ թե հողամասի տրամադրմանը, այլ՝ սեփականության իրավունքով հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունքի ճանաչմանը:

Ինչպես նաև Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցը բավարարվելու դեպքում հայցվորին կտրամադրվի ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք, քանի որ դատաքննության ընթացքում պարզ է դարձել, որ խնդրո առարկա գույքի նկատմամբ գրանցված է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ԻԱՄ-ի օգտագործման իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակի բավարարված մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 03.04.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.12.2023 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վոլոդյա Դավթյանի ներկայացուցիչ Հասմիկ Մարտիրոսյանի կողմից Երևանի քաղաքապետին ուղղված 23.03.2021 թվականի թիվ 4/ԵՔ-93-21 դիմումով խնդրվել է հարուցել վարչական վարույթ և Վոլոդյա Դավթյանին տրամադրել բարենպաստ վարչական ակտ՝ 1. ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Վոլոդյա Դավթյանին ■■■³ հողամասի օգտագործման իրավունքի ձեռք բերման վաղեմության իրավունքը տրամադրելու մասին որոշում: 2. ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան սեփականության իրավունքով ■■■⁴ հողամասը ձեռք բերելու Վոլոդյա Դավթյանին նախապատվության իրավունքը տրամադրելու մասին որոշում (**հատոր 1-ին, գ.թ. 14-19**):

2) Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված ծանուցմամբ Վոլոդյա Դավթյանը տեղեկացվել է, որ իր դիմումը ստացված է (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

3) Վոլոդյա Դավթյանի ներկայացուցիչ Հասմիկ Մարտիրոսյանի կողմից Երևանի քաղաքապետին ուղղված 12.10.2021 թվականի թիվ 5/ԵՔ-331-21 դիմումով խնդրվել է Վոլոդյա Դավթյանին տրամադրել օրենքի ուժով ընդունված համարվող բարենպաստ վարչական ակտը՝ ■■■⁵ մակերեսով հողամասը նախապատվության իրավունքով ձեռք բերելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 11-12**):

4) Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված ծանուցմամբ Վոլոդյա Դավթյանը տեղեկացվել է, որ իր դիմումը ստացված է (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

³ Հանդիսանում է անձնական տվյալ

⁴ Հանդիսանում է անձնական տվյալ

⁵ Հանդիսանում է անձնական տվյալ

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ հողային օրենսգրքի 58-րդ հոդվածի 4-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն գործով վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրումները.

- *հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապայմանության իրավունք տրամադրելու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու դեպքում արդյո՞ք հայցվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված օրենքի ուժով.*
- *արդյո՞ք անձը կարող է գործողության կատարման հայցարեսակի սահմաններում պահանջել տրամադրել համապատասխան փաստաթուղթն այն դեպքում, երբ հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապայմանության իրավունք տրամադրելու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չի ընդունվել:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքը և դրա արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները: Վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը կամ կանխարգելելու իրավունքների ենթադրյալ խախտումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական արդարադատության ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտ առաջնային նախապայմանն անձի և հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմինների միջև վեճի առկայությունն է: Յուրաքանչյուր վեճի առանցքում շահագրգիռ անձի այն կոնկրետ սուբյեկտիվ իրավունքն է, որը վերականգնելու կամ որի խախտումը կանխարգելելու նպատակով հայց է հարուցվել դատարանում: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 66-69-րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակների ճիշտ ընտրությունը կարևոր նախապայման է իրավունքի առավել արդյունավետ վերականգնումն ապահովելու համար: Ընդ որում, ճիշտ հայցատեսակի ընտրության գործընթացում ակտիվ դերակատարություն է վերապահված ՀՀ վարչական դատարանին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանված՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին համապատասխան ճիշտ հայցատեսակը մատնանշելու պարտականության կատարման միջոցով (տե՛ս, «ԴԻՈ» ՓԲԸ-ն ընդդեմ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, երրորդ անձինք՝ «Տիտան Օիլ» ՍՊԸ, «Սիվաս» ՍՊԸ թիվ ՎԴ/2102/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.09.2023 թվականի որոշումը):

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունվելու իրավասություն ունեցող վարչական մարմինը նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ է:

Նախկինում կայացված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմը համակարգային փոխկապակցության մեջ է գտնվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի հետ, որն ամրագրում է իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը: Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի նորմերն իրենց համակարգային փոխկապակցության մեջ կոչված են ապահովելու վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցող անձանց իրավունքների արդյունավետ իրավական պաշտպանությունն ընդդեմ վարչական մարմնի անգործության:

Այսպիսով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածն ամրագրել է վարչական մարմնի «պոզիտիվ լուծական» դոկտրինը, ըստ որի՝ այն դեպքում, երբ վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով և ժամկետում անձի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում, ապա հայցվող բարենպաստ վարչական ակտը *de jure* համարվում է ընդունված: Այլ կերպ՝ օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի դիրքորոշման բացակայության դեպքում կատարվում է ենթադրություն հայցվող վարչական ակտի ընդունման վերաբերյալ, այսինքն՝ գործում է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունված լինելու կանխավարկածը: Բացառություն է հանդիսանում այն դեպքը, երբ տվյալ վարչական ակտն առ ոչինչ է՝ Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի հիմքով, այն է՝ ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք (*տես, Հայկ Մաշուրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն թիվ ՎԴ/5430/05/18 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.12.2023 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված է վարչարարության ընթացքում իրավաբանական ֆիկցիայի կիրառման ինստիտուտը: Այս ինստիտուտի նպատակը վարչարարության արդյունավետության, վարչական մարմինների կողմից իրենց առնչվող գործերի ողջամիտ ժամկետում քննության ապահովումն է: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ իրավաբանական ֆիկցիայի նշված կարգավորումը համընդհանուր բնույթ չունի և կարող է սահմանափակվել ոլորտային հատուկ օրենքներով:

Այսպես. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ, անդրադառնալով առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկություններին, նշել է, որ վարչարարության հիմունքների, վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և անձանց միջև ծագած հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է նաև, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով: Այլ խոսքով, օրենսդիրը չի բացառում վարչական վարույթների առանձին տեսակների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ այդ հարաբերությունները կարգավորված չլինեն հատուկ օրենքներով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ օրենսդիրը վարչական վարույթին վերաբերող հատուկ օրենքներում նախատեսել է հատուկ կարգավորումներ, ապա իրավասու վարչական մարմինները պարտավոր են կիրառել հատուկ օրենքը (տե՛ս, «Եվրոթերմ ՓԲԸ»-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/1567/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

ՀՀ հողային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝ հողային օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները, նույն օրենսգիրքը և դրան համապատասխան ընդունված հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության այլ օրենքները (...) նույն օրենսգրքով և հողային հարաբերությունները կարգավորող այլ օրենքներով նախատեսված դեպքերում և շրջանակներում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ընդունել հողային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր (...) նույն օրենսգրքով նախատեսված հողային հարաբերությունները կարգավորող օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին (...) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (...) հողերին վերաբերող մասով հողային հարաբերությունների նկատմամբ կիրառվում է նույն օրենսգրքի դրույթների հաշվառմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ (...) բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ (...) հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ի թիվս այլնի, հողամասերի սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով տրամադրման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը սահմանող և առաջնային կիրառման ենթակա հատուկ օրենք է համարվում ՀՀ հողային օրենսգիրքը, որի 58-րդ հոդվածի 4-րդ

մասով օրենսդիրը հստակ սահմանել է, որ հողամաս տրամադրելու դիմումի քննարկման համար սահմանված ժամկետի խախտումը համարվում է դիմումի մերժում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նշված իրավանորմն ուղղակիորեն վերաբերում է այն վարչարարությանը, որի առարկան հողամասը տրամադրելու պահանջն է:

Հետևաբար, թեև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը կարող է կիրառվել վարչարարության տարբեր ոլորտներում, այնուամենայնիվ՝ հողային իրավահարաբերությունների դեպքում կիրառելի է ՀՀ հողային օրենսգրքի հատուկ նորմը, որը հողամաս տրամադրելու դիմումի քննարկման համար սահմանված ժամկետի խախտման պարագայում նախատեսում է այլ հետևանք, քան որոշակի պահանջների բավարարված լինելու դեպքում դիմումի ինքնըստինքյան (օրենքի ուժով) բավարարված լինելն է:

Ինչ վերաբերում է ՀՀ հողային օրենսգրքի իմաստով «հողամասի տրամադրում» հասկացության բովանդակությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով:

ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը կամ, եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար և, եթե հողամասերը համապատասխանում են նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունքի հասկացության բովանդակությանը, արձանագրել է, որ նախապատվությունը հավասար պայմաններում այլ անձանց համեմատությամբ տվյալ անձին վերապահված որոշակի արտոնությունն է՝ գերադասելիության իմաստով: Այսինքն, որոշակի կարգով հաստատված նախապատվության իրավունքն ընդամենը կոչված է ապահովելու գույքը ձեռք բերելու տվյալ անձի առաջնահերթությունը՝ մյուս հավանական ձեռքբերողների նկատմամբ:

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը կարևոր է համարել նշել, որ գնման նախապատվության իրավունքի կենսագործումը երկկողմանի կամային գործընթաց է: Այսպես. գնման նախապատվության իրավունքն այն ձեռք բերած անձին չի պարտավորեցնում անվերապահորեն գնել տվյալ գույքը, այլ տալիս է գույքի օտարման դեպքում այն ձեռք բերելու առաջնահերթություն և զուգահեռաբար գույքի սեփականատիրոջը չի պարտավորեցնում օտարելու այդ գույքը, այլ միայն այդ գույքն օտարելու կամքի արտահայտման դեպքում պարտադիր հաշվի առնել առկա առաջնահերթությունը: Օտարման գործընթացը նախ պահանջում է համապատասխան սուբյեկտի կամքի առկայություն: Պետական կամ համայնքային հողամասի գնման նախապատվության իրավունքը չի հանդիսանում անմիջականորեն գործող իրավունք, այլ այն կիրառելի է համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից պետական կամ համայնքային հողամասն առհասարակ օտարելու մտադրության ի հայտ գալու փաստի ուժով, հետևաբար քանի դեռ պետական կամ համայնքային հողամասի գնման նախապատվության իրավունքը չի

հանդիսանում անմիջականորեն գործող իրավունք, այլ այն կիրառելի է համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից պետական կամ համայնքային հողամասն առհասարակ օտարելու մտադրության ի հայտ գալու փաստի ուժով (տե՛ս, *Շուշանիկ Գեղամյանն ընդդեմ Երևան համայնքի թիվ ՎԴ/4965/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.10.2025 թվականի որոշումը*):

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետության և համայնքների սեփականության հողամասերի տրամադրման ձևերից մեկը դրա սեփականության իրավունքով տրամադրումն է: Այնուամենայնիվ, հողային հարաբերություններն առանձնանում են պետական վերահսկողության բարձր աստիճանով և իրավական կարգավորման հատուկ մեխանիզմներով: Հողը՝ որպես հանրային սեփականություն և սահմանափակ բնական ռեսուրս, ենթակա է տրամադրման միայն հստակ օրինական ընթացակարգի պահպանմամբ: Այդ պատճառով էլ օրենսդիրը հողամասի տրամադրման ոլորտում բացառել է այնպիսի իրավական հետևանքների առաջացումը, որոնք կարող էին ձևավորվել վարչական անգործության հիմքով՝ նախատեսելով կարգավորում առ այն, որ հողամասի տրամադրման վերաբերյալ դիմումը տվյալ դիմումի քննարկման համար նախատեսված ժամկետի լրանալու պարագայում համարվում է մերժված համապատասխան վարչական մարմնի անգործության, այն է՝ տվյալ դիմումի վերաբերյալ վարույթը սահմանափակող ակտ չկայացնելու դեպքում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այն անձինք, ովքեր ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ և բացահայտ ձևով օգտվել են պետական կամ համայնքային հողերից, օրենքով նախատեսված արգելքների բացակայության պայմաններում ունեն այդ հողամասերը սեփականության իրավունքի ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք: Սակայն այս իրավունքը, իր բնույթով, դեռևս չի նշանակում հողամասի տրամադրում, քանի որ այն դիմողի համար ստեղծում է առաջնահերթության իրավունք համապատասխան հողամասի օտարման դեպքում այն ուղղակի վաճառքով գնելու համար:

Ելնելով վերոգրյալից, Վճռաբեկ դատարանն ամրագրում է, որ հողային իրավահարաբերություններում, ի թիվս այլնի, առկա են երկու առանձին տեսակի վարչական վարույթներ, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես առարկայով և դիմող անձի ակնկալիքով, այնպես էլ օրենքով դրանց համար նախատեսված հետևանքներով: Այնուամենայնիվ, նշված վարչարարություններից յուրաքանչյուրի դեպքում վարչական վարույթի հարուցման հիմքն անձի դիմումն է, ուստի և կապված դիմումով ներկայացված պահանջից՝ վարչական վարույթը կարող է եզրափակվել օրենքով նախատեսված տարբեր եղանակներով: Մասնավորապես, եթե անձի դիմումը վերաբերում է հողամասը տրամադրելուն, ապա այդ հիմքով հարուցվում է վարույթ, որի քննության առարկան է հանդիսանում պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով տրամադրելը: Նման վարչարարությունը չի կարող եզրափակվել այլ կերպ, քան դիմումի բավարարումն է կամ մերժումը, ընդ որում մերժման եղանակը կարող է լինել ինչպես վարչական մարմնի կողմից միջամտող վարչական ակտի ընդունումը, այնպես էլ վարչական մարմնի անգործությունը, որի դեպքում դիմումը համարվում է օրենքի ուժով մերժված՝ հողամաս տրամադրելու դիմումի քննարկման համար սահմանված ժամկետը լրանալու պահից: Միաժամանակ, եթե անձի դիմումը վերաբերում է ոչ թե պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով տրամադրելուն (այդ իրավունքների փոխանցմանը), այլ հողամասին առնչվող

այլ իրավունք (ներառյալ՝ ձեռքբերման նախապատվության իրավունքը) ճանաչելուն, ապա այդ դեպքում վարչական վարույթի նկատմամբ ՀՀ հողային օրենսգրքի 58-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հատուկ կարգավորումը կիրառելի չէ, և վարչական վարույթը կարող է եզրափակվել ընդհանուր կարգով՝ ինչպես միջամտող, զուգորդող կամ բարենպաստ վարչական ակտի ընդունմամբ, այնպես էլ վարչական մարմնի անգործության դեպքում՝ իրավաբանական ֆիկցիայի կիրառմամբ:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն ամրագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ **հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու դեպքում հայցվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված օրենքի ուժով, եթե բավարարված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված պահանջները:** Հետևաբար, անձը կարող է գործողության կատարման հայցատեսակի սահմաններում պահանջել տրամադրել համապատասխան փաստաթուղթն այն դեպքում, երբ հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու վերաբերյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չի ընդունվել և վարչական մարմինն անձին չի տրամադրել օրենքի ուժով ընդունված վարչական ակտի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Դիմելով դատարան՝ Վոլոդյա Դավթյանը պահանջել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին տրամադրել ■■■⁶ հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտ:

Դատարանը, հայցը մերժելով, արձանագրել է, որ «(...) *խնդրո առարկա անշարժ գույքի նկատմամբ գրանցված է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ԻԱՄ-ի օգտագործման իրավունքը: (...) Այնքանով, որքանով խնդրո առարկա անշարժ գույքի նկատմամբ գրանցված է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ԻԱՄ-ի օգտագործման իրավունքը, որպիսի վարչական ակտը չի վիճարկվել, օրենքով սահմանված կարգով անվավեր չի ճանաչվել, հայցվոր Վոլոդյա Յուրիկի Դավթյանի հայցած սեփականության իրավունքով հողամաս ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու վերաբերյալ վարչական ակտով վերջինիս կորամադրվի ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Նման պայմաններում դատարանը եզրահանգում է, որ առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով վարչական ակտը ընդունված համարվելու արգելք (...):»:*

Վերաքննիչ դատարանը, Վոլոդյա Դավթյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Դատարանի 28.12.2023 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել է ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության այն հիմնավորմամբ, որ «(...) *Վերաքննիչ դատարանի գնահատմամբ քննարկվող դեպքում վեճը չի կարող լուծվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության*

⁶ Հանդիսանում է անձնական տվյալ

կատարման հայցի շրջանակներում:

Մասնավորապես, Երևանի քաղաքապետին հասցեագրված դիմումով հայցվորը, փաստորեն, պահանջել է հատկորոշված հողամասի նկատմամբ իրեն տրամադրել օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք և միաժամանակ սեփականության իրավունքով նույն հողամասերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Սա նշանակում է, որ հայցվորը, ըստ էության, Երևանի քաղաքապետին հասցեագրված դիմումով ակնկալել է հողամասի տրամադրում, իսկ Օրենսգրքի 58-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հողամաս տրամադրելու դիմումի քննարկման համար սահմանված ժամկետի խախտումը համարվում է դիմումի մերժում: Ըստ այդմ, կարելի է պնդել, որ այն դեպքում, երբ հողամաս տրամադրելու վերաբերյալ անձի դիմումի կապակցությամբ սահմանված ժամկետում իրավագոր վարչական մարմինը չի արձագանքում (համապատասխանում է սույն դեպքին), ապա միևնույն է օբյեկտիվ իրականության մեջ այլևս ընդունված է համարվում այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը՝ անկախ այդ իրավական ակտի՝ որևէ կրիչով (թղթային, էլեկտրոնային) ամփոփված չլինելու իրողությունից, որպիսի իրողությունը բացառում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայցադատական միջոցով ներկայացված հայցի շրջանակներում ենթադրաբար խախտված իրավունքների դատական պաշտպանություն հայցելու իրավական հիմքը, այլ նման իրավիճակում կարող է ներկայացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայց, որի հիման վրա հարուցված գործի քննության շրջանակներում պարզման է ենթակա նաև ակնկալվող իրավունքի իրավաչափությունը:

(...) Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Վարչական դատարանը չի կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված պահանջներից բխեցված իր պարտականությունները, որպիսի իրողության հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի փաստարկներն ու պատճառաբանությունները Վարչական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի վճիռը բեկանելու բավարար հիմք են (...):»:

Վճռաբեկ դատարանը, վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Վոլոդյա Դավթյանն իր ներկայացուցչի միջոցով Երևանի քաղաքապետին 23.03.2021 թվականին դիմում է ներկայացրել՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ և իրեն տրամադրել բարենպաստ վարչական ակտ՝ 1. ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան իրեն **■ ■ ■**⁷ հողամասի **օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունքը տրամադրելու մասին որոշում**: 2. ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան սեփականության իրավունքով **■ ■ ■**⁸ հողամասը ձեռք բերելու իրեն **նախապատվության իրավունքը տրամադրելու մասին որոշում**:

Վոլոդյա Դավթյանն իր ներկայացուցչի միջոցով Երևանի քաղաքապետին 12.10.2021 թվականին դիմում է ներկայացրել՝ խնդրելով իրեն տրամադրել օրենքի ուժով ընդունված համարվող բարենպաստ վարչական ակտը՝ **■ ■ ■**⁹ հողամասը նախապատվության իրավունքով

⁷ Հանդիսանում է անձնական տվյալ

⁸ Հանդիսանում է անձնական տվյալ

⁹ Հանդիսանում է անձնական տվյալ



ծեռք բերելու վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում Վոլոդյա Դավթյանի և Երևանի քաղաքապետարանի միջև ծագել է վեճ օրենքի ուժով ընդունված համարվող ■■■¹⁰ մակերեսով **հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունքը ճանաչելու վերաբերյալ** վարչական ակտը տրամադրելու մասին: Այսինքն՝ տվյալ պարագայում Վոլոդյա Դավթյանի պահանջը վերաբերել է ոչ թե հողամասի տրամադրմանը, այլ հողամասը ձեռք բերելու իր նախապատվության իրավունքը ճանաչելուն, ապա՝ իրավաբանական ֆիկցիայի ուժով տվյալ վարչական ակտը ընդունված համարվելու արդյունքում այն տրամադրելուն:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել՝ նշելով, որ հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջը ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հողամասը տվյալ անձին տրամադրելու վերաբերյալ պահանջ է, որպիսի դեպքում տվյալ դիմումի վերաբերյալ օրենքով նախատեսված ժամկետում վարչական մարմնի կողմից վարույթը եզրափակող ակտ չկայացվելու դեպքում դիմումն օրենքի ուժով համարվում է մերժված, ըստ այդմ՝ սույն պարագայում Դատարանը, չիրացնելով Օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանված ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացնելու պարտականությունը, Վոլոդյա Դավթյանի պահանջը չէր կարող քննել գործողության կատարման հայցի շրջանակներում: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վոլոդյա Դավթյանի պահանջը կարող էր քննվել գործողության կատարման հայցի շրջանակներում, քանի որ ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի և 58-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումները սույն դեպքին վերաբերելի չեն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել Դատարանի կողմից Օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված պահանջներից բխեցված իր պարտականությունները չկատարելու վերաբերյալ և Դատարանի 28.12.2023 թվականի վճիռն այդ հիմքով բեկանելու և գործն ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու վերաբերյալ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

¹⁰ Հանդիսանում է անձնական տվյալ

Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 03.04.2025 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:



ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Աննա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Հայկ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Նանա ԴԱԼԼԱՔՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Մնացական ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի նախագահ
Սարգիս ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Արամայիս ԱՍԱՏՐՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Զարուհի ՄԿՐՏՉԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր
Լիլի ԴՐՄԵՅԱՆԻ ծննդյան 30-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում հոդվածները տպագրվում են վճարովի հիմունքներով: Տպագրության վճարը կազմում է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ: Բացառություն են կազմում ՀՀ դատավորների միության անդամ դատավորները (ինչպես նաև ՀՀ դատավորների միության անդամ նախկին դատավորները), ում համար հոդվածների տպագրությունն իրականացվում է անվճար հիմունքներով:

Թևապոր խոսքեր

«Արդարությունը մարդկային առաքինություններից
ամենաբարձրն է, քանի որ այն ծառայություն է ուրիշին»:
Արիստոտել

«Լավ է անարդարություն կրել, քան կատարել
արդարության դեմ գնալով»:
Սոկրատես

«Օրենքը ոչ թե պետք է պատժի, այլ ուղղի»:
Սենեկա

«Մարդը հաճախ դատում է ուրիշների գործերը, որպեսզի
մոռանա սեփական սխալները»:
Փրանսուա դը Լարոշֆուկո

«Իմ լավագույն դատավորն իմ խիղձն է. եթե այն ինչ
արդար է համարում, ուրիշների դատը քիչ բան է փոխում»:
Աբրահամ Լինքոլն

«Արդար դատավորն այն մարդն է, ով օրենքը դնում է
վերև, բայց մարդասիրությունը երբեք չի մոռանում»:
Ջոն Լոք

«Արդարությունը չի կարող գոյություն ունենալ առանց
կարեկցանքի»:
Ալբեր Բանյու

Ազատությունը պաշտպանվում է օրենքով,
բայց ապավինում է մարդու խղճին:
Դարեգին Նժդեհ

ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ
1997 ԹՎԱԿԱՆԻՑ



8 978954 656562

copy  print